

# Puapū

44  
1978



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



* * *	Պատասխանը
Յ. ՕՇԱԿԱՆ	Պատասխանը
Գ. ՊՐԼՏԵԱՆ	Վկայքեր
Վ. ԹԵՔԵԱՆ	Նշանագիր XIV
* * *	Նե՛վըրժներ . . .
Է. ԱԼԷՆ ՓՕ	Ազգուրը
Ը. ՔԵՊԱՊՆԵԱՆ	Հանապարհին վրայ
Պ. ՀԵՐԵԱՆ	Ականներ
»       »	Շարժումներ
Ա. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ	Օշական՝ իր մտերմութեան մէջ
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Սիլվիա Փլէթի համար
* * *	Զրոյցէն առաջ . . .
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Դէ՛մ առ դէ՛մ Տիրան Անէմեանի
Ն. ՊԷՇԻԿՓԱՇԼԵԱՆ	Վկայութիւն մը
* * *	«Մատեան»ի տարբերակն առկերը . . .

# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ՃԷ. ՅԱՐԻ. ԹԻՒ 11      ՆՈՅԵՄԲԵՐ      1975      ԳԷՅՐԱԻՐ

Յ. ՕՇԱԿԱՆ

### Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ը

Վերջերս, «Բազմի» խմբագրատան մէջ, Օշականի գտեր Անահիտին (Ոսկերիչեան) հետ տեղի ունեցած մտերիմ զրոյցի մը ընթացքին, զարմանքով իմացանք, որ հօրը անտիպներուն մէջ կը բացակայի «Պատասխանը» անուն թատերախաղը:

Վահան Թէքէեանի նուիրուած երեք հարիւր էջոց մենագրութեան կորուստէն ետք, կրտսէս մտահոգիչ երեւոյթի մը կը վերածուի Օշականի ձեռագիրներու պարսպան, թէեւ առաջինին չափ ծանրակշիւ չէ ստույգ մ «Պատասխան»ին բախար:

Այս թատերախաղին աւարտէն անմիջապէս ետք, 1947ի զարման, Օշական երեք օրինակով մեքենայրել տուաւ զայն ժառանգաւորաց վարժարանի աւարտական դասարանի իր ամերէն տիրացու Գէորգ Չինչինեանին, այժմ Չաւէն եպիսկոպոս, եւ առաջնորդ՝ Եղիպտոսի հայոց թեմի: Բնագիրը եւ մեքենայր մէկ օրինակը վար զրու, երկրորդ օրինակը տուաւ մեքենայրող ամին, իսկ երրորդը ներդադրող ուսանողի մը հետ զրկեց Հայաստան, Աւետիք Իտահակեանին յանձնելու պատէրով:

«Սովետական գրականութիւն» ամսագրին (1975) մէջ յայտնեալ Մտեհան Կուրտիկեանի «Մեծատաղանդ Օշականը» անուն յօդուածը կը ճշդէ մեքենայր երրորդ օրինակին հասցէն. «Սյժմ գտնուում է «Սովետական գրականութիւն» ամսագրի խմբագրութեան տրամադրութեան տակ»:

Օրինակներէն մէկուն Հայաստան գտնուելու փաստը ապահովութիւն մըն է անշուշտ եւ ապահովութիւն մը չէ նոյն առին: Որովհետեւ, առայժմ Հայաստանի հրատարակչատունները, բնագրային հարազատութեան ստուծով՝ որեւէ փաստագրութիւն չեն ներշնչեր: Երբեք կարելի չէ մտնուլ Կաստան Զարեանի «Նա»ուն երեւոնեան աներեւակայելի խորատկումը, ինչպէս նաև՝ Ծահուրի «Նախանջը» զրական նահանջի ենթարկած անողոք վերաբերումը: Օրինակները շատ են եւ հետեւողութիւնը պարզ, թէ՛ մարդիկ երբ ազգայր ու հոշակուած դորձերուն հանդէպ իսկ չեն վարանիր անխնայ ըլլալ, բնաւ կարելի չէ ձեռագիր դորձի մը ճակատագիրը ամբողջութեամբ փոսահիլ երկնց:

Հետեւադար, կո՛ւմ Օշականի հարազատները պէտք է շուտափոյթ գտնեն բնագիրին հետքը, եւ կամ՝ Չինչինեան եպիսկոպոս սրտի պարտը

պէտք է համարէ իր մօտ եղող օրինակին պատճէնը անյատպող յատկա-  
յրնել զբազէտին ժառանգորդներուն :

Այս է վործին հարապատութիւնը պահելու հնարաւոր միակ մի-  
ջոյր :

Օշական սովոր էր նոյն վործը զրեւ երեք-չորս անգամ : Աշխա-  
տանքի ու բծախնդրութեան նոյն եղանակով զբուեցաւ նաև «Պատաս-  
խանք» :

Հետագայ հատուածները, որոնք հեռուոր զաղափար մը կու տան  
վործին ընդհանուր միջնորտին մասին, կազմուած են առաջին կամ  
երկրորդ գրիչով զբուած նոյնանուն վործին հատուկոր ձևազիրնե-  
րէն, զորս Օշական կը յանձնէր մեզի, ի յուշ, անոնց վրայ վերէն վար  
գիծ մը բաշխէ կտր, նշան մը, սր կը հաստասէր, թէ անոնք օգտա-  
վործուած են այլուր, ուելի ըսյն ծուալի մը վրայ ու խորութեամբ :

ԱՐՄԱՆ. — Դրամը՝ ինչպէս երիտասարդութիւնը պիտի պաշտպանեն գիտ նը-  
ման վործի մը մէջ :

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Պարկեշտ մարդ մըն էք ու ձեզի հետ խօսողներէն որոշ ան-  
պարկեշտութիւն չէք հանդուրժեր եւ կամ պահանջեր անշուշտ :

ԱՐՄԱՆ. — Լաւ չէ՞, որ ձեզնք սա լրործուն գետինը, ուր ձեր քայլերը բնա-  
կան ձեւով մը պիտի գժուարանային ինծի հետ մնալու : Մի՛ հեռեցը-  
նէք, որ կ'ակնարկեմ սեռերու միջև. գոյ տարբերակ աստիճաններուն :  
Ոչ ալ քեզ կոչեմ վրդովեալ : Անհայտրդ մէկն եմ բանաստեղծութեան  
ու զուք ծանրօրէն բարձագրող՝ ծագիկներ քաղելու համար պարտեղ-  
ներէ գուրս : Հատարքբրական աղջիկ մըն էք, խորհրդային կարգերուն  
որոշ կնիքովր : Մեր վերլուծումները կը ձեզնք հանդարտ օրերու :

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Որոնք գալու չեն սակայն :

ԱՐՄԱՆ. — Յուսահատ, այսբան կանուխ :

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Կեանքը մեզի չի տար այդ միջոյր, ըսի ձեզի :

ԱՐՄԱՆ. — Բայց այդ կեանքը շինողը ուրիշները չեն : Մեզմէ վեր, մեր երկ-  
տասարդութենէն վեր — հոս ալ բառը բնախօսական է — պարտքեր  
կան զբուած ձեր ու իմ տղեւ : Ու մա'նաւանդ հանդիսաւոր շրջաններ  
ուելինք, սրոնց մէջ մենք կ'անցնինք մեզմէ անդին : Մեր ժողովուրդին  
ճակատագիրը սա օրերուն կը կտրէ նման շրջադիւծեր : Բոլոր սիրտերը  
սրեւելուած են դէպի Երեւան : Ներդաղթը լուծում մը չէ Սփիւռքին :

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Սկիզբ մը :

ԱՐՄԱՆ. — Կը մտածենք մէկ : Սեւեռեալ գաղափարներ ունիմ, որոնցմէ մէկը  
Գալիքն է, ո՛չ միայն մեր ժողովուրդին, այլև՝ ամբողջ մարդկու-  
թեան :

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Մեր խորհրդային գաղափարաբանութեան աղեցութիւնն է  
ստիկա, ամէն ագնուական միաքի վրայ : Մարտինը քեզի յարմար խօ-  
սակից մըն է այդ գեանին վրայ :

ԱՐՄԱՆ. — Մե՞ր դետինը :

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Ինքս ալ չեմ գիտեր յստակ : Ես կը կենամ ժողովուրդի շա-  
հին, բարիքին անցոյց պաշտին մէջ : Չունիմ աւելի մեծ հաճոյք, քան  
մանուկները սեանել, որոնք կեանքին վրայ իրենց զգայարանքները կը  
փորձեն : Իմ մանկութեանս անպատմելի գժոխքէն վերջ, սա պղտիկ-  
ներուն դժայլելի անուշութիւնը, սպրեւու մէջ իրենց անկուշտ պար-  
զութիւնը, մա'նաւանդ զրկանքի անհատորդ իրենց տարիքը գիտ կը խը-  
ռովեն, հարազատ մօր մը յուզումով : Դուք կը կենաք ուրիշ աշխարհի



մը կեզրանը, ձեր գործին իրբեւ կեզրանական ընկալուէ դործիքը: Ուրանի մը օրուան մէջ առի այդ տեղէն ալ սրտը զգայութիւններ: Վատարկիլը, զիզելը ձեզի համար ուրիշ երեսն են տարու, բաշխուելու: Ձեմ վսեմացներ ձեր գէմքը: Բայց զիտեմ, թէ ձեր հողին մօտիկ է մերիններուն հողին: Որքան պիտի ուզէի, որ այդ հողին լրիւ պատկերը ունենայ:

ԱՐՄԱՆ. — Աւելի պարզ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Ըլլալ ներկայ Արմանին եւ Մարտինին բոխումին:

ԱՐՄԱՆ. — Հին, սրտողին ընկերներ ենք ու իրարու համար երբեք անխոստ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Բայց կը նմանիք հակազիւր բեւեռներու:

ԱՐՄԱՆ. — Բեւեռներ, անպայման: Ե՞րբ կը հասնի:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Եթէ ստույգ է ժամը Ծառուբոյի հեռազրին, արդէն հոս է ան: Պիտի սիրէք զինքը ինձմէ աւելի:

ԱՐՄԱՆ. — Ձեզմէ՞ աւելի:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Ներողութիւն, Արման, մի փաթեթէք մատի իմ զգացումներս:

ԱՐՄԱՆ. — Որոնք այնքան անփոյթ կը բանան իրենց ձամբան, բառերու լարերինթոսին իսկ մէջէն:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Ընդունեցէք պարզութեամբ. առանց բնախօսութեան: Ի վերջոյ ձեր համբաւին — իրբեւ գաժան, շահապաշա, գրամատէր երիտասարդի — ու ձեր իրականութեան միջեւ անջրպետը անզրալար կը լեցուի ձեր արժանիքներով, չբտելու համար հողեկան դեղեցկութեամբ մը: Խորհրդային աղջիկը մի՞նակ մտածման ազատութիւն չունի: Անիկա ազատ է մտնաւանդ զգայու մէջ: Ահա թէ ինչու իր բառերուն համար չի առաջարկ: Մենք մեր ազրու՞մներուն համար չենք գիտեր կարմրիլ:

ԱՐՄԱՆ. — Մարտի՞նը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Ի՞նչ բսել կ'ուզէք:

ԱՐՄԱՆ. — Այս հարցերուն մէջ ունեցա՞ւ պատմութիւն, ձեր բառովը՝ տառապանք:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Մ'իս, ինչ աննման երիտասարդ մըն էր: Իր դիւանին առաջին օրը, անիկա առաւ թեւր Ծովիկին ու գնաց ամուսնանալու: Առանց ցաւի, առանց պատմութեան: Կրկնեմ. պիտի սիրէք զինքը ձեր հանդիպած բոլոր անձերէն աւելի: Միակտոր: Իրաւ: Մաքուր: Ձեզի պէս: Իր քիչ մասը՝ ըտեմ, թէ սիրան էր միայն (քեքեւ ժպիտով մը):

ԱՐՄԱՆ. — Ինչո՞ւ այլ թեթեւ ժպիտը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Լս՞ւրջ էք:

ԱՐՄԱՆ. — Աւելի քան:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Այն ստան թէ՛ դուք, թէ՛ ես չունինք իտեղիք ո՛չ քեզմէ, ո՛չ ինձմէ: Արման Աշոտը քանի ստորի է կը ճանչնամ իրմով, շատ հեռուներէն:

ԱՐՄԱՆ. — Ծանրակշիւ բաներ կ'ըսէք:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Իսկ իմ մէջ Մարտինին յօրինած մարդն էք:

ԱՐՄԱՆ. — Ասպե՞ս:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Մի դառնաք ես: Իմ ասպետը չուզեաւերու տորմիլով մը պիտի չդար Արարտատեան դաշտը: Ժամերով պատմած է ձեր Փարիզը:

ԱՐՄԱՆ. — Հիտաթափո՞ւմ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Կանուխ է: Տրամաթիք պահերու մէջ ասպետ էիք: Հողիի

պահերու մէջ՝ քաղցր: Ինծի հետ՝ խոսիլ: Այ ինչ կ'ուզէք, պարոն Արման: Փարիզի մէջ շինուած ասպետէ մը չէք կրնար զրահապառ առպետ մը դուրս գալ:

**ԱՐՄԱՆ.** — Եղակի դէմք էր Փարիզի Մարտինը, այնքան աշխարհներէ սուսնողութեան մէջ: Գիտութիւնը՝ իր կրօնքը: Կաղմակերպութիւնը՝ դերազանցը իր կիրքերէն: Ամիսներ կայ, որ կը մտածեմ իրեն, շարժումին սկիզբէն սուրին: Ամէնէն յարմար միտքն էր ներպայթը գեղեցկութեան, ազգային իրերահաշտութեան ու խորհրդային մեծ յողթանակի վերածելու: Ու ստեղծուածային:

**ԱՐՄԵՆՈՒՀԻ.** — Այսի՞նքն:

**ԱՐՄԱՆ.** — Ձեմ հասկցած, թէ ինչու մերժեց օտարներու իրեն ընծայուած այնքան բարձր, պատուարեր պաշտօնները: Նախաբարութեանց դասնեակներուն մէջ կանչուեցաւ վարիչ զիրքերու: Առանձին բնկերութիւններ, մա՛սնաւորարար հանքային շահագործումի քարտեր արժանացան նոյն մերժումին: Ու առտու մըն ալ եկու մեզի: Համբուրեց Տօրս ձեռքը, իր մնաց-բարտիր ըսելու: Անտկնկալն էր: Հօրս համար նիւթահան հարուած մը դրեթէ: Այնքան յոյսեր դրած էր կարողութեան, իր սպառաշ ձեռնարկներուն վրայ: Փաթթուեցանք իրարու: Իր մեկնումէն յետոյ հայրս զօվեց զինքը: Իր զօվեստը կ'երթար Մարտինին դիտութեան: Իր Երկրորդ բարձր ինծի: Քանի որ հետաքրքրութիւններս ըստուեցան վէպի իր նախասիրութիւնները: Կեանքը եւ Տօրս իմատութիւնը ազատ սպարէզներու միջակ ասպետէն երեւան բերին այսօրուան քեֆիսիէն Արմանը: Ահա՛ իմ պարսքս այդ հսկայ մարդուն, որ առանց ցոյցի, պարզ բանուարի մը պէս մեկնեցաւ Հայաստան:

**ԱՐՄԵՆՈՒՀԻ.** — Ու իր հայրենիքը զինքը վարձատրեց բիւրապատիկ:

**ԱՐՄԱՆ.** — Պիտի լսեմ իրմէ: Մինչ այդ, վարձատրութիւն է անշուշտ՝ իրեն գերազանցապէս յարմար սա դարձին մէջ իրեն երբեք մտածուած չըլլալը:

**ԱՐՄԵՆՈՒՀԻ.** — Կատարուած է անկրպարձր: Եթէ հաս չեղաւ մինչև ոյսօր, իր անհրժեշտութիւնն էր իր ձեռնարկներուն: Յետոյ վախցան իր շատ ուղիղ, խոտարահանջ նկարագրէն: Սփիւռքին համար աւելի օգտակար կը դասեն ձկուն տիպարները: Միւս կողմէն՝ Ծառուբովը, ինքզինք իր պաշտօնին առաջարկելու համար ունէր տաք արժանիքներ:

**ԱՐՄԱՆ.** — Սիրտով հարուստ մարդերը քիչ կու գան յարմար ձեռնարկներու, ուր այդ հարստութիւնը կրնար ստեղծել որոշ անհանդուարութիւն, դժուարութիւն նոյնիսկ: Երկու ամսուայ փորձառութեանս կշիտ: Առանց իր բարի սրտին ու ներպամիտ ոգիին անկարելի էին պարթեւները, թէեւ չեմ մեծցուցած պատահարը: Բարեբախտարար, հայրս հետու մընաց, այլապէս մեծ բարդութիւններ կրնային ծագել:

**ԱՐՄԵՆՈՒՀԻ.** — Այդքան խոտարահանջ:

**ԱՐՄԱՆ.** — Ծայրագոյն սաստկութեամբ կ'առէ զրէի աքլորները, գործիչները:

**ԱՐՄԵՆՈՒՀԻ.** — Բայց դուք չէք ժառանգած ատելութեան ոյդ տատիճունը: Թերեւս իմ ներկայութիւնն ալ կը գատարարէք: Ձէ՞ որ ըստ ձեր առածներուն կրնիրու խելքը սրտին մէջ կ'ըլլայ:

**ԱՐՄԱՆ.** — Թեթեւութեամբ մի վարուիք իրականութեան հետ: Ըսի, թէ չեմ մեծցուցած իրողութիւնը: Բայց կրնային շատ տրտմութիւններ ինայ-

իւր: Ահա Մարտինին դերը: Մինչեւ այսօր կրկին թիւով մարդ զրկած պիտի ըլլար:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Ամերիկացիներուն տրուած ձեր շողենաւերով:

ԱՐՄԱՆ. — Շատ զիւրաթեամբ այդ նաւերը կրնային արուել Երեւանին: Դեռ հեռագիրին պիտի պատասխան յղուի: Մարտինը ո՛չ միայն կը հաշուէ, այլեւ կը դործէ: Ալ ինչ կարիք սրտի մարդերու վստահիլ դործը, որ թեքնիք, հաշիւ, արտգութիւն, վճռականութիւն կը պահանջէ եւ ոչ թէ աստա-աստա սիրտ, բարութիւն, քաղցրութիւն:

էջ 53 - 58

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — ...Ու կ'ըսեմ ձեզի. — ձեր աշխարհին ալ նայնն է տենդը: Ձեր ալ տարնապները կը յիշեցնեն մերը: Ապրիլը՝ ձեր մօտ ալ ո՛չ ժամանց, ոչ ալ հեծեծանք: Ձեր անցեալին մէջ ալ կայ մթերքը շատ ծանր, ընդարձակ, ընդվզեցնող հարցերու, ինչպէս դանձր ձեռնող ընտրեալ մարդերու ուրիշ փառանդ մը: Ընկերվարութիւնը մենք չենք արհամարհեր: Ինծի ըսին, թէ խորապէս ատելով հանդերձ խմբապիւնները, ճառախօսները, դուք ձեր ընդարձակ հաստատութեան մէջ դրած էք աւելի արդարութիւն, աւելի մարդկութիւն, սրբան չէր կրքացած ընել ձեր հայրը, իր ամբարձուծի ճիղին յատկացուցած իր բոլոր սպասութիւնը, կարելի կորովը:

ԱՐՄԱՆ. — Ճիշդ չեն բառ ձեզի: Իմ հայրը հիմնադիրն է, պահապանը այս հսկայ կազմակերպութեան:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Կարծութիւնները դործը չեն դորախարներու:

ԱՐՄԱՆ. — Գործն են թերեւս նուաճող, զիջող, միշտ հեռուն տեսնող մարդոց:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Պիտի չշեղիք դէպի խնդրական ընդհանրութիւնները: Դուք ի՞նչ էք այս կազմակերպութեան ներկայ կերպարանքին մէջ:

ԱՐՄԱՆ. — Անոր արտաքին յարգարիչը միայն: Իբաւ է, թէ իմ մուտքէն սողին մեր հաստատութիւնը ստացաւ համաշխարհային մեծ ձեռնարկներու յատուկ նկարագիր, ասիական իր ծագումը մոռցնելու աստիճան նորոգուելով: Վերջան աստեղային անդամութիւնները աշխատաւորին հանդէպ, որուն անտեսական բարւոքումին տւելցուցին իմացական ալ զարգացումը: Մեր գործին մէջ բոլոր աշխատաւորներուն տրգաքը սւսած են երկրորդական կրթութիւն ու կը գործածուին դիրքերու մէջ, համաձայն իրենց արժանիքներուն: Ամէն դործ կը կատարուի մեքենական կանոնաւորութեամբ: Աշխարհներով իրարմէ հեռու քաղաքներու մէջ մեր շուկաները կը բացուին նոյն ժաման, փակուելու համար նոյն ժամուն: Ստեղծուած է կեդրոնացեալ շատ դորաւոր վարչութիւն, որ շատ մօտէն կապ կը պահէ համաշխարհիկ հրատարակներու հետ, սեփական ապրանքներու, հաշիւներու սլաքովը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Կր հաստատէք իմ բաժներս:

ԱՐՄԱՆ. — Կ'աճապարէք սակայն, երբ այս ամէնուն մէջ իմ հօրք բաժինը ընչ կը տեսնուի: Կեդրոնացման սա աշխատանքը կը կատարուի նախանիթի, մթերքի, նուաճուած վարկի եւ արդիւնքներու վրայ, ու



րոնք իմ հօր սեփական, անթափանց աշխարհը կը կազմեն. — անոր մասնագիտութիւնը: Առանց իրեն՝ ոչինչ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ — Կոմիտաի նաւթային իշխանները, խորհրդային կարգերէն ստաջ, էթէ երբեք չէք տասապիր սա մերձեցումէն:

ԱՐՄԱՆ. — Թերեւս կ'ակնարկէք այդ իշխաններուն անմշակ իմացականութեան: Չեմ հերքեր փաստը, թէևս չեմ արժեզրկեր փառքը այդ մարդոց: Ու չեմ տասապիր: Իմացականութիւնը միշտ չէ արժէք, ինչպէս գործնական խելքը՝ չէ կատարելութիւն: Իմացականութիւնը անբաւարար է ճիշդ դատելու համար իմ հօր շքեղ անձնաւարութիւնը: Պապեան հաստատեց հեքիաթը Կեսարիայէն բողոքի մեկնումին: Ու էթէ ստքերը բան կ'ըսեն էլքերը պատկերելու ատեն, բողոքին ալ կը ճշդէ որակը միտքին: Այդ մերկ միտքն է ահա, որուն առջեւ կը խոնարհին արեւմտեան եւ արեւելեան մեծ մշակոյթներուն անտեսական մեծադոյն կազմակերպութիւնները: Ամերիկացիներն ու անգլիացիները հաշտի կ'ստանեն ասիացիին անթափանց ուժը: Ուզած կէտին վրայ իր ճշունամով՝ բուրդն ու մանածը, երկաթն ու քարիւղը, կաշին եւ մետաքսը կ'ըլլան անդամալոյժ: Թերեւս դարձանաք, երբ ըսեմ ձեզի, որ Միջին Արեւելքի իւղերուն հեամաբուս միջնադարային հսկայ ընկերութիւնը գինքը կ'ուզեն անպայման ունենալ հիմնապիր անդամ, իր նայուածքին անկրկէպ թափանցումէն: Ունի մարգարէի համբաւ՝ թերազրելու տեղը, ուր տարիներ վերջը, վճռական անապատէն պիտի յտնէր ճարտարաբուստի արդիական ուստան մը: Քաղաքներ է ստեղծած:

ԱՐՄԵՆՈՒՀԻ — Ի՛րեւէք, թէ կը խօսիք տարօրինակ իրատեսիեամբ մը: Ու կը զոս՞ք, որ ձեր ընթացիկ ինքնադալուսթիւնը, ցեղային bonhomme կը գնէք աւելի ընդարձակ հպարտութեամբ մը: Ու կը խորհիմ, թէ հայրենիքը ինչեր պիտի թելադրէր հօր ու տղու ստեղծադործ կարողութիւններուն: Երազ մըն է անշուշտ: Բայց հոս դալէս սաղին քանի անգամ այցելած է ինձի:

(Հեռաձայն)

ԱՐՄԱՆ. — Այո... Այո... Օրիս՞րդը: Այո: (Արմեմուսիին): Ձեզ կը հարցնեն:

ԱՐՄԵՆՈՒՀԻ — Այո... Այո: Մարտի՞նը: ...Կի՞նն ալ հեար: ...Շատ ուրախ եմ: ...Չենց կը սպասեմ: (Արմեմուսիին) Նոր հիւր: Հասած են Մարտինը եւ կինը: Ուզողակի հոս:

ԱՐՄԱՆ. — Աւելի լաւ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Պարոն Աշոտ, ըրինք շեղումներ, թերեւս արտօնումէն աւելի: Հիմա կու գայ Հայաստանի հարազատ ներկայացուցիչը: Անոր հետ ձեր խօսակցութիւնը պիտի ուզէի, որ քալէր բոլորովին տարբեր ահօտով: Իբրև է, թէ մեր սա գլուխ դլխի երկար խօսակցութեան մէջ ես դրեթէ քանի մը բողոք միայն կին կզայ, ու դուք՝ երբեք երկամասարդ, բայց Մարտինը կու գայ Սփիւսքը մաքրելու: Ձեր սրտակիցն է: Անցեր է ձեր երկաստարգութեան բոլոր կերքերէն:

ԱՐՄԱՆ. — Ու խելօքեր:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Այդ բարը շատ քիչ անդամ կը գործածուի մեր մօտ: Երկաստարգի մը մեծադոյն դժբախտութիւնը պիտի կազմէր խելօքնալը: Մեր գիտական, իմացական սպառակոյար ութսունէն վեր է ու կը ստեղծէ երկաստարգական կորովով: Մարտինը չորս-հինգ տարիներու ընթացքին բանակի մը շտաբ գործ է դեկալորած: Ու լաւ է, որ իր բերնէն լսէք այս հերոսական աշխատանքին նկարագիրը: Որքան պիտի

ուզէի, որ զիս շարգիլէիք ձեր խօսակցութեան ունկնդիր ըլլալէ: Սոստում՝ որ շրթներս պիտի չշարժին:

ԱՐՄԱՆ.— Երկու հին ընկերներու խոստովանանքին երրորդ տկոնջ մը ինծի կու գոյ, որ անգապէյի է:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Ուրիշ երկուքներու համար թերեւս ճիշդ ըլլայ ձեր նկատարութիւնը: Ձեր խոստովանանքը սիրոյ պատմութիւններու չորջր պիտի չըլլար անշուշտ:

ԱՐՄԱՆ.— Ուրիշ՞ կ'արտօնուիք ալըպէս եզրակացներու:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Բայց ես մանկուհի մը չեմ: Կէս ժամ է կը խօսինք ու ձեր բտակրուն մէջ կաթիլ մը ջերմութիւն չէիք աւելի:

ԱՐՄԱՆ.— Որո՞ւ հասցէին:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Յաւանական հասցէին: Ու դուք գիտէք ատիկա: Կը նշանակէ, որ Փարսից ալ ձեր գիշերները, նոյնիսկ կիներու չըջանակին, եղած են այն հանգարտ խօսակցութիւնները, որոնք սեռէն դուրս այնքան կը շահագրգռեն ստեղծագործ խմայականութիւնները:

ԱՐՄԱՆ.— Աւելի լաւ պիտի չընէի՞ք արգեօք Մարտինին կինը դրողեցներով:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Մեր մօտ կիները երբեք հիւր չեն դգար իրենք զիրենք, որպէսզի հարց ծագի գիրենք դրողեցներու: Մովիկը Մարտինին ներշնչող ողին է, անոր բոլոր ծրարիքներուն հաղորդ:

ԱՐՄԱՆ.— Թերե՞իք դարգացո՞ւմ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Աւարտած է Մոսկուայի փոլիթեքնիքը: Մաթեմատիկոս: Ու Մարտինի կորովին մշտաթարմ, անպատ աղբիւրը:

ԱՐՄԱՆ.— Ձաւօ՞կ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Երկու պուպրիկ: Կուտեմ-կ'ուտեմ չեմ կշտոնար:

ԱՐՄԱՆ.— Այլքան աճապարա՞նք:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Խորհրդային կարգերու մէջ դուստիր հղարատութիւն, քաջութիւն, երջանկութիւն է մօր համար:

ԱՐՄԱՆ.— Քանի՞ տարեկան կին է:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Վար է քսոնըհինգէն:

ԱՐՄԱՆ.— Համալսարանական կըթուլթիւն: Գործ: Ամուսնութիւն: Երկու գաւակ: Իբու որ տարօրինակ կարգ մըն է ձերը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Չըսիք ձեր մտածումին մէկ մասը:

ԱՐՄԱՆ.— Գուշակեցիք արդէն:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Կը դըամ, որ զիս կը մեղադրէք, իմ յապագումէս:

ԱՐՄԱՆ.— Կը փնտեմ պատճառներ, որոնք արդարացնէին այս անխուժութիւնը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Բայց մեր երիտասարդական եռանդը ինքզինք սպառելու այնքան մարդեր ունի: Ու գործին կիրքը այնքան սուր է իմ մէջ, որ ատեն չեմ գտած մտածելու:

ԱՐՄԱՆ.— Մնողք չունի՞ք:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Ես պզտիկ տարուած եմ Հայաստան: Օ՛, ուրիշ պատմութիւն: Գոցենք: Որք եմ:

ԱՐՄԱՆ.— Լս'ու: Սիրտ չունի՞ք:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Հարցումը ինծի ուղղելէ առաջ՝ աւելի լաւ պիտի ընէք ձեզի ուղղելով:

ԱՐՄԱՆ.— Գե՛տ ինչն էք տեսած մեր հաստատութեան: Քիչ մը ծանօթութիւն անոր ընդարձակութենէն ձեզ պիտի համոզէր, որ խկապէս իմ սիրտը ստիպուած եմ եղեր անդիտանալու:

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Իմ ալ խնամքին վարչութիւնը Հայաստանի բոլոր մանկա-  
նոցներուն : Ծովիկին գաւակները իմն են :

ԱՐՄԱՆ.— Բայց ինչպէ՞ս կը զրկէ մայրը ինքզինը՝ իր գաւակներով կարելի  
զերպոյն կրճատելեն :

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Ձեր կարգերուն անասրերութիւնը չէ ծնունդին հանդէպ,  
որով մայրեր իրենց սոքերը ազատ ունենալու համար ստնտուի կամ  
զիւզացիներու կը յանձնեն իրենց գաւակները : Կաթը՝ պարտաւորելչ,  
ամէն մօր համար : Մնացածը՝ աւտնին խնամք : Ատոր համար Ծովիկին  
Թանկապին ժամանակը պիտի չզրհէինք : Իր ամուսնին կողքին կ'աշ-  
խատի անիկա, փոխանակ այդ ժամանակը տալու սղարիկին լաթերը  
լուարս, չորցնելու : Ասկէ դատ, մանկամաս բներու մէջ ազաքը կը  
մեծնան առողջապահական լաւագոյն պայմաններու մէջ : Պարիկներու  
մահացութիւնը՝ ձեր քաղաքակրթութեան ամէնէն մեծ սճիրը, զբե-  
թէ վերջ դատած է մեր մէջ : Մի մոռնաք, խորհրդային տնտեսք, տա-  
րեկան իր եօթը միլիոն մանուկներով, զինն է ահա մեր վարչութեան  
չանքերան : Արմենուհի Սեւանն ալ իրաւունք ունի սրտին քիչ կամ  
բնաւ չմտածելու, մանուսանց միջոցներուն :

ԱՐՄԱՆ.— Կեցցես, Օրիորդ Սեւան : Նոր էք, տարօրինակ ըսուելու չափ :

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Խնդրանք. շատ պիտի ուզէի, որ սա նորութիւնը արժեւո-  
րէիք իր իսկութեան մէջ : Փարիզի մէջ Վառուիլ մը, որամիտ հեղինա-  
կէ մը, սա նիւթէն պիտի ունենար յաջողութիւն :

ԱՐՄԱՆ.— Ձեմ մերժեր :

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Կուգեմ, որ պատկերին մէկ մասը կչաէք մեր կարգերով :  
Հոն, զխաէք, թէ ձեր տխրոսները, վարկը, գրամը ու զից չեն համե-  
մատիր ձեր ճշմարիտ զերին : Առէք Մարտինը : Մեղը համար մեզմէ  
գալիք օգուտին կշիւր :

ԱՐՄԱՆ.— Ձէ՞ք կարծեր, որ Արման Աշոտ միլիոնատէր երիտասարդը կըր-  
նայ շատ աւելի օգտակար ըլլալ այդ հայրենիքին, անկէ դուրս ալ մը-  
նալով :

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Օ՛, դուք հազիւ կը կասկածիք, թէ Մարտինը, Ծովիկը,  
Արմենուհին ինչ հոյակապ երազներ կը հիւսեն ձեր ետեւէն, ձեր ու-  
ժովը : Դուք, իրբեւ մարդ, ամէնէն առաջ : Յետոյ ձեր զօրութիւնը,  
նիւթեղէն ձեր այսօրը : Յետոյ ձեր ստեղծագործ միտքը : Ասոնք քով  
քովի՝ կը նշանակեն շատ արագ, շատ շքեղ Հայաստան մը :

ԱՐՄԱՆ.— Կը մտնէք Մարտինին կարուածը :

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Աւելի լու է լսէք, գանէք այդ ամէնը իր բերանէն : Ինծի  
ներելի սակայն նախալայելքը, այդ ամէնէն : Բիւրաւոր մարդեր, ձեր  
միջոցներով ազատուած սա քաւարանէն : Դարձած՝ իրենց դրախտը :  
Լծուած իրենց պապենական զերին : Կըմբունէ՞ք ահաւոր զեղեցիկու-  
թիւնը այս երազին :

ԱՐՄԱՆ.— Ծարուսակեցէք :

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Ու Արման Աշոտին կողքին Արմենուհի Սեւանը...

ԱՐՄԱՆ.— Կայսրն ու կայսրուհին :

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Երբեք : Ոչինչ քեզի եւ ինծի համար : Քու ամբողջ ուժը,  
խելքը հայրենիքին համար :

ԱՐՄԱՆ.— Ձեմ մերժեր ենթադրութիւնդ :

ԱՐՄԵՆՈՒՀԻ.— Խորհրդային կարգերէն ազջկան մը համար սա պարագան  
ուշինչ ունի արտաստուիր : Արդի մշակոյթին ամէնէն ծանր խորհրդա-

նիշէն — դրամէն — սրտհաւոր մը, ինչպէս է իրականին մէջ Արման Աշոտ երիտասարդ միլիոնատէրը: Ու քարտուղար ազջիկ մը, որ իբր երիտասարդութենէն, քիչ մըն ալ սիրտէն դուրս ոչինչ ունի:

ԱՐՄԱՆ. — Յետո՞յ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Չափազանց վիպական՝ այս երկու բեւեաները իրարու ընծայելու միամտութիւն մը:

ԱՐՄԱՆ. — Լեցուն են սակայն օրինակները այդ վիպայնութիւնը ամէն օր հերքող: Տեսանք, որ կայսրութիւններ, թագեր լքուեցան դերասանութիւններու համար: Ուրիշ խնդիր անշուշտ, թէ դահածառանդ Արման մը ի՞նչ պիտի արժէր իր ծիրանիէն դուրս:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Փափաքս է, որ սա վիճակին մէկ երեսը կշռելու չտի լմտտուն ըլլայիք մեր կարգերով: Գիտէք, թէ հոն ձեր տխուրաները, վարկը, դրամը չեն կրնար ձեզ պաշտպանել ու ձեր դերը դիւրացնել: Ասէք Մարտինը, որուն կշիռին մէջ այդ ամէնը ոչինչ: Մեզի համար մարդոցմէ մեզի դաշիք օգուան է, որ կ'արժէ:

ԱՐՄԱՆ. — Դուք պիտի չըլլայիք ատիկա ինծի ըսողը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Միշտ կը հասկնամ: Բայց սէրը ազահ է կ'ըսեն հին գիրքերը: Մենք կ'ըսենք սէրը անպութ է: Անիկա չի հանդուրժեր, որ կտարնեիրս սնուցանէք զինքը: Ան քեզ կ'ուզէ ամբողջ:

ԱՐՄԱՆ. — Հայրենիքին համար:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. — Ձեր դործը դեղեցկութիւն մըն է, յազթանակ մը: Բայց խորհած ունի՞ք, որ յիսուն տարի վերջը նիւ Եսրքի ձեր փաստաւոր ազգայնքը հիմնովին պիտի անպիտանայ ձեր տնունը: Ինչո՞ւ այնքան պարզ, իրաւ վճիռ մը չէ հասած ձեր խղճմանքի սեղանին: Դուք մտքէ իսկ չէք անցըներ, թէ Մարտին, Ծովիկ, Արմենուհի եւ ուրիշ համակիրներ ինչ երազներ կը շինեն ձեր ետեւէն, ձեր ուժերուն զէպի հայրենիք նոր ահօսումովր: Դո՞ւք՝ ամէնէն առաջ իբրեւ ստեղծագործ:

ԱՐՄԱՆ. — Խորհրդային ստեղծագործութիւնը անհասականէն չ'ախորժիր:

ՅԱԿՈՒՅ ԾՇԱԿԱՆ

(Մնացեալը յաջորդով)

Գ. Պ Ը Լ Տ Ե Ա Ն

**Վ Ա Յ Ր Ե Ր**

( < Ա Տ Ո Ւ Ա Ծ )

1

ցերեկը խեղձի հոսողութիւն մըն է եղելիններէն մինչեւ կանաչ աղի թրթռացումը խնկունքներուն

թելեր շշուկներ կ'երթան ծառերէն աւազներու բզկիւնին

յոպոսը կրկին կը սկսի նարնջագոյն լոռութիւն կը մտնէ արտը ծովուն եղաւ որոր

կը մտնես օդի բացուածքին մէջ կ'ըլլաս մորթապերծ կ'այրիս բայց վայրը կը մնայ անդին կրակէն

2

ծառերը հովու գիշերին մէջ երկարաձգուող խոնարհող ծովու փայլերուն վրայ բացուող հոգեգալուստ մեծատարած

եկող հեռաւոր երկրէն

եւ ոչ մէկ երկրէ

3

կղզին այստեղ կը թեքի

կ'երթայ դանդաղօրէն մինչեւ ծով մինչեւ մանկութիւն

եւ ընդերքը խօսքին

4

եղջերենին կը թրթռար լոռութեամբ ու խեղձով ստուերող խած փայլակումը ծովուն

ձիւղեր ոլորուած մրրկացեալ ձիւղեր

ուրկէ տարաքեր կը բացուէին գաւառներ հեռակոյ պատկերի  
 տերեւներէն առկալս կ'ու գայ սեւալոյս ու թանձր ու տախպ պտուղը հասուն  
 իբրեւ խոստում  
 իբրեւ անտում երկրի  
 եւ մանկութիւնը հոն կեցած միութեան մէջ ծառին  
 բայց  
 ցրուած

## 5

մեկնողներ երկնքին մէջ կը գծէին անյայտ ճամբաներ ու հողեր ու քաղաք-  
 ներ ոսկեհան  
 բլուրներ բլուրներու ետին ձուլուող բլուրներու  
 հոս եւ հոն  
 եւ անձկութիւնը հորիզոնին  
 մեկնողներ պատռեցին տարին քեզ իրենց հետ  
 եւ աջսորը եզաւ աշխարհ

## 6

ջուրերուն մէջ  
 բուստեր կղզիի շարժուն հետքեր կարմիր փխրումներ բխող հետքեր  
 վայրասփիռ  
 իբրեւ արինաժայթքում բազկերակէ

## 7

կը փնտռես յիշողութիւնը կղզիին  
 հոն ուր կայ միայն հարթ աղի բարձրաւանդակ իր ամլութեան մէջ ա-  
 ւարտած

Վ. Թ Ե Ք Ե Ա Ն

Ն Շ Ա Ն Ա Գ Ի Ր XIV

Փիկալը յոգևած, բայց դեռ քիչ մը ուժ պահպանող բեռերով գրկած է այս մոխրագույն շէնքերը, ուր ծուխը, մախը, անցնող մարդերու եւ չանցնող մայրերու նայումները փակած են ու պիտի չջնջուին: Մասներուն վրայ՝ սրմարաններ, կամֆին համաձայն կը խաղցնէ. քովը՝ շիկագույն պարասափերը գիշերները կը շնկշնկացնեն: Իր հմայքը եւ տիրապետութիւնը պահպանել ուզող վաստակաւոր պատու: Մոխրագոյն պատերէն ներս կը յայտնուին պլպլումները, ինչպէս մոխրի մէջ մեխ: Այս ժամուսն տատնակներով կիներ չկան մէջտեղերը: Քովի գառլվարի երկայնքին, իրարմէ տաս մեքք հեռաւորութեան վրայ շարուած են: Մինչեւ համբուն ծայրը չես հասնիր. բայր գոյներով կը խօսին, եւ կան անշուշտ կեղծ մագերը, կեղծ քարքիչները, կեղծ ժպիտները. անշուշտ որ կեղծ, այսօր տգեղ մարդոց, այսօր հարիւր մարդերու կայելի չէ ժպտիլ, անոնց ուզածը ժպտ ալ չէ արդէն, կարելի ալ չէ հարկաւ սնվիրչ սպառել ու չըստառիլ: Անշուշտ որ իրաւունքի մասին մտածող չկայ, բայց պէտք ունին այս խաբարալս կեանքը շարունակելու՝ իրենց անխարդախ արտայայտութիւններով. անոր համար՝ եթէ անտարբէր ես, ետեւէջ փափուկ լախտի պէս կը հասնի հարուածը՝ ազտու խոզ:

Անոր ալ ազտու խոզ պտուսցին: Դարգէս մըն էր. յոխորտանքով մը, որ Միջերկրականի տպամարդոց յատուկ է՝ կ'ըսէր. «Այս խանութները մէկ-մէկ մտեր են»: Այնքան լուսամիտ էր, որ չէր գիտեր, թէ կնոջական արժանապատուութիւն կոչուող բան մը կայ. չլսել ճեւացուցած՝ կը շարունակէ խօսակցութիւնս, երբ կրկին արտասանեց, կիւլիվերեան համբարդութենէ մը վերադարձած արկածախնդիրի պէս. «Այս խանութները մէկ-մէկ մրտե՛ր են»: *Խըլախ* բաները բրեր են, ըսի: Լոնց. բայց չդադրեցաւ աջ ու ձախ գողութի մայրամասներ արձակելէ: Քիչ հոտ, համբուն ծայրը մէկը պտուսց ետեւէն՝ ազտու խոզ: Բայց ըստ երեւոյթին, այնքան ալ ազտու խոզ չէր՝ . .

Հիմա՝ սրմարանին մէջ: Հայ գրող մըն է: Կէս ժամ առաջ ենթ ժամադրութենէն: Անգլիացի բանաստեղծին տունը երկու փողոց անցին է: Պէտք է քիչ մը սպասել հոս: Փոշի է, տեղական արտադրութիւն, գունաքափ նրստարաններ: Պողոսային երկու կողմը՝ *սէքս շոփեր*, շնչահատ: Կը դիտես նկարները, կը մտածես՝ կ'երեւի այս աշխարհի մէջ սէքսի ուրիշ մը կայ, որ դադար չունի: Մանկութենէս ծանօթ պարոններ կու գան աչքերուս առջեւ, անոնք, որ Փարիզէն կու գային յոփացած, սանկ տեսակ մը լեցուածութիւն, գոյտուտք հեշտանք մը կ'ըլլար իրենց աչքերուն ներմկուցին մէջ: Արգելափակ, բայց անուսանալի հոմանուհի մը յիշելու պէս կը խօսէին անոր մասին: Մատուցողը թէ կը բերէ. երկաթէ սեղանին վրայ փոշին երկու անգամ պիտի սրբուի: Փոշի վրայ կաթկրած անձրեւ: Հիմա արդէն արեւը

գրաւած է օղերեւուրտաբանութեան արձար եւ մինչեւ իրիկուան տասուկէսը կը մնայ սյաշտօնին վրայ: Թէյի գաւաթը ներմակ, հոտոտրեստ գաւաթ մըն է: Ղիւրթին չի կոտրիր, անոր համար ալ հարձեքած-մնացած է այդպէս: Մատուցողը հեռացած է, օգուտ չունի: Բուրգերու երկիրը երեք անգամ փոխել տուեր էի նախամաշի մը գաւաթը, եւ միակ տարբերութիւնը նեղէրու ձեւերն էին: Գիտես, թէ ուր եկեր ես, աղապրեր են, պիտի համակերպիս: Եղածը մանրէ մըն է, օրական հագարաւար մարդեր կը մահանան այլագան մանրէներու յարձակումներէ: Դո՛ւն ինչու բացառիկ ոնով մահ մը կ'ուզես ունենալ: Խոստուէ՛ հագարաւարներուն, որոնք արդէն մէկ, երկու, երեք, հինգ, քօթը, ուրբ, ինը, ութսունի՛նը անգամ մեռած կ'ըլլան, ամէն անգամ տարբեր խոովքով մը: Կը մեռնին եւ առաւել կը լարուին իրենց գգայարանները, դուն գիտե՞ս ինչ ըսել է մահուան խոովքին մէջ...

— Խեղճացնելիք էր, — կ'ըսէ, — սեւ նեղ հագուստ մը հագած էր, մինչեւ կուրծքին կէսը բաց. ներմակ ձուկի պէս մորթ մը ունէր, ողորկ, պիրկ. ընթրիքէն նոր ելած էինք, անկիւնը գոյգ մը մամեր, ամչկոտ աղջկայ աչքերու պէս՝ հագիւ հագ կրնային դիտել մեզ...

— Այս բոլորը ինչո՞ւ չես գրեր, — կ'ըսեմ, — ի՛նչ կ'ուզես տալ հայ ընթերցողներուդ՝ մեռած միւրեք-որսալով: Գրէ՛ ինչ որ ապրեր ես, մա՛նաւանդ՝ որ այս կենսաձեւի եւ փորձառութիւններու մասին գրութիւններ չունինք: Ինչ որ կը գրուի հայերէնով՝ ամչկոտ աղջկայ աչքերուն պէս իրենց ամբողջ «մեղք»ը իրենց խոչարմուղէն վար կը հրեն, եւ կ'ըսեն՝ խօսեցանք, վերջացաւ: Մեր գրական երկերը դասագիրքեր են, բարոյախօս: Շահնուրին գիրքը պոռնիկ մը ունէր, արգիլուած էր կարդալ դպրոցին մէջ:

— Ճիշդ ես, — կ'ըսէ, — մինչեւ 1915 մէկ կոյերակահուրթին ունէինք մեր գրականութեան մէջ, տասնըհինգէն ետք՝ ուրիշ...: Բայց հայերէնով չեմ կրնար ասոնք տալ, պարագաներս կ'ազդուին: Ես միմակս հոսանքին դէմ չեմ կրնար կենալ:

Խնդուես կու գայ, հոսանք՝ կը նշանակէ շարժում:

— Յետոյ սկսաւ կոմակները քակել, վերի մասէն սկսաւ: Տասնինը տարեկան էր դեռ: Իր բացարձակ գեղեցկութիւնը եւ իրերու հակասութիւնն էր գմայլելին այդ պահուն: Ամուսինը քիչ մը անդին նստած՝ կը ծխէր: Այլալամ էի, չէի գիտեր ինչպէս սկսիլ հակագրեցութեան...

Սպասէ՛, ըսի: Յստակօրէն այդ ազմուկէն անջատուած ուրիշ ձայն մը կար, ի՞նչ ուղի կորսնցուցած ձայն մը: Բովի շէնքին փակ փեղկերուն տեսէն էր, կանացի ուսու ուսաու ձայն մը, եւ հերսոտ ճիչ մը: Բայց պոռչըտուէ չէր, աւելի հաշտուած լաց մը, որ պէտք է գար թուլցած եւ անկարող մէկէ մը: Մոխրագոյնի մէջ սեւցած շէնքին առաջին յարկերէն այդ ճիչը տեղտեղ կը գարնուէր, վայրկեան մը կը գաղթէր, յետոյ աւելի ուժգին: Բուռն կ'իջնէր խարագանը, որովհետեւ ձայնը աւելի երկար եւ նուաղկոտ կ'ելլար:

Երբ-անք ոտնիկանին լուր տա՞ք, ըսի: Զ'ըլլար, ըսաւ, եւ կախեց գլուխը: Պէտք է ամապարել, պնդեցի, օգնութեան հասնող չկայ: Հոգ մի՛ ընէր, ըսաւ, հիմա կը վերջանայ:

Ելի՛նք, ըսի: Բասական տեղ լուռ քայլեցինք: Սէքս շփերը կը դիտէի: Եւ քանի որ ամէն բան յարաբերական է՝ գեղամարմին դեռուսիներ եւ դիւսպետներ կը տեսնէի, ամբողջ զանգուած մը պսպղուն ու կլանիչ սաղայելներու: Այդ ժամերուն դեռ պէտք կ'ունենան յանախորդի. ներմակ բանկուններով կայնած, կը ծանուցանէին ժանիքաւոր բերաններով, թէ ներսը կայ ան-



մտանալի համայնք եւ գգլիօն վտրմատութիւն: Աչհով-ունհով կը խօսէին լոյսերը. սէֆսի սիքս' մը կար, որ պէտք է շարունակուէր, գգայալիքի եւ ինչո՞ւ ոչ՝ գարշահոտ:

Ինչո՞ւ կը ծեծեն:

Սասիստ յաճախողներու համար մասնաւոր այտոյիսի կիներ կան, ըսաւ, օրէնհով արգիլուած է, բայց սասնի վարժուած կ'ըլլան:

Աւելի՞ր կը վնարախն:

Չուգեց պատասխանել: Մոնած էր դէմքը, կարծես թէ մտեր էր վաղ հակէ՛ մը ներս. աչքերը սուտած էր. խտացած խորութեան, մուրի մէջ կ'իջնային, կ'իջնէին դէպի... Նստանք համբարքի նստարաններէն մէկուն վրայ: ... Դէպի վիհ մը, որ կը կոչուի անցեալ, կը վերադառնար իր պատմութիւնը. կը մօտենար այն սիրուած աղջիկը, որ հետացած է իրմէ՝ ծնողքին ստիպումով եւ ամուսնացած: Ապա՝ ծայրագոյն յուսախարստեան մէջ ինքզինք յանձնած է պատահական սիրահարներու, վրնտուած է տունէն եւ անկանոն յաճախողներ ունեցած: Կամաց-կամաց ամէն բան դարձած է կանոնաւոր եւ պաշտօնական: Մայրը գլխուն գարկեր է եւ ընկերութեան չեզուն քայնի պէս քաւեր է իր անունին: Ձի պատմեր, կը վերապրի. «մեղրի պէս աչքեր ունէր», կ'ըսէ: Իր անձէն բաժին մը կայ այդ չհեռացող կնկան մէջ, որուն ինք չի գիտեր, թէ ինչ կը վիճակի: Եւ որպէսզի հաւաստիացնէ, թէ այս բոլորին մէջ կ'ապրի ինք՝ «Միջեւ հիմա շարաքը անգամ մը գինի երազիս մէջ կը տեսնեմ», կ'ըսէ: Կնոջ տառապանքը կարեւոր չէ տղամարդու մը համար. իր՝ գայն սիրելի է, այդ երկարատեւ համալարումը: Լսեր է, որ Լոնտոն է, տարին բանի մը անգամ կ'երթայ, չի գտներ: Ինք դարձեր է *փշէյպոյ*. գրաւիչ, կնամեծար, կեհասաւեր, հեշտակներով սմանող մարդ մը: Բազմազանները գորտոր հնչելով կ'ըսէ. «Ձինք մտնալ կ'ուզեմ եւ անդադար կը փնտռեմ: Հարիւր կիներու մէջէն հագիւ կրամ մը կրցեր եմ գտնել իրմէ: Գիտեմ, որ երեստ տեսնել պիտի չուզէ, բայց ես ամէն բան կը ներեմ իրեն»: Ջարմանալի, ձգեք է, որ առաջին կիներ երթայ տունէն, երթայ երկրորդը՝ գաւակները շալկած, եւ հիմա՝ ամէն բան կը ներեմ իրեն: Ձի գիտեր բաժը, պարզապէս չի գիտեր: Ներելը շատ հեռու է, ինք պէտք ունի անոր, իրմէ տուած այդ մասնակիլն պէտք ունի, այդ վազմի հրայրքին: Պարզապէս հոգեկան երջանկութիւն ըսուած բան մը կայ, կայ սէր, կայ երազանք: Եւ այս սխալ աշխարհի մէջ բոլոր սխալները արդարացնելու հենդեմէն ունի: Իր երազը չ'ուզեր, որ խափանուի: Շեղած լոյսի շեղքի պէս կը քափանցէ կեանքի բոլոր մուք անկիւնները եւ քիչ-քիչ կը նուազի: Մագերը սկսեր են ներմիլի: Կը գգայ, որ բան մը կայ, որ մարմնէն անդին է, չի մաշիք, չի յանձնուիր, չ'հնարակուիր, եւ կը շարժարէ՛: Անոր համար է, որ կարծես հանքէն դուրս ելած եւ ուժասպառ դէմքը գետին, մտասոյգ կ'ըսէ. «Ինծի համար կնոջ մը հոգին է կարեւորը: Մարմինը հարկատու է, հոգին՝ մեծատեր»:

Գիմադրոււմը իր երջանկագրկումին՝ եղած է երկար: Յոյսի բարակ նիւզ մը տատանելով յառաջացած է իր առջեւէն: Յոյսի շիւղը չկայ. արեւի խաղ էր: Աշխարհը շշմած է, ինք ուրիշ բան մը պիտի ընէ, բայց չի գիտեր ինչ, ուրիշ, ուրիշ բան մը... Փիկալի մէջ գտնուող բոլոր գիծերը — անփոնականը, ամերիկեանը, ֆրանսականը, սպանականը — իրար մէջէն կ'անցնէին եւ, հետեւաբար, մեր մէջէն, երկարահոսքի քրքոսացում արձակելով եւ ետ բերելով: Անգլիացի բանաստեղծ մը քառույցը հագին դուրս

կա գար շէնֆէ մը: Մանկարթոր ձեռքերը կոնֆերուն կանքած կը դիտէր սանգանքը ինքնամտաց Փիկալի: Վերը կանգնած էր Մաքէր Բէօրի գունգա-կատունը՝ չհեռացող կնոջ մը նակաէն իջած գիշերային արտասուք:

Պուլվարին վրայ ձգուարի պէս կախուած է սա վերնայարկը: Կարմիր գիւնիկն եւ կարմիր նաշակներու միջեւ թաթխուած նափանական նաշարան մը: Վարը, *պատ*ին անկիւնը մաշքի նմանող ծառ մը կայ, մանրակազմ: Կողակա-թի մը մէջ կը ցամառի հունար, անհրաժեշտ սննդանիւթերը կը տրուին եւ քա-նի որ սահմանները ճշգրտած են՝ կը մնայ գանահ, մանրանկար մը իր տե-սակին: Բայց ուսերը ննջուած մարդու կը նմանի. եւ այնքան պիտի է, այն-քան սպուշօրէն կանգնած, լայնօրէն գիտակից, որ ինքզինքէն դուրս չի կըր-նար ելլել: Ապակիին ետեւէն գմուսուած դիմակի մը կը նմանի, որ իր նա-կասագրով մտահոգ իսկ չէ: Ժամանակին մէջէն կ'անցնի չոր, առանց ինք-զինք հարցնելու գմուսուած գոյեղութեամբ մը:

C'est la comedie Armenienne !

Պիտի չլրջանայ, պիտի չլրջանայ ձեռն: *Ֆեմինիստ* կին գրողներու ա-մէնէն իզականն է: Գոնէ միակն է, որ տաքստ չէ հագած: Սեղանին վրայ ոտքերը կ'ուլտէ, կը նստի, կա՛մ ընկերուելի մը ուտէն կը կարդայ, կամ կրո-նակ դարձուցած կը կարդայ. շփացուած կատուի կը նմանի: Սրտիս վրայ նորեր: Բազմաուսակահուրթիւն փորձելով երբ կը սպասեմ 59րդ Փողոցի կա-յարանին մէջ, ամառնային տաք գիշեր մը: Հիմա ալ մսագործին սառնարա-նին մէջ գամուող սառած ուղեղի մը մասին կը խօսի: Իր լուրքիւնը սեղա-նին չորս անկիւններուն վրայէն բացակայ է: Կը սիրէ, ելք Գորտոն Պէօրի հալած պանիքը միսէն դուրս կը հոսի, նիշդ՝ ուղեղը գանկէն դուրս գալու պէս: Կը բնկէ մեր դէմքերը. վարժուած եմ, կ'ըսէ, չորս տարի վիեթնամ ապրեր եմ, նախկին ամուսինս կը պատկերահանէր պատահարները, ես կը փակցնէի: Արդարանալի մարդասպանութիւններ կան: Ձոռն, այդ վարը գամուող ծառը սպանութիւն չէ՞: Արդէն երկու գաւակ որդեգրեր եմ, կ'ըսէ, մէկը փարբու գալցի, միւսը վիեթնամցի: Ես դիտողն եմ, արկածէն ետք հաս-նողը: Միբնա, կը լսե՞ս, ժողովուրդներ կան, որ մահացու արկած մը ան-ցուցածի պէս կ'ապրին: Սկիզբի *ռեզահանութիւն*ը միայն ծրագիր էր, գաղ-բը: Արկածով ջլատուեցանք, արկածով կուրացանք, արկածով մեր լեզու-ները կլլեցինք եւ արկածով դիմացանք: Արկածով բքացանք, յղիացանք ար-կածով, կառուցանեցինք արկածով, արկածով քարոզեցինք ինչ որ չկրցանք ընել եւ կարծես պիտի գոյատեւեմք տակաւին արկածով: Մեծ, անվերջ սանգանքի մը մէջ կ'ապրինք: Կը շոյենք փառաբանելով այդ մանրակազմ ծա-ռը, որ «մեր հպարտութիւնն է»: Կը բաւէ, որ մեր ձեռքերուն մէջ է եւ ծա-ռի կը նմանի: Մեծ ուժ մը նսեմացուցած է իբր: Ծառ մը, որ չ'արտասայ-տեր, այլ միայն կը ցուցադրէ ա՛յ թէ իր ուժն ու կարողութիւնը, այլ՝ իր սահմանափակումը: Ներողութի՛ւն, հայ մշակոյթ, բայց բան մը կայ, որ կը մեռնի կոր...

Mais oui, պիտի չջարժին այս ֆրանսացի կիները, այս պարծուանե-

ըր մերքո-պուլօ-ստոս, լիծամա մը հագուելի սնգամ չեն ուզեր, դեռ շղար-  
 շապատ եւ բուրումնաւոր գիշերանցներու մէջ են: Դի'ր այդ մաքարներէն  
 պնակներու մէջ, վրան սայա զննեմք: Խխունջի ձեւով մաքարներն չեմ սի-  
 րեր, խխունջին իրականը կը սիրեմ. եփած՝ աւելի բնական կ'ըլլայ, հեղուկ,  
 սափակ, սահուն, մէկ ցունցով կոկորդէլ վար կը սահի, հուփ, չեղածի՛  
 պէս: Բո՛ւֆոնը չունէր նպարավանասը, բայց այս գինիին հետ պուրսէնն ալ  
 կ'երթայ, քիչ մը սխտոր կայ. բերնի գարշահոտութիւնն ալ բնական բան է:  
 Ձեմ հասկնար ինչո՞ւ կիներ *բիւ մի* կը սրսկեն, պայուսակին մէջ աւէն տեղ  
 կը շալկեն սկիտէրփի պէս, երբոր այնքան բնական է, որ բերանը երբեմն  
 սխտոր հոտի, երբեմն քոյն, երբեմն արիւն:

Միբնան երկար է, շատ սիւսար, բարակիկ սրունքներով, բայց եփած  
 մաքարնիսի պէս չ'ոլորոխի: Ըսելի՛ք, ողնաշարը վեր-վար-աջ-ձախ ուղիղ  
 է: Բայց երկու կէտերու միջեւ գտնուող ամէնէն կարն գիծը չէ ինք: Մէկ  
 ծայրը անցեալի կիներու ստրկութեան յեմած է, միւսը՝ սպագայի, երբ կի-  
 ներ իրենք բաւարար պիտի ըլլան սերնդագործելու: Այսպէս կը հաւատայ:  
 Վերջին գրած բանաստեղծութեան մէջ չորս էջերով կը նկարագրէ կիներու  
 զանգուած մը ստորերկրեայ քարայրի մը մէջ, մարմինները իրենց դաշտան-  
 ներուն մէջ ներկուած: Միբնան Բիւպէնգ չէ: Կնոջ մարմինը իր սեփական  
 արեան մէջ քաթախուած կը տեսնէ: Փիփասոյի կտրտելու ձեւը ունի. ող-  
 րերգաւարկաներու այդ սարսափելի շարժումները, որոնք իրենց մէջ կ'առ-  
 նեն զինք եւ կը վերածուին վախազոյ գծանկարներու: Բայց Փիսարօ ալ  
 կը սիրէ, յատկապէս փասքէլները կ'ուզէ հանդարտ բնութիւն եւ անվերջա-  
 նալի գիծեր: Աւարտած բանաստեղծութիւն չունի. ստիպուած կը կենայ:  
 Միբնային պզտիկ հայելին ունի-չունի բերան մը ունի, ընզամէնը մէկ սան-  
 քիմեքք քառակուսի է, ոսկեգոյն կիսագլանաձեւ պատին վրայ այս պրտը-  
 լիկ բերանն է: Հայելին գոյն մը ունենալու է, բայց չեմ գիտեր ինչ գոյն է:  
 Պահի համաձայն գոյն կը փոխէ — հիմա սոյալի գոյն քիչ մը քափանցիկ  
 սեւ է. Միբնան ալ այդ գոյն է հիմա, քանի որ բարկացած է. —

Ըսինք, որ բոլոր ֆալսեակիրք երկիրներու մտաւորական եւ աշխա-  
 տող կիները հոյն բանը ունին խօսելիք, դժուար է, որ իսկապէս փեմիմիստ  
 ըլլան:

Ըսինք, որ եկէ՛ք միասին աշխատինք Poetry workshopին մէջ. ստար-  
 կեցին, որ տարբեր է իրենց լեզուն:

Իրենց սիրահարին կամ մաշած իմպիմէզներու մասին կը գրեն, կը  
 գրեն վաղանցուկ զգայնութիւններու մասին, կամ ալ չոր ու ցամաք գազա-  
 փարներ կը կրեն, ինչպէս Թրոֆատէրոյի ոսկեպատ արձանները: Վեհասնի  
 Համագումարը ատի յատակ գետնի մը վրայ կը դնէ մեր եւ իրենց գործակ-  
 ցութեան կարելիութիւնները: Հայերը պիտի երթա՞ն:

Միբնա, դուն չես գիտեր կ'երեւի, թէ հայերը ուր կ'երթան: Օր մը  
 հայրենիք պիտի երթանք, կ'ըսեն, Ամերիկա կ'երթան: Իսկ հայ կիները տեղ  
 մըն ալ չեն երթար. կ'երթըցուին: Օրիորդները ուսուցչութեան կ'երթան,  
 արուեստագէտ օրիորդները դաշնակի դաս տալու կ'երթան, տիկիները Կար-  
 միր հաշ կ'երթան, բայց բոլորը մէկ այցելութիւններու կ'երթան: Այցելու-  
 քիւն տալը հայ կիներու ամէնէն մեծ, հմայիչ եւ լայնածիր գործունէու-  
 քիւնն է. ստանց անոր ո՛չ *բէսիսի* կ'ունենան, ո՛չ բաւբասանքի նիւթ, ոչ  
 ալ ցուցադրուելու վայր:

Միբնային հայելին մեծցաւ, երեսցաւ պատին վրայ՝ այս բոլորը կ'ըս-

ւի՞: Չ'ըսուիր, բայց ինչո՞ւ չ'ըսուիր, ո՞վ պիտի ըսէ: Մտառի վրայ համարուող հայ կիները ո՞վ պիտի հաշուէ: Հայելին գոհ մնաց. քեւերը անփոփեց եւ վերստին ֆնացաւ: Քնացաւ եւ իր քեւերուն տակ պահպանեց հայ կիներու քուլամարք եւ պերճագեղ գանգուածներ:

Միրման կ'ըսէ, քէ հայ բարեկամուհի մը ունեցած է Նիւ Եորքի մէջ, հաստ մըն ալ հոս՝ Փարիզ. բայց ան հայերէն չի գիտեր: Ծնողքը Մարաշի տեղահամառուներէն եղած են, աղջիկը սֆանչելի նկարահան մըն է, քանի մը մըքանակ շահած է. եւ կը գայմանայ Միրման, քէ ան ինչո՞ւ երբեք, երբեք իրեն չէ խօսած հայերու մասին: Չի գիտեր, կ'ըսեմ: Գիտէ՞: Գիտցածը բաւարար չէ, եւ ուրեմն՝ անհիշչ: Միտալ չէ, կ'ըսէ, ծնողքը հայ է: Չի նուցնար գանձում, չէ ուզած նանչնալ: Այո՛, կ'ըսէ, առանձին կ'ապրի եւ կը նախընտրէ տխրութիւնը, տհաւը դրեք եմ ազնուափայլ տխրութիւն: Անոր համար չի խօսիր հայերուն մասին, կ'ըսեմ: Միրման կը շարունակէ. առանձին նկարներ կը նկարէ, լճուած նտարաններ, պարպում գաւաթներ, գոյն չի սիրեր. սեւը ներմակ կ'ընէ, ներմակը՝ սեւ, *նեկաթիւ*ին եւ *փողթիւ*ին տեղերը կը փոխէ: Տընիզ, չեմ գիտեր ծնողքիդ էեզի տուած անուր ինչ եղած է, բայց ինչո՞ւ սեւը ներմակ կ'ընես, ներմակը՝ սեւ: Տուրա Մաարը գերիշապաշտութեան վրձիւնը լքելէ ետք վանքի մը մէջ ինքզինք յանձնեց խորհրդաւոր փորձառութեան մը եւ հիմա կ'ապրի Մեներայի մէջ, աշխարհէն մեկուսացած: Օտար Տամիկիէն անձնասպան եղաւ. Կազանդի գիշեր մը: Արշիլ Կորէին իր հեռուոր ծննդավայրը քերաւ իր պատասաին մէջ, բայց պատասառը չբաւեց իր փոքորկումներուն: Լճուած վանքի յիշատակը ձայն դարձաւ, ձայնը՝ գոյն, բուր, բուր գոյները չբաւեցին իր ներաշխարհի բնդարձակ ոգեբերութիւններուն, որ երեսուն տարի առաջ պարտադրեց ինքնասպանութիւնը այս խռովիչ արուեստագէտին: Բիբերդ, բիբերուդ մէջէն միայն ներմա՞կ պիտի հանես, ինչո՞ւ: Փարաջանովի «Նասն գոյն»ը ցոյց կու տան, դուն մեր հով չես նստիր, աւելի առջեւ կ'երթաս. դուրսի խուռներամ բազմութիւնը նեղեցիկը մտար, անկիւնը կը քիւնուիս: Գիտեմ, քէ ինչու չուզեցիր մեր հով գալ, բայց դուն ալ փափաքէր էիր տեսնել զիս: Միրման պարզապէս զիս հու նայումէկը կարող ասեղ մըն է: Կարը կը վերջանայ, այլեւս ինք գործ չ'ունենար: Ուրիշ տեղ կ'երթայ քերես, չեմ գիտեր: Տես, կ'ըսէ, մենք եւ դուք լաւ կրնանք գործակցիլ, այս բացառութիւն տուող մարդը երեսայ մըն է: Եկեր էր հիմնարկ անցեալ օր, Բէյքի ֆիլմը կը պատարաստէինք: Միրման օր մը հայ տիպարներ ալ պիտի դնէ իր ֆիլմերուն մէջ: Ինչո՞ւ կը խնդաս, կ'ըսէ, դուն չեի՞ր, որ բալորին մէջէն ամէնէն աւելի իմ բանաստեղծութիւններս նախընտրեցիր, եւ գիտեմ, քէ ինչո՞ւ այդքան սիրեցիր մեծւօր մասին գրածս, որովհետեւ երկուքս ալ Սփիւռքի ժողովուրդներ ենք, աւանդութիւնը անհրաժեշտ է մեզի. մեծւայրը պէտք չէ մոռցուի: Տընիզ, ինչո՞ւ սեւին եւ ներմակին տեղերը կը մտնաս, ինչո՞ւ բիբերդ՝ լոյսը շուք, շուքը լոյս կը տեսնեն. բիբերդ կամաց-կամաց քափանցիկ կ'ըլլան Միրմանին հայելիին պէս. հու ըրած փոփոխութիւնը բան մըն ալ չի փոխեր, ուրիշ գոյներ ալ կան, Տընիզ, ընդունէ՞: Դուն ալ իմ գոյներս, իմ սնանկութիւնս ընդունէ, կ'ըսէ, ես այսպէս եմ, աւելի միշդ՝ ես այս եմ: Պատասաին վրայ նուրը կը նաթոսի, նուրը ինքզինքէն գուրս կ'եղէ, կը կուրի, կը հասնի վերջին հարուածը, նուրը կը փլի Հայաստանի ֆարսէսին վրայ. բերդը պարզապող ֆարսէսն արիւն կը հոսի, քարմ, մաքուր, կարծես քէ *Հորովի* երգել կ'ուզէ, բայց կ'երգէ: *Ահա՛ Նի*: Պատասաին վրայ այս բալորը չկան. նուրը մէկ կողմ դրուած է. անհրաժեշտ չէ նկատուած, որ ներկայացուի, սրովհետեւ ան-

կրամեշտ է, որ ներկայացուի: Հիմա պատաստին վրայ երկար մամբայ մը կայ հողէ, անվերջանալի, երկու կողերը մահաբոյր, ինքնիրեն լուծ մամբայ մը: Ունանետեք կան, արեան բիծեր, կտորած խարագաններ, ճիչեր, ստուա-  
ծատարած բազուկներ, հողին վարած բազուկներ, մխրճուած՝ չորցած կոն-  
դերու պէս: Բռնաբարումէ ետք լճուած իրաններ, երիտարարի, կտրիճի  
ուկար՝ նուշի համար չկայ: բոլորը իրենց ներկերը կը հանեն, իրենց գոյնը  
կը փոխեն, Փոսփարի գոյն կը հագուին, կ'արտացոլան, կը փալփլին: Արեւի  
աչիք եարազանի մէկ հարուածով փորում է, վիզը փրքած-փռում է:  
Գետը ինքզինքէն կ'ելլէ, կը յորդի հողէ մամբուն վրայ, կը բուէ այսօր  
տեղատուութիւն: Գետը կը կլլէ, կ'աննետացնէ հողէ մամբան: Գետը աւ-  
տար չ'ուզեր, դէ՞մ կը կենայ, անոր համար աւտարտը կը կլլէ-կ'աննետացնէ:  
Այս ամբողջ բազմագունուը տեսա՞ք, Տրնիզ, գետը ի՞նչ գոյն հագեր է,  
սե՛ւ քէ ներմակ, ներմակ սպանդ կ'ըսեն-կ'երթան: Պատաստին վրայ այս բո-  
լորը չկան, միայն հողէ մամբան կայ, մամբայ մը, որ իր վերջը չի տեսներ,  
եւ անոր ծայրը, սկզբնակէտը՝ երգիչը — մեկնիչ մը, սիրահար մը: Սե-  
րոչուններ եկան եւ այդ մար կարուեցաւ ֆիլմէն, հիմա չեմք գիտեր, քէ  
երգող մարդը հողէ մամբուն վրայ ի՞նչ եղաւ: Հիմա բոլորս մէկ այստեղ  
հաւաւում ելակէտ մը կ'ուզենք: Թոչունները ներմակ էին արդեօք, այո՞:  
Ետեւ կը մայի Տրնիզ, յետոյ արտորանքով կ'ելլէ-կ'երթայ քոչունի պէս:  
Թոչունները սե՛ւ էին, քէ ներմակ՝ չպատասխանեց, չուզեց տեսնել:

Դուն իրեն տարեկից ես, որքա՛ն վստահ ես, որ մանչցած ես: Միրնա,  
ես խօսեցուցած եմ, լսած եմ, կարեկցանքը դրեր եմ մէկդի եւ յարատեօրէն  
կըցեր եմ շեղ: Անոր համար ես տեսայ, քէ ի՞նչ պատահեցաւ այդ երգիչ  
մարդուն հողէ մամբուն վրայ:

Կերա՛ն: Մարդը միմակ էր՝ կերան: Զանգուածները միմակ էին՝ կե-  
րան: Մարդը հետը շուն շունէր, անասուն մը իսկ շունէր իր մէջ: Յնցտիով  
երգել գիտէր, լաւ բաներ տուաւ աշխարհին: Այդ մարդը կոյր էր աշուղի  
պէս, աչքերուն մէջ ուրիշ լոյսեր կային: Այդ մարդը կրակ ունենալու էր  
ձեռներուն մէջ, այդ մարդը գիտնալու էր մագլցիլ, գիտնալու էր մտիլ տեղ  
մը եւ մնալ — աւարի մամբուն ծայրը ինչա՞նչ եկաւ կեցաւ:

Դուն այս բոլորը պիտի բնդունիս, Միրնա: Հակատագրակից ժողո-  
վարս եմք եղեր. դուք տարբեր ուժ մը ունիք սակայն, առանց ձեզի Փարա-  
ջանովը դուք չէր ելլեր բանտէն: Մտաւորականի, արուեստագէտի ազա-  
տուութեան գաղափարը ծածանեցի՞ք՝ դուք հանեցիք: Կու գամ Լիբանան,  
միասին Երուսաղէմ կ'երթանք: Զուգեցի հայրենասիրութիւնդ վիրաւորել,  
նիւ ետքի Միրնա, վեց տարի առաջ երբոր պայուսակ մը առած եկար Փա-  
րիզ հաստատուելու՝ չմտածեցիր Երուսաղէմի մասին, ուխտագնացութեան,  
հայրենագնացութեան, ես ինչ գիտնամ ինչի: Հիմա Լիբանանի վրայով կ'ու-  
զես Երուսաղէմ հասնիլ, ուրիշ ի՞նչ կը տեսնես Լիբանանի կամ անոր սահ-  
մաններն վայրերուն մէջ, Միրնա:

Յետոյ ալ Հայաստան կ'երթանք:

Զկարծես, որ օր մը քեզի Հայաստան պիտի տանիմ: Միմա՛կդ գնա,  
եքէ կ'ուզես. հետս մի՛ գար, մի՛ պղտորեր, բոլոր հարցումներուդ չեմ կր-  
նար պատասխանել: Թերեւս դուն ուրիշ երկիրներ պտըտելու պէտք չես ու-  
նենար, կրնաս Երուսաղէմ մնալ եւ այդտեղ գրել, ֆիլմ պատրաստել, կըռ-  
ւիլ քշնամիին դէմ, եքէ անշուշտ կը հաւատաս կոխին: Կոխիւր սրբազան բան  
է քոյն մեր հերոսները եւ նահատակութեան, ես ալ կը հաւատամ կոխին,  
բայց առանց նահատակութեան: Դուն «Նամն զոյն»ին բոլոր պատկերները

չհասկցար, հակառակ որ նախապէս որոշ տեղեկութիւններ տուեր էի: Չհասկըցար, թէ ինչո՞ւ նեղ ատիմաններով բարձրացան վանք, բայց մագաղաքներու գեղեցկութիւնը գնահատեցիր: Չհասկցար, թէ ինչո՞ւ այդքան ոչխար կար եկեղեցիին մէջ, բայց հայկական գորգերու գոյներուն սքանչազար: Եկեղեցիին զանգը կայ՝ պատերը չկան, զանգակատունը կայ՝ զանգը չկայ, տունը կայ՝ ձայնը չկայ: Երգիչին մէկ ձեռքին մէջ վարդը կայ, միւս ձեռքին սուրը չկայ: Հայկական տաճուկ գորգերու գոյներ: Ամէն ինչ գոյն չէ, Միրնա: Տընիզը ասիկա շատ լաւ գիտէ: Տընիզը մահ կամ կեանք ձգեր է. անոնց միջեւ յոյսի երանգներ չկան: Հոգէ՛ ճամբան տեսածին պէս դուրս ելաւ: Նստարաններուն վրայ մարդ չքողուց, բոլոր ֆազակներու զինները համտեսեց եւ պարսպ գաւաթները առանց կոտրելու բերաւ իր տունը: Կ'ըսես, թէ կամաց-կամաց կը վարժուիս Տընիզի նկարներուն: Հիմա կ'ըսես, թէ սկսեր է արգանդներ նկարել, որոնց կենսատու սերմը չի հասնիր, դատարկ է, ամուլ: Հայաստան նկարիչ մը կայ, որ ռետինէ՛ ձեռնոցներու կողքին չորցած ձուկեր եւ ինքնափակ հաւկիթներ կը գծէ թելէ կողովներու մէջ, մերկ սեղաններու վրայ. շարժող վերաբերուներ կը գծէ ուռած, առանց մարմնի, անզուլս, ահագոյս. իրարմէ՛ քիչ մը հեռու ահաւոր բան մը կը դիտեն: Յետոյ հողն է, ծառերը եւ ելեկորալարերը: Այդ ներկածածկոյթներուն տակ գունազանց, բայց յստակ տեսիլք մը կ'ուրուագծուի: Տեսիլք մը, որ կ'աւարի: Գուն ալ պիտի սքանչանաս Հայաստանի գեղեցկութեան, մեր ցարտաբայետութեան, երաժշտութեան, բեղմնաւոր ձայներուն, մտքով դիտուող աստղերուն եւ կանաչութեան լուրսութեան մէջ փայտերու արանքներուն թլուտած մատաղներուն: Բայց սլակտող տեսարանները եւ պիտի ամբողջացնեմ, ինչո՞ւ Միրնա, եւ կը նախընտրեմ Տընիզի տխուրութիւնը տանիլ...

Տընիզը չ'երբար Հայաստան, խօսած եմք իրեն հետ այդ մասին:

Վստահաբար:

Կ'ըսէ, որ Հայաստանը բան մը չ'ըսեր իրեն:

Կը հանի՞ս լռել:

Հայելին խոշորցար, մոռցաւ իր ինքնութիւնը. մեծցաւ, այնքան մեծցաւ, որ դուրս ելաւ պատէն, յատակը ոսկեգոյն է եղեր, հո՛գը: Միրնային աչքերը մեծցան, միասին նայեցանք: Հայելին տեղ չգտաւ, քաթեցաւ, քաթեցաւ. ներմակ բարակ արիւնները սառեցան:

Նոքրը Տամի զանգը հնչեց տասներկու:

Խորքին մէջ՝ անկերպարան ձեւ մը — փողոցներ, աստիճաններ, դուռներ, եւ մարդու անձնական բացառը այդ խնդրուած տարածութեան մէջ՝ այնքան փոքր: Աւանդականօրէն ֆազաքր այն փայրն է, որ մարդեր կը հաւաքուէին պաշտպանուելու համար ամայութեան դէմ: Իսկ 19րդ դարուն ֆաֆաղները նկատուեցան նոյն այդ ամայութիւնը, անապատացումը: Ինքնիրեն սնանոյ եւ ինքնիրմով փլչող գոյութիւն: Մարդկային նուաճումի ներկայացման գագաթը, եւ ֆազաքր՝ պետութեան արձոյ, զազունի սպասարկութիւններու ցանցերու ոստան, ոտմբերու թիրախ՝ կը հայքայքէ միջոցները մարդու ֆայթայման: Ըստ Բեյլին Լիւնչի՝ «Ճարտարապետական կոթողի պէս ֆազաքր կառուցում մըն է միջոցին մէջ, սակայն բան մը՝ լայն տարողութեամբ,

բա՛ն մը, որ կը տեսնուի միայն երկար ժամանակամիջոցներու ընթացքին» : Բազմադարեան հանդիսարանն է, կրկէսը, ամփիքատրոնը, գումարափ՛ տեսարաններու ուսարտումէն ետ : Քաղաքը՝ աճուարիումի պէս, որուն մտայն խոնարարքեան մէջ պիտի դնես բոլոր եղանակներու ծածկոյթներդ, քերքերը, որ կերպարանափոխեցին ինք եւ այն բոլորը, սրունց հաւաքածոն կ'ընես, երբեմն սկսանայ : Մուք, փոքր, հեղձուցիչ միջոցը եւ մեծ, սեւ ծակը, որ կ'ընկղուզէ մարդը դէպի դատարկութիւն : Բա՛նա է քէ գերեզման : Օ, վերջապէս կը հայքայքէ ոչնչութեան գգացում մը, կամ շոգիացումը անձիս այս հսկայ եւ դատարկ միջոցին մէջ : Կարծես լուսաշառայլ գերեզման մը կը մըլտնեմ : Սէն Ժերմէնը միակը աշխարհը լոյսէ կը գրկէ . կ'ըլլամ այս պոսեմական կիսաշխարհին մէջ . յայտնի չէ, քէ ժամանակաւոր ի՞նչ է քէ ես : Ուրաշխի տեսողական պատկերներ կան եւ իրականութիւնը այս բոլորէն է : Այս բոլորէն մէջ կը շարժի Քաճեայի *Դասակարգութեան* քաղաքը, Քամիւի յանախանքը սգեղ Օրանի : Եւ իմ Քաղաքս, միակ քաղաք մը՝ անկարագրելի, Պէյրուքը, Երեւանը, Փարիզը, Թեհրանը, Լոնտոնը, Լոս Անճելըսը, Մոնթեալը, Նիւ Եորքը գնդասեղներու պէս կը շարեմ եւ երագիս երկար քելը կ'անցնեմ անոնց վրայ : Կը շինեմ Սփիտոք մը, կը գրեմ՝ գաղթավայր : Կ'արեմ եւ կը գրեմ՝ բնակավայր . հոն կ'ապրիմ Միքնային հետ, ուրիշ մարդու մը հետ՝ քանի մը ժամ, հաղորդակցելու համար, անկէ ետք՝ առանձին : Բայց գնդասեղները մէկ-մէկ կ'իյնան եւ վայր չի մնար : Եւ կը տեսնեմ, որ անբաժանելի եմ Քաղաքէն, բայց անուր չեմ յիշեր, հակառակ որ բարական հասցէներ կան բազմաքիւ անձերու : Պէտք է յիշել, քանի որ հասցէատէր եմ : Խորշ մը կամ սպարսմք մը կրնաս ունենալ, բայց քուր չէ, կ'ըսեն, հայրենիքդ չէ, կ'ըսեն : Կ'ըսեն, որ պէտք է քայեմ բոլոր ուղղութիւններով, բայց հիմնական ուղղութիւնը այս ուղղութիւններէն անդին է . ո՞ւր ուղղուիմ եւ ինչպէ՞ս ուղղուիմ եղածներէն անդին : Բայց կիմ մը կայ, որ կը փախչի, չ'ուզեր իր արեան մէջ քաքխուիլ, պիտի չկարենայ սերնդագործել . այդ խնդրումին մէջ Տընիգի համատարած ամառութիւնն է : Ես պիտի պահպանեմ երեսակայութեանս այս քարտիսագրութիւնը :

Քաղաքը աղանետուն չէ, որ ուզած բոլորիդ խաղաղութիւնը մտնէ ներս : Երբոր ձէճին հեռաձայնէ՛ կրնաս անկողիինն քով բաց քողով հեռաձայնը, երբայ քէյ մը պատրաստել եւ խմել : Քառորդ ժամ մը պիտի խօսի . ո՛չ հարցում, ո՛չ սրտասխան, ոչ ալ օճէյդ կ'ուզէ : Վազը Շէրքն պիտի մէկնի Նիւ Եորք իր հրատարակիչը տեսնելու, պէտք է պարբերաքերք մը սկսիլ Փրանսայի անգլիագիր կիներուն համար : Շատ խանդավառ է ձէճի, Շէրքնի գիրքը հրատարակուելէ ետք, կարգը Րընաքային է, յետոյ՝ իրը, արդէն իրմէ վեց բանաստեղծութիւն պիտի հրատարակուի կնոջական ամառքերքի մը մէջ եւ պատնառ չկայ որ . . . ձէճի պիտի չհասկնայ, քէ պատնառ չկայ, որ երկու տարիէն հագիւ հրատարակելի իր գիրքին փառաբանանքը սկսի հիմա, կէս գիշերէն ետք՝ հեռաձայնով : Քիչ առաջ կ'ըսէր, քէ նկարներու մուք սեճեակէն հագիւ դուրս ելած՝ յիշած է մեզ եւ վայրկեանական քիւերը դարձուցած : Բարի է ձէճի : Ինչ որ մտածէ քէ լաւ է ընելը՝ վայրկեանական կ'ընէ . երկու անգամ ամուսնացեր է : Բոլորին պիտի օգնէ եւ ամէնքս պէտք է

քաղ առ քաղ տեղեկաւորին ունենումք իր մասին: Լիբանան գալ չ'ուզեր. հաշուեր է, քամ օտար քղթակիցներ սպաննուեր կամ անհետացեր են մինչեւ Փետրուար 1977: Միբնան եւ ես նստեր ենք անկողինին ծայրը, ընկալուչը գետինն է. ձե՛քի պիտի խօսի մինչեւ որ յոգնի եւ քնանայ: Առտու կանուխ քարաքէի դասի պիտի երթայ: Հիմա արնագոյն գօտին ունիմ, կ'ըսէ Միբնա, յառաջիկայ տարի ես ալ պիտի օգնեմ Փեթրիին. ոչ, Սեպտեմբերին, Յունաստանէն վերադարձիս: *Քոլոսարս աֆ Մարուսի*ն, ոչ ալ նոյն գրիչի պատկանող սրեւէ գործի կ'ուզէ անդրադառնալ, Հենրի Միլլըրին անունը լսել չ'ուզեր: Կիմը միայն սեռի առարկայ մը չէ, եւ այդ հեղինակին համար կիմը ասկէ անդին չէ անցած. ծախած մարդկայնականութիւնը իրեն թող մնայ. չի յիշեր գարծ մը, որ առանց կնոջ մը տուած ամբողջականութեան գրած ըլլայ. եւ տակաւին նուաստացուցիչ անփութութեամբ մը կը մեկուսացնէ գայն

միայն անկողինի ծառայեցնելու: Իսկ ես հիմա կը փնտռեմ Փարիսէոմը, որ մտցած ըլլալու եմ Լը Շաքըլէի վապուղիի մուտքին, երբ երեք սրուտախտ վանականներ գանգակներ հնչեցնելով կ'անցնէին, կարաւանի սպաւորութիւն ձգելով: Պէյրութի մէջ ուզս կա՞յ, հարցուց Միբնան. վստահաբար գիրքը պզտիկ կլոր սեղանին վրայ մտցայ, վաղը կ'իջնէ-կ'առնէ, եթէ ուրիշ անցորդներ ալ գայն մտցած չըլլան այդտեղ, եթէ քեզի պէս *թարխաթ*ներ... *Մեթր*ներուն մէջ միշտ ալ շուարած անցորդներ գիս կը գտնեն իրենց ուղղութիւնք կայանը հարցնելու, եւ յատկապէս՝ ծեր կիները...: Հաւանաբար նայուածքէդ կը դատեն, բաս: Յետոյ մենք Րիլէէ կարդացինք եւ չեմ յիշեր, եթէ գիկի խմեցինք չէնացած: Րիլէէն ալ կակուղ բարութիւն մը ունէր, կարծես կը խուսափէր բախելու այն բաներուն, որոնք խաղաղ չեն: Իսկ անկողինը խաղաղութեան կողմ մը չէ, որուն վրայ կրնաս երկարիլ եւ դիտել, թէ ինչպէ՛ս կ'անցնի կեանքը: Անկեւ շարունակելիութիւն մըն է: Ձեռացած՝ Միբնան դրան սողնակը երկու անգամ դարձուց, ներմակ վարագոյրը բացաւ եւ օրացոյցին վրայ նշանակեց այն հինգ օրերը, երբ լեռները պիտի երթար մագլցելու: Ձեր Մովսէսն ալ այդպէս ստացաւ պատուիրանները: Խնդաց: Վանեցին լոյսը: Պատշաճօրէն պիտի ընդունիս հրահանգս, Միբնա, այդ տողը այդպէս չեղաւ: Ինչո՞ւ: Մեծմայրս ակնոցները տուաւ ինծի, չեղաւ: Մեծմօրս աչքերուն ինչ գոյն ըլլալը չեմ գիտեր, բաս: Մոխրագոյն, վստահաբար: Մեծմօրս մոխրագոյն ակնոցները ջարդեցի աչքերուս մէջ եւ տանս քաֆուն մէկ խորը կացուցի:

Քունը իջաւ. կարծես թէ մշուշ է, մոխրագոյն մշուշ: Աւագահատիկի տարափ է. այս հեղձուցիչ օդին անպայման կ'իջնես տաքան կամ լուացարան, բայց ջուր չկայ, եւ տաճութեան ներհասքին հետ սլոպակներ կը կազմուին, կարծես թէ որոշ համրութիւն մը կայ, որ կը կաշկանդէ մթնոլորտը. չես ալ ուզեր պոռալ այլեւս, մութ տեղէ մը կախուած խաղալիքի պէս ես: Պատրաստ՝ տարտղնուելու, եթէ ինչի մատիկները չյոգնին, եթէ գիշերը իր իմաստնաթափոյց կոպերու մտերմութեան մէջ ընկալելով, ընկալելով՝ չընկղմէ քեզ:

Անձրեւը շրխկաց եւ նոր դիմածեւում մը ստացած թաղը, ուրկէ ամէն ինչ կը փախչէր, նստեցաւ անկիւն մը: Զարդուխտորք, սպակիէ թանձր խա-



ւի մը պէս վառուցուաւ անձրեւը եւ քէշի գաւաքները յայտնուեցան : Ինչ մը ետէ՛ք քաղաքապար դարձաւ եւ սկսաւ ապակին քիտկացնել : Լը Տէօ Սիճը լուռ է հիմա, ինչպէս հանգարած գոյութեան պաշտօն : Սքնարանին մէջ անհեռա- մուտ հանգոյցները կը քակուին եւ հին եկեղեցիին սրտը աշէնքը գոց կը հետեւի խօսակցութեան : Գոմարացի փաստաբանը կը պատմէ Փիքրը Ապի- լարի եւ Էլաշգոյի մասին, որոնք կ'ըսէ, թէ վերամիացեր են իրենց մահէն ետէ՛ք : Ապիլար բակ մը ունէր, ուր նեմելով կը դասաւանդէր իր աշակերտ- ներուն. այդ նաւրան քիչ մը անդին է, երբոր անձրեւը դադարի ու դուրս գալիս՝ պիտի ցոյց տայ, անունը չի յիշեր : Ջարմանալի սէր մըն էր, կ'ըսէ, մինչեւ իրենց մահը տեւեց, տեսարար քոչակցեր են իրարու հետ : Յուսանա- տեցնող բան մը կայ, որ կը տեսնեմ շատ լաւ : Երբոր մէկն ու մէկը գիշերը կ'արթննայ, աշէնքը գոցել կ'ուզէ եւ կը տեսնէ գիշերներու անվերջութիւ- նը : Մարդ մէկ կեանք կ'ապրի քանի մը կեանքերով եւ այդ կեանքերը աւելի երկար են, քան իր մէկ կեանքը : Այս բոլորը եթէ ըսեմ մարտնչութեան մը, պիտի թուէ՛ հմայիչ բայց անգոհացուցիչ բաներ կը խօսիմ : Բայց մեզմէ՛ դուրս գտնուող պատմաբաններ կան, որոնց գերերը մեր ուղեղները պիտի վեր- ցընեն ասոն-ասոն, բայց բան մը կայ, որ մեր շուրջ պիտի դասնայ եւ պի- տի չկարենամք բռնել, եթէ դուրս չհամենք մեր մէջ պահուրտող գիւտը, կի- զանիւքը կեանքի : Սկիզբէն, ասանց խօսուելու համաձայնուած սա ճանձրա- լի եւ անձուք իրականութիւնը բոլորովին անբաւարար է կեանքի իմաստ մը արտայայտելու : Պէտք է դուրս հանել ներքին կիզանիւքը, եւ անը սահմա- նը հասնելէ ետէ՛ք՝ աւելի մխրեռիլ նուիրման գիտակցութեան մէջ, այդ ան- բացասորելի *Ֆիլոզոֆի* ենթաշխարհը, սւր կ'ըսեն, թէ կը պատկի ստեղծու- գործութեան աստուածը . եռացկատ, պաղպաջուն պոպոզակներ արձակելով, ասիտի պէս : Մարգարիտներու փերքերը կ'իյնան սեղանին : Կը վերցնեմ հատ մը, տակը ծածկոցը ծակտիկ մը ունի, կլոր եւ անհարասար, սիկառէթի մը քերանին չափ : Կեանքիս մէջ ես միայն մէկ հայ տեսեր եմ, կ'ըսէ, ան ալ դուն ես . իսկ Սովետական Հայաստանի տահումները չեմ գիտեր : Ծաղիկին քերքը ետ կը դնեմ յայտնուած ծակին վրայ : Ականաւոր գրող, կը շարու- նակէ, Սարգիսանը ունիք, Մայքըլ Արլէն Կրտսերը, կը յիշեմ, այս : Ման- լակագլ ծառը :

Ջոյգերը սիրտբանելու կը պատրաստուին : Անկիւնները կայնած են, հովանիներու տակ : Ունակ արտորանքով կ'անցնին, անպայման մէկ-երկու ցուցասրահ պիտի այցելեն : Պզտիկ զանգակատունը եկեղեցիին՝ վեղալի պէս կը ցցուի պատուհանէն :

Յետոյ՝ գիշեր եկաւ . Ապիլարը անցաւ իր նամբէն : Ծաղկաբույի ծա- ռերը կը ժշժշային եւ անձրեւին տակ անոնց մերկ ճակնի ճիւղերը կը տա- տանէին, կարծես նշաններ պիտի տային անդրաշխարհային էակներու : Քա- ղաքը կենսաբաղձ է . գիշերը պիտի հեռանայ, ի՛նք պիտի հեռացնէ գիշերը եւ ոչ թէ անուպատի անտարբերութեամբ դիտէ լոյսի եւ խաւարի խաղերը իր լայնատարած քեւերուն վրայ : Հեռուէն կը լսուէր քաղաքի բաւական բըռ- նագրօսիկ հեւքը իր սրտերակի լուրքեան մէջ :

Այս քանի՛ օր է՝ Փարիզը բամպակապստ անաստաղը բռներ-կեցեր է : Եթէ քոյլատու լլլայ՝ պիտի փոշիէ գրկուին բոլոր նամբաները — rue, avenue

կամ boulevard : Մէկ աչքը ապակի մտածոյ մը իր մէկ վէպին մէջ 16 փողոց նկարագրած է մանրամասնօրէն : Միայն մէկ փողոցի անունը փոխուեր է հիմա , տասներկնգը նոյնն են , չեն շարունակուիր : Նոյն տեղը կը մնան իրենք եւ իրենց ոտնահետքերը եւ անիւները եւ քրֆիջները եւ մահաբոյր արցունքները : Ամբողջ եզածը այս երկուքին մէջ է — առոյց մանուկ մը կը վագէ մէկ մայրէն միւսը , եւ մէկը ետեւէն կը պոռայ , որ գգոյշ ըլլայ . կամ խլիխլի ծեր մը կ'անցնի վախկոտ գաւազանով եւ բան մը ետեւէն կը յիշեցնէ , որ գգոյշ ըլլայ : Ճամբան չէ , որ իր շարունակութիւնը կ'որոշէ , յիշողութիւն չունի : Բոլոր ալիքները , բոլոր կշռոյթները ինք կը վերածէ կարելութեան , մենք գանձումք բառերով կարենալ արտայայտել շատ առաջ : Միտքի շատ ձեւեր կան , որոնք պայքարելով կը սուգուն-կ'անհետանան իր խորունկ գիծերուն մէջ : Հոստորի մը պէս է , մէկ վիճակէն միւսին երթարկուելով , միաժամանակ հրաժարելով իր բոլոր վիճակներէն : Անխուսափելիութիւնն է կեանքի , որ մոգական թարկանքի մը պէս կ'երկարի առջեւ : Ամէնօրեայ իրականութիւնն է , նաեւ գերերագային իրականութիւնը : Երագի պէս է իր արտաքին յիշողութեան բացակայութեամբ : Ճամբան՝ գրաւիչ եւ վտանգաւոր , դատող ստորաբաբերով , եռանդուն , տարածուող : Կ'ընծայէ փախուստ գեղանկար , երեւակայական բանտէ մը , որ զիս պահպանելով , պաշտպանելով՝ իր տգեղութեան ծերութիւնը կ'արտայայտէր : Անյիշելի պարտք մը ունիմ , որ պէտք է անվերջօրէն հատուցանեմ , իր մէջէն անցընելով բարձրութիւնները կիրքի եւ գրկանքի խորութիւնները : Անկէ ետք է , որ կ'արթննայ ստեղծագործ երջանկութիւնը եւ հոգիս կը պտուտքի երածշտութեամբ մը , գար ոչ ոք պիտի լսէ : Անշուշտ ոչ ոք պիտի լսէ : Բացարձակ անտարբերութեամբ կը փետտէ նամբան , կը փետտէ մարդերը իրենց տեղերէն եւ երթեւեկ մը կը ստեղծէ իրեն համար : Ո՛չ մէկ երաշխիք կու տայ , ո՛չ մէկ վերջաւորութիւն : Ինչ տարօրինակ է վստահութիւնդ . կը բաւէ , որ ուտող դնես անոր ծայրը եւ վստահ ես , որ ելքը պիտի գտնես , պիտի հասնիս : Ճամբան անվերջութիւնն է : Ինքզինք չի գայեր , կը պայթի , կը բողբոջէ , կը լքէ : Կնոջ պէս է : Ընդհանրին մէջ կ'անանձնականացնէ , յետոյ ինք անհուօրէն ինքնախոյզ դարձնելու : Բոլոր հաւանական եզրերուն կը հասնիմ ինքզինքիս այս որոնման մէջ եւ ամէն բան կը շարունակուի , կը շարունակուի . եւ քանի որ կը վերակսիմ քաղի՝ ամէն բան կը սկսի շարունակուիլ : Եւ քանի որ այդ մանակը , այդ ծերունին եւ ես չեմք ուզեր , որ Փարիզը մեռնի , Քաղաքը կը սկսի շարունակուիլ : Արդէն Տընիզ կը փախչի անընդմէջ հաւաքելով պարպուած նստարանները , գաւաթները , արգանդները : Բոլոր ներակութիւնները կը հաւաքէ եւ թափանցիկ նամբայ մը կը յայտնուի , ա՛յդ է , որ կը մնայ : Ինք ա՛լ թափանցիկ , ճիշդ Սառուցեալ Ովկիանոսի վարնախաւի ձուկերուն պէս , միայն կ'մախքը կ'երեւայ եւ մտքը մեղմաստ : Եւ ինչ խտութիւն որ կը դատարկուի իր խորքէն՝ կը դառնայ թափանցիկ : Տընիզը շատ բան հաւաքեց , սենեակին մէջ կը ցուցադրէ . պատասխաններ չեն , անոր համար մտնելու է Տընիզին սենեակը , որ քաղաքի մը կեդրոնն է : Մանրանկար է քաղաքը — պիտի ապացուցանէ , որ նախաները՝ ինչպէս անիւի ճողուներ , կը նստագայթեն ու կը դառնան անծայրակէտ , բացի հոնկէ , ուր որ կայնած ես հիմա : Կայնած՝ պարտասուն . մարմինդ հսկայ աչքի մը պէս կը բացխփուի ու կը յատաչանայ ստանց տեղ մը յենելու , իսկ սիրտդ լուսընկալող էութիւն մըն է , որ կը քարթէ...

Մեր միտքին մէջ օր մը ունինք եւ ամէն օր կը սկսինք այդ օրը սկսելու համար: Հաւատքի եւ անօր խաբկանքի սուտբամարան է, որ կը դիտէ օրերը: Բայց այդքան ախարժակով մի՛ ծափեր, վաղը կրնան նոյն պատկերապիւնէն ուրիշ բաներ ըսել: Ինչ տխրութեամբ դիտել սորված ես հաւատքիդ մահաբանները: Երբոր այս գրութիւնը կարդաս՝ իրականութեան որմնակարները կը դիտես՝ կարծես դուրս ելած ես սեփական պատմութենէդ: Մեծօր բառերը այլեւս նշանակութիւն չունին, բայց այդտեղ եմ տառուկ քարաներու նման: Այդտեղ մնացին մանկութեան պէս, որ շատ բաներու կը հաւատար, եւ որ շատ բան հարցուց: Խաբեպատիր ու պատրալիք մամբաներ, եւ հունախոյզ մամբորդ՝ քաղցի այդ փողոցներէն: Պահ մը լսեցի ոսկորներու շխրտոցը, տեսայ գրականութիւն մը, որուն բանալիները ժանգ կապած էին. որովհետեւ վաղուց չէին գործածուած, բայց կար շխրտոցը մատակարարու, որոնք հետուններէն կը փորձէին միամտալ ու բռնալ վայրը: Մանրակազմ ծառք բերան չունէր, ուս ալ չունէր. հողէ համբայէն անդին տեղ մը ինկած էր: Միքնային հայելին կը յօրանցէր. հայելին պահի համաձայն գոյն ու կերպար առաւ, եւ Միքնան ու ես գումարկութիւնը ապրեցանք, բարեբախտաբար ստանց յետաշրջուած մնալու: Մենք այն մարդոցմէ եմք, որ մահացու արկած մը ունեցածի պէս եմ, առանց գիտնալու յստակօրէն արկածին վայրը եւ թուականը: Բայց անօր տարողութիւնը իրենց մէջ է եւ կ'ուզեն պահ մը վերադառնալ այդտեղ, սակայն պէտք է փնտռել, թէ ո՛րք: Ի՞նչ է վերջին արարին հասնելու այս մարտաջը, թէյեսու նախապաշարունք, որ ամէն բան պիտի աւարտի՞: Վերջին արար: Զէ՞ որ յաջորդ թողէին ողջ ես եւ տեսողութիւնդ կը շարունակուի, եւ յիշողութիւնդ, որ աւրջութիւն ունի անյիշաչար մամբաներու հետ — հողէ համբէն յստակող տեսարաններով, Տրեխի պարպուած, անգործածելի եւ ուրեմն՝ անհարգ իրերու հաւաքածոյով կը բռնանայ տեսողութեանդ վրայ եւ վերջնականապէս կը վերադառնաս դուն քեզի:

Այդ ժամուն արեւէն խանձած, մթազոյն մորթ ունէր քաղաքը: Եւ գրող մը իր սիրած աղջիկը կը փնտռէր աշխարհի ռեւէ կնոջ մէջ. եւ կին մը ծեծ կ'ուտէր գոց վարագոյրներու հետեւ, յետոյ բեմ կ'ելլէր ժպտուն. եւ այդ բեմին վրայ Միքնան կը պոռար, որ աշխարհը առանց տղամարդոց նուազ անկատար կ'ըլլայ. յետոյ՝ Յունաստանի կղզիները կ'երթար արձակուրդի իր բարեկամին հետ, իսկ եթէ այդտեղ Հենրի Միլլրքին հանդիպէր՝ անպայմանօրէն անօր ալ պիտի ըսէր, որ ամբողջ ունեցածը տղամարդու չորհրդականութիւն է եւ այլեւս զինք պիտի չկարդայ, որովհետեւ կրնայ փոխել: Եւ Մանմաքքի այն աղմուկին մէջ, ուր խաղատուներէն ինն ֆրանսական վալսերը ինքնամտաց դուրս կու գային գրգսելով մարդոց յիշողութիւնն ու զգայարանները՝ միայն հոսպիտ մը կար, դէմքին կէտը քերմակ ներկած, կէտը կարմիր, ասամնաքամի, եւ կ'երգէր չերգելու պէս՝ առանց ձայնի: Ժամը երկուֆուկէս էր, ամէն մարդ իր ընկիւղը պէտք է որոշէր: Նկարիչներ մարեցին իրենց լապտերները եւ այլեւս ինքնագոհ կիներու դիմանկարներ չէին գծեր: Այդ անգրութեանը քաղցին խորհուրդին մէջ միայն գերանկուրն հոսպիտը կար, առանց ծամածռումի: Բնականը այդ էր. մնջկատակի էութիւն մը, որ տեղ մը չէր հպեր, ռեւէ անձի կողմէ չէր լսուեր, եւ կ'երգուէր, կ'երգուէր առանց ձայնի...

# Ն Ե՛ Կ Ը Ր Մ Ո Ր . . .

Էտիպը Ալէն Փոյլի մասին դիմացը արտագրուած Արբաճամ Ալիքեանի նոթը, սնորհեաւ հռչակուող հռչակաւոր բանաստեղծութեան թարգմանութիւնը եւ նոյն բանաստեղծութեան Վիզէն Բարսեանի փոխադրութիւնը լոյս տեսան միաժամանակ, հայրենի «Գարուն» ամսագրի անցեալ տարուան օդոսաստան համարին մէջ: Երկրորդ թարգմանութեան եւս կցուած է նոթ մը, թարգմանիչին կողմէ, հետեւեալ վերջարանով:

«Ներառաւիտ եղիք քարգլխաճութեամ աշխարհը գնահատելիս»:

Ընթերցողին ներողամտութիւնը, տարակրօյ չկայ, աւելի պիտի աճէր եւ երախտադիտութիւնը շատնար Բարսեանի ճիշդին առիթով, եթէ, անշուշտ, պակսէր իրեն Ալիքեանի թարգմանութիւնը: Պիտի ուզէինք հաւատաւ, որ Բարսեան ինք եւս պիտի ուշանար հրատարակութեան տալ «Ազաւ»ին վրայ կատարած իր աշխատանքը, եթէ տեսած ըլլար բանաստեղծ իր հղորդ ձեռքերումը, ինչպէս նախկին թարգմանիչները պիտի այրէին «Ազաւ»ին յատկացուցած իրենց համարատաստան թուղթերը, եթէ առիթ ունենային, ունենան օր մը կարգալու Ալիքեանի վերատեղումը:

Նախկին թարգմանիչները, բայց անոնցմէ առաջ՝ Ալիքեանի խոստովանութիւնը:

«Հայ գրականութիւնը վաղուց է փառատեղեակ այս բանաստեղծութեամ, բայց ես մէկ բանաստեղծութիւն գիտեմ՝ Ռ. Զարգարեանի, ֆրանսերէնից, արձակ»:

Ուրիշներուն ու մեր գեղացածը աւելին չէ. Ռ. Զարգարեանի արձակ փորձն զատ, տեսած ենք Փրոֆ. Վարդարշի Գալուստեանի դորձը՝ Պուքրէշի «Նաւասարդ»ին մէջ, «Հայրենիք» ամսագրին մէջ՝ Սահակ Պալլազեանի թարգմանութիւնը (տեսած չըլլայի՛նք բարձր), իսկ երրորդի մը մասին կարգացած ենք պարզ լուր մը, որ թերեւս կը վերաբերի նոյնն Ռ. Զարգարեանի փորձին («Ազատամարտ», Բ. սաթի, քիւ 16):

Անոնցմէ եւ սչ մէկը սակայն, ներառեալ վերոյիշեալներէն բաւական վեր մտկարդակի մը վրայ դառնող Վիզէն Բարսեանի թարգմանութիւնը, կը մօտենան Ալիքեանի աշխատանքին, որ բազմաաարար դեղեցիկ չէ միայն, այլ՝ նուաճում մըն է ինքն իր մէջ, եւ թերեւս մեր մտտարթանները երկար ստեն չչանդդին, աւելի ճիշդը՝ հարկը չզգան թարգմանիչական յաւանութիւններով մօտենալ «Ազաւ»ին, այնպէս՝ ինչպէս ուրիշներ, եթէ տեղեակ են ու անճաշակ չեն հարկաւ, պէտքը պիտի չզգան թարգմանիչ Ծելիքս Արվերի «Հնչեակ»ը՝ Վահան Թէքէեանի պերճ փոխադրութեանէն ետք, կամ Բիփլիկի «Շքե»ն՝ Մ. Իշխանի կատարած չքնաղ հայացումէն յետոյ:

Թարգմանութեան ամբողջ երկայնքին՝ հազիւ նկատելի են երկու-երեք նուագումներ, իսկ վեցերորդ տունին ինքզինքնը տողին անհետացումը պէտք է վերադրել հայրենի տպագրական բարբերուն եւ ս'չ թէ թարգմանիչին, որ չէր կրնար մոտարցութեան տալ ա՛նդամ զիր մը, երբ դիտենք, որ «տարիներ շարունակ ես կրկին ու կրկին անգամ վերադարձել եմ այս քարգլխաճութեանը, որպէսզի կարելի հարազատութեամբ հայերէն էլ «երեւոյ ինչգար Պոմ»:

Անհետացած տողը հաւանաբար ունէր սա ձեւը.

Թող մի վայրկեան սիրտս հանգիստ, — պարզեմք յարեւուրդն այս դաժամ:


Բանաստեղծական իմացումի, թափանցումի, հաշակի եւ յարակից խնդիրներու մասին զարգացման նոր մտկարդակներու եւ, մ'նաւանդ՝ մեր լեզուին ձեռք բերած նոր որակին հազարակից դարձնելու համար ընթերցողը, Ալիքեանի թարգմանութեան առընթեր կ'արտագրենք նաեւ Փրոֆ. Գալուստեանի կողմէ կէս դար առաջ կատարուած թարգմանութիւնը, որ օրին մեծ գնահատանքի արժանացաւ: Կէս դարը դուր չենք անցուցած: Նորին գուլա՛ր գեղեցիկութիւնը:

Շատ են «Ազաւ»ին մէջ Ալիքեանի յայտնաբերած թարգմանական դիտերը, ու անոնց մէջ ամէնէն ուշադրաւր՝ անդերէն Nevmoreին մեր լեզուին մէջ տրուած ջարդարացիական իրաւունքը, որ այնքան հարազատ եւ ուժգին կը հնչէ.

Համի՛ր կտուցի իմ արտից, տա՛ր տեսիլքդ ապաւոր.  
Ազաւան աւաց՝ «նե՛վըրմար»:

Արբաճամ Ալիքեանի թարգմանութեանէն ետք, թարգմանութեան դիմաց, առայժմ քիչ մը դժուար է հայերէնով պատկերացնել նոյնքան հարազատ ստացում չքնաղ «Ազաւ» մը: Դժուար է եւ, ս՛վ դիտէ, թերեւս  
Նե՛վըրմար . . .

# La voie étrange d'Edgar Poe



Manet : ex-libris pour « Le Corbeau »

## ԷՏԿԱՐ ԱԼԷՆ ՓՕ

### Ա Գ Ռ Ա Ի Ը

Խորադրային բնորոշումը չէիս նշանաւոր բանաստեղծ Վիտեղուրտ Նեղվայինն է, ուստի եւ չէ, որ պէտք է ասեմ այս ստեղծագործութեան Լզակիրութեան մասին:

Չկայ համաշխարհային մի ուրիշ բանաստեղծ, որի անունն այնքան սերտօրէն զօրւած լինի իր Մէկ բանաստեղծութեանը, ինչքան Էդգար Ալան Պոն՝ «Ազոա»ին:

Չկայ քիչ թէ շատ վարդապետ մի լեզու, որ տառապած չլինի այս բանաստեղծութեան թարգմանութեան վրայ:

Չկայ մի բանաստեղծ-թարգմանիչ, որ թաքնապէս, հողերն չի կրակել իր փառքը կրակել այս ստեղծագործութեան հետ:

Ի վերջոյ, «Ազոաը» Փրանսերէնի թարգմանած Ատեֆան Մարյամէի վկայութեամբ, չէր մի ուրիշ քերթուած, որի անխախտ ամէն մի բառը ունայնութեան ջրհորի լիսեռից կախուած զոյլ լինի, կեանքի քամիներից տարուեր:

Եւ այս հաստատումներից յետոյ մտածել, թէ ուղից 130 տարի առաջ, Նիւ Ենքսում, այն առաւտն իսկ, երբ առաջին անգամ «Ռիվիու Նախ» հանդէսը հրատարակել էր «Ազոաը», երբ բարբի շրթների վրայ էր նրա հեղինակի անունը, այդ նոյն առաւտ «Կեանքից ու կարիքից հողմահարուած» Պոն գինեանից, հարած, Բրսպուէյով տան էր վերագանուած, գանդաչելով, զայթելով ու խփուելով պատերին...

Շոյ վրականութիւնը վաղուց է քաջատեղեակ այս ստեղծագործութեանը, բայց եւ միայն մէկ թարգմանութիւն գիտեմ՝ Ռ. Չարդարեանինը, Փրանսերէնից, արձակ:

Անկարելի է փոխադրել «Ազոաը» տառնց խորամտիս լինելու Պոյի «Յօրինումն փիլիսոփայութիւնը» յօդուածի մէջ, ուր նրա ծննդաբերութիւնն է արւում:

Ես պահել եմ «Անվըստը» (այլեւս կրեք) յանդերձը, որովհետեւ այս ստեղծագործութեամբ այդ արաալայաութիւնն արդէն մի զարից սուլի է, որ մուտք է գործել այսպէս կոչուած «Համաշխարհային բանաստեղծական րատարանի» մէջ:

Եւ, վերջապէս, տարիներ շարունակ եւ կրկին ու կրկին անգամ վերադարձել եմ այս թարգմանութեանը, որպէսզի կարելի հարապատութեամբ հայերէն էլ «Երեւոյ Էդգար Պոն»:

## Ա Գ Ռ Ա Ի Ը

Մի անգամ մութ կեզիշերին խոկում էի խոնջ ու լռին  
 Խորախորհուրդ հատորներն վրայ մեռած մի գիտութեան,  
 Երբ մրափում էի յոգնած, մի թռչլուկ հայտնած լսուց յանկարծ,  
 Կարծես մէկն էր գգուշօրէն բախում, բախում դուռն իմ տան-  
 «Մի այցելու է, — հծծեցի, — որ բախում է դուռն իմ տան,  
 Լոկ այս, ուրիշ ո՛չ մի բան...»:

Ա՛հ, յիշում եմ յստակօրէն, Դեկտեմբերին էր սառնեղէն,  
 Մեռնող ամէն կոնկ յատակին գծագրում էր մի ուրուական:  
 Կարծիքն այցն էի սեղնում, ի գո՛ւր էի իմ գրքերում  
 Լեհոքի մահն անվերջ լացող վշտիս փնտաել մի դարման,  
 Հրեշտակներից Լեհոք կոչուող այն սուրբ կոչսի, որ սակայն  
 Անանում է յախտեան:

Ու ծիբանի վիժակների դողն անորոշ ու ախրալի  
 Մարում էր ինձ, լցնում հոգիս արհաւիրեով ցնորական:  
 Խաչադուռնու համար սրտով ռաֆի ելայ ես կրկնելով-  
 «Մի այցելու է, որ իմ տան դուռն է բախում անպայման,  
 Ուշ մնացած մի այցելու բախում է դուռն անպայման,  
 Այս է, ուրիշ ո՛չ մի բան»:

Գօտեպնդուեց սիրալս տկար, չերկրայելով արդէն երկար՝  
 «Պարո՛ն, — ասի, — կամ էլ, տիկի՛ն, խնդրե՛մ, ներող եղէ՛ք միայն,  
 Բայց ես նիրհում էի յուշիկ, եւ դուք այնքան մեղմ բախեցիք  
 Եւ դուք այնքան մեղմ բախեցիք, բախեցիք մեղմ դուք այնքան,  
 Որ լոկ բուաց, թէ լսեցի»: Իսկոյն դուռս բացի լայն՝  
 Խաւա՛ր, ուրիշ ո՛չ մի բան:

Ու խաւարին աչքերս յառած՝ մնացի լուռ ու շուարած,  
 Անրջելով երագներ, որ չէլս երագել ոչ ոք մինչ այն.  
 Լուսփնն էր սակայն խորունկ, չկար շուրջըս ձեռ ու շուռկ,  
 Արտաբերուող միակ բառը «Լեհոք» բառն էր, որ անձայն  
 Ես հծծեցի: «Լեհո՛ք» կրկնեց արնագանգը անխափան...  
 Լոկ այս, ուրիշ ո՛չ մի բան:

Ես դառնալով դէպի սենեակ, բացերի մէջ հոգիս համակ՝  
 Մի նախկինից ուժգին հարուած լսեցի ես կրկին անգամ:  
 «Վստահօրէն, վստահօրէն ինչ-որ բան է մաղերիս դէմ,  
 Տեսնե՛մ՝ ի՞նչ է, — ասի ես ինձ, — պարզե՛մ խորհուրդն այս դաժան:  
 Հո՛վն է, ուրիշ ո՛չ մի բան»:

Ու հրեցի վեղկերն ուժով, եւ աղմկոտ մի թռիչքով  
 Մի փառասեղ Ագուա մտաւ սուրբ օրերից վաղնջական:  
 Խոնավուքին չարեց բնաւ, չվարանեց ու կանգ չառաւ,  
 Բայց սեմեակիս գրան վրայ թառեց տեսնով տիրական,  
 Ճիշդ Պալլասի կիսարձանի վրայ թառեց տիրական,  
 Թառե՛ց, ուրիշ ո՛չ մի բան:

Իմ խոհանքը ցրեց այնժամ այդ թռչունը երեւոսեան,  
 Իր կեցումէքը վայելչասես, կերպարանքը խիստ ու խոլոր:  
 «Թէն կատարդ է անկետաւոր, սակայն, գիտե՛մ, ստոր չես դու,  
 Գիշերային ավաւնեցնեցից հետո յաճող ուղեւոր».  
 Գժոխային այդ ավերին ի՞նչ է անուկ ազնուոր»:  
 Ագուան սասց՝ «նե՛վըրմոր»:

Ես զարմացայ, որ այդ տխրոյթ թռչունն իսկոյն ինձ ըմբռնեց,  
 Պատասխանն իր թէն մի քիչ անիմաստ էր ու անսովոր  
 Քանգի պէտք է դուք հասկանա՛ք, բէ մարդկային ո՛չ մի էակ  
 Իր սեմեակի գրան վրայ գեռ չի տեսել թեւաւոր,  
 Անասուն կամ թռչուն, թառած կիսարձանի վրայ, որ  
 Կոչուի այսպէս՝ «նե՛վըրմոր»:

Բայց Ագուաը, հանգիստ նստած՝ այդ մէկ բառը միայն սասց,  
 Կարծես թէ նա իր ողջ հոգին ձուլած լինէր բառում այդ խոր:  
 Զարտասանեց էլ ո՛չ մի բան ու չշարժեց փետուր անգամ,  
 Մինչեւ ասի. «Արդէն թռան ընկերներն իմ բիւրաւոր,  
 Վաղր նա էլ յոյսերիս պէս ինձ կը թողնի մեհաւոր»:  
 Թռչունն սասց՝ «նե՛վըրմոր»:

Ես, սարսափած իմաստալից բառով խզուած լուսքիւնից՝  
 «Անշուշտ, — ասի, — այս բառն է լուկ որպէս լեզու, ձիրք ու շնորհ,  
 Ժառանգել նա մի ուսուցչից, որի բախտը անկարեկից  
 Հաղածել է նրան, մինչեւ որ երգերն իր սգաւոր,  
 Մինչեւ յոյսի երգերն իր մուք ունեցել են սրամաթոր  
 Այս յանգերգը՝ «նե՛վըրմոր»:

Բայց Ագուար կրկին անգամ ցրեց թախիծն իմ հոգեկան:  
 Դրան առջեւ ու Պալլասի ես հրեցի մի թիկնաբոս  
 Եւ թաղուելով թաւշում նրա, սկսեցի կիսել իրար  
 Երգակերբս, միշտ խորհելով, թէ ուրուային ու խոշոր  
 Այս թռչունը ի՞նչ է ուզում ասել այսպէս անաւոր  
 Կոնչելով՝ «նե՛վըրմոր»:

Այս բառն էր մեկնել փորձում սեւ թռչունի լուս սեւեռում,  
 Որի աչքերը հրեղէն մրրկում էին հոգիս մոլոր,  
 Փորձում էի դեռ անելին, խոնջ գլուխս լեւծ նրբին  
 Բարձրի մէջ, ուր կարում էր լամպարի լոյսը բոլոր,  
 Նուրբ բարձրի, որոնց վրայ չի սահելու էլ աղուր  
 Գլուխն իր, ա՛հ, «նե՛վրբմոր» :

Ու խտացաւ օդը անտես մի բարվառի բոյրից կարծես,  
 Որ միջոցում սերովբէնէր հոնում էին կշռութաւոր .  
 «Հրմուխ՛ր, դժբա՛լսա, — գոռացի ես, — քո սատուածն է ուղարկում ինձ  
 Այս դարձարի մոռացօճիք սրտիդ համար վիրաւոր :  
 Խմի՛ր, խմի՛ր ու հասկացի՛ր, քէ չկայ ո՛չ մի Լեւոր» :  
 Ագոռան սասց՝ «նե՛վրբմոր» :

«Դո՛ւ, մարգարէ, դեւ կամ թռչուն, մարգարէ կամ ոգի տժգոյն,  
 Թէ փարձիչն է ուղարկում ինձ կամ մրրիկն է փսխել մի օր  
 Այս անբեղալ, բայց աննուան հողի վրայ կախարդըւած,  
 Տունն այս վախով միշտ յանախումա՛ւ՝ աւա՛, խնդրո՛ւմ եմ անգոր :  
 Կա՞յ, արդեօք, կա՞յ մի բույսսան : Ասա՛, խնդրո՛ւմ եմ անգոր» :  
 Ագոռան սասց՝ «նե՛վրբմոր» :

«Դո՛ւ, մարգարէ, դեւ կամ թռչուն, մարգարէ կամ ոգի տժգոյն,  
 Ի սէր անհուն այս երկնքի, ի սէր Տիրոջ մեր երկնաւոր  
 Ասա՛ սրտին այս վշտագին, քէ եղեմի մէջ նա կրկին  
 Պիտի գրկի՞ այն աղջկան, որի անունն է Լեւոր,  
 Այն սլայծառ ու սուրբ աղջկան, որի անունն է Լեւոր» :  
 Ագոռան սասց՝ «նե՛վրբմոր» :

«Թող հրածե՛շտ տանք այդ բառով, — գոռացի ես վեր յատկելով, —  
 Վերադարձի՛ր մրրիկի մէջ ու գեհեմի ափերը չոր .  
 Ո՛չ մի փեռուր ինձ չթողնես քո կեղծիքի վկայ որպէս,  
 Թո՛ղ կիսանդրին դրանս վրայ, առանձնուք իւնքս՝ անդորր,  
 Հանի՛ր կտուցդ իմ սրտից, սա՛ր տեսիլըդ անաւոր» :  
 Ագոռան սասց՝ «նե՛վրբմոր» :

Եւ Ագոռը միշտ աներեր նստած է դեռ, նստած է դեռ  
 Ճիշդ իմ դրան վրայ դրուած կիսարձանին՝ գիշեր ու գօր,  
 Եւ աչքերն իր երագաւոյն դեւի աչքեր են սեւեռուն,  
 Եւ յատակին լամպի լոյսը նետում է շուքն իր խոժոռ,  
 Եւ իմ հոգին այդ սեւ շուքի շրջանակից մեղմօրօր  
 Զի՛ ելնելու «նե՛վրբմոր»...

Թարգմանութիւնը՝  
 ԱՅՐԱՀԱՄ ԱԼԻԳԵԱՆԻ



Edgar Allan Poe

## The Raven

Once upon a midnight dreary, while I pondered, weak and weary,  
Over many a quaint and curious volume of forgotten lore —  
While I nodded, nearly napping, suddenly there came a tapping,  
As of some one gently rapping, rapping at my chamber door.  
“‘T is some visitor,” I muttered, “tapping at my chamber door —  
Only this and nothing more.”

Ah, distinctly I remember it was in the bleak December;  
And each separate dying ember wrought its ghost upon the floor.  
Eagerly I wished the morrow; — vainly I had sought to borrow  
From my books surcease of sorrow — sorrow for the lost Lenore —  
For the rare and radiant maiden whom the angels name Lenore —  
Nameless *here* for evermore.

And the silken, sad, uncertain rustling of each purple curtain  
Thrilled me — filled me with fantastic terrors never felt before;  
So that now, to still the beating of my heart, I stood repeating,  
“‘T is some visitor entreating entrance at my chamber door —  
Some late visitor entreating entrance at my chamber door; —  
This it is and nothing more.”

Presently my soul grew stronger; hesitating then no longer,  
“Sir,” said I, “or Madam, truly your forgiveness I implore;  
But the fact is I was napping, and so gently you came rapping,  
And so faintly you came tapping, tapping at my chamber door,  
That I scarce was sure I heard you” — here I opened the door; —  
Darkness there and nothing more.

Deep into that darkness peering, long I stood there wondering, fearing,  
Doubting, dreaming dreams no mortal ever dared to dream before;  
But the silence was unbroken, and the stillness gave no token,  
And the only word there spoken was the whispered word, “Lenore?”  
This I whispered, and an echo murmured back the word “Lenore!”  
Merely this and nothing more.

Back into the chamber turning, all my soul within me burning,  
Soon again I heard a tapping somewhat louder than before.  
“Surely,” said I, “surely that is something at my window lattice;  
Let me see, then, what thereat is, and this mystery explore —  
Let my heart be still a moment and this mystery explore; —  
‘T is the wind and nothing more!”

## The Raven

Open here I flung the shutter, when, with many a flirt and flutter,  
 In there stepped a stately Raven of the saintly days of yore;  
 Not the least obeisance made he; not a minute stopped or stayed he;  
 But, with mien of lord or lady, perched above my chamber door —  
 Perched upon a bust of Pallas just above my chamber door —  
 Perched, and sat, and nothing more.

Then this ebony bird beguiling my sad fancy into smiling,  
 By the grave and stern decorum of the countenance it wore,  
 "Though thy crest be shorn and shaven, thou," I said, "art sure no craven,  
 Ghastly grim and ancient Raven wandering from the Nightly shore —  
 Tell me what thy lordly name is on the Night's Plutonian shore!"  
 Quoth the Raven, "Nevermore."

Much I marvelled this ungainly fowl to hear discourse so plainly,  
 Though its answer little meaning — little relevancy bore;  
 For we cannot help agreeing that no living human being  
 Ever yet was blessed with seeing bird above his chamber door —  
 Bird or beast upon the sculptured bust above his chamber door,  
 With such name as "Nevermore."

But the Raven, sitting lonely on the placid bust, spoke only  
 That one word, as if his soul in that one word he did outpour.  
 Nothing farther then he uttered — not a feather then he fluttered —  
 Till I scarcely more than muttered, "Other friends have flown before —  
 On the morrow *he* will leave me, as my Hopes have flown before."  
 Then the bird said, "Nevermore."<sup>3</sup>

Startled at the stillness broken by reply so aptly spoken,  
 "Doubtless," said I, "what it utters is its only stock and store  
 Caught from some unhappy master whom unmerciful Disaster  
 Followed fast and followed faster till his songs one burden bore —  
 Till the dirges of his Hope that melancholy burden bore  
 Of 'Never — nevermore.'"

But the Raven still beguiling my sad fancy into smiling,  
 Straight I wheeled a cushioned seat in front of bird and bust and door;  
 Then, upon the velvet sinking, I betook myself to linking  
 Fancy unto fancy, thinking what this ominous bird of yore —  
 What this grim, ungainly, ghastly, gaunt, and ominous bird of yore  
 Meant in croaking "Nevermore."

This I sat engaged in guessing, but no syllable expressing  
 To the fowl whose fiery eyes now burned into my bosom's core;  
 This and more I sat divining, with my head at ease reclining

## Edgar Allan Poe

On the cushion's velvet lining that the lamp-light gloated o'er,  
But whose velvet-violet lining with the lamp-light gloating o'er,  
    *She* shall press, ah, nevermore!

Then, methought, the air grew denser, perfumed from an unseen censer  
Swung by seraphim whose foot-falls tinkled on the tufted floor.  
"Wretch," I cried, "thy God hath lent thee — by these angels he hath  
    sent thee

Respite — respite and nepenthe from thy memories of Lenore;  
Quaff, oh, quaff this kind nepenthe and forget this lost Lenore!"  
    Quoth the Raven, "Nevermore."

"Prophet!" said I, "thing of evil! — prophet still, if bird or devil! —  
Whether Tempter sent, or whether tempest tossed thee here ashore,  
Desolate yet all undaunted, on this desert land enchanted —  
On this home by Horror haunted — tell me truly, I implore —  
Is there — is there balm in Gilead? — tell me — tell me, I implore!"  
    Quoth the Raven, "Nevermore."

"Prophet!" said I, "thing of evil! — prophet still, if bird or devil!  
By that Heaven that bends above us — by that God we both adore —  
Tell this soul with sorrow laden if, within the distant Aidenn,  
It shall clasp a sainted maiden whom the angels name Lenore —  
Clasp a rare and radiant maiden whom the angels name Lenore."  
    Quoth the Raven, "Nevermore."

"Be that word our sign of parting, bird or fiend!" I shrieked, upstarting —  
"Get thee back into the tempest and the Night's Plutonian shore!  
Leave no black plume as a token of that lie thy soul hath spoken!  
Leave my loneliness unbroken! — quit the bust above my door!  
Take thy beak from out my heart, and take thy form from off my door!"  
    Quoth the Raven, "Nevermore."

And the Raven, never fitting, still is sitting, *still* is sitting  
On the pallid bust of Pallas just above my chamber door;  
And his eyes have all the seeming of a demon's that is dreaming,  
And the lamp-light o'er him streaming throws his shadow on the floor;  
And my soul from out that shadow that lies floating on the floor  
    Shall be lifted — nevermore!

(1845)

## Է Տ Կ Ա Ր Ա Լ Է Ն Փ Օ

## Ա Գ Ռ Ա Ի Ը

Կես զիշեր էր, մի սքամաշուբ, կշռում էի ես սքամաշուբ,  
Այժմ չիշուող ուսմունքների գեղ ու գողտրիկ շատ հասար —  
Մինչ գլխակոր գրերէ ննջում՝ յանկարծ տափ-տափ ձայն էր հնչում,  
Կարծես մէկն էր մեղմ դարնչում, դարնչում իմ խցկիս դուռ.  
Մըմնջեցի. « Այցեղու է դարնչում իմ խցկիս դուռ —  
Լսկ այս եւ էլ ո՛չ մի լուր»:

Ա՛խ, պարզ պահուած է իմ սքամա՛ Գեկտեմբերին էր ցուրտ, սքուում,  
Երբ մէն մի կայծ մեռնում, խլրտում՝ ստուեր էր ձգում ուրուացնոր:  
Վաղուան կարօտ էի հսկում, — ոչ մի հանգիստ էի զգում  
Իմ գլխերից, մինչդեռ սգում-սգո՛ւմ կորած այն Լընոր —  
Զնաշխարհիկ կոյս լուսեղէն հրեշտակներից կոչուած Լընոր —  
Յաւերժ՝ անկոչ աստանոր:

Մէն մի քախծոտ հիք ապըրշում վարագոյրի շփոք շրշում  
Յուզում էր եւ սուզում սրտիս մէջ անձանօք խօլ սարսուռ.  
Եւ, որ անցնի սրտիս քասումն, այժմ ես կանգնած էի ասում.  
«Այցող մէկն է խնդրում, սպասում մտնել ներս իմ խցկիս դուռ. —  
Ուշ այցող է խնդրում, սպասում մտնել ներս իմ խցկիս դուռ. —  
Այս է եւ էլ ոչ մի լուր»:

Խսկոյն հագիս առաւ խրախոյս, մեկնեց վարանքս էլ նախրախոյս,  
«Տէր կամ Տիկիմ», ասի, «Ննդրեմ խկապէս ինձ ներում տուր.  
Իրաւ, որ ես էի ննջում, երբ դու էիր մեղմ դարնչում,  
Հանդարտ տափ-տափ էիր հնչում, հնչում զէ իմ խցկիս դուռ.  
Վաստահ չէի, քէ ձայնդ առի», եւ լայն բացի խցկիս դուռ. —  
Մուքն էր եւ էլ ոչ մի լուր:

Մուքին գապտուկ մօտիկ յառած՝ շատ կանգնեցի վախով շուարած,  
Երբեք իշխեց մի մարդ կրել իմ կրած կասկածն ու ցնոր.  
Բայց լույս էր դեռ անխանգար, անդարբոյթն էլ աննշան կար.  
Այլ այնտեղ մի միայն ձայն կար, եւ այդ շնչիւնն էր «Լընոր»  
Եւ արձագանգն այս շշուկիս դարձրեց հնչիւնն այն «Լընոր»,  
Լսկ այս եւ էլ ոչ մի լուր:

Վերադարձայ նորից խուցս, հուր էր ելնում ողջ հոգուցքս,  
Տափ-տափ կրկին շուտ ձայն հնչեց, ասաջուանից էլ ժըխար,

«Անշուշտ», ասի, «Անշուշտ մի բան կայ դռնակիս ցանցի վրան,  
Դէ, քող նայիմ, տեսնեմ գրան, խուզեմ խորհուրդս այս խոր. —  
Թող մի վայրկեան սիրտս հանգիստ, խուզեմ խորհուրդս այս խոր, —  
Հողմն է եւ էլ ոչ մի լուր»:

Ապա ես բաց ձգեցի փեղկ, եւ ահա նախրեց ծեփծեփ ու մեղկ,  
Ու ներս բուռ մի վեհ Ագուաւ, սրբազնաշնորհ հիմաւոր:  
Նա չնչին իսկ յարգանք չարեց, վայրկեան դար ու դադար չատեց,  
Այլ գերբ՝ Տէր կամ Տիկին բառեց վերեւ. քան իմ խցկիս դուռ.  
Պալլասի մէկ կիսարձանին, վերեւ քան իմ խցկիս դուռ,  
Թառեց նստաւ. ոչ մի լուր:

Թոշունն երևոս խոկերս ժպտի փոխեց գուարբ սրտով  
Իւր երեսի վայելչութեամբ, իմաստալուրջ եւ խաղար. —  
«Կաւնում կատար ունիս իրա», ասի, «Անշուշտ ես դիմագրաւ,  
Ժախտ ու դաժան ծերուկ Ագուաւ, գիշերափից շրջմուրթ,  
Ասա՛, ի՞նչ է ազնիւ անուկ գիշերափիւն երկրաստոր».  
Ագուան ասեց. «Ոչ մի օր»:

Շատ շուարեցի, որ մի գույ հաւ խօսեց այդպէս յստակ ու լաւ,  
Թէ՛ եւ խօսքն հազիւ իմաստ ունէր, եւ հազիւ էր նահաւար.  
Քանզի պէտք է ընդունել նիշդ, որ մարդկային ոչ մի էակ  
Փաստ չունեցաւ տեսնել թոչնակ վերեւ. քան իւր խցկի դուռ,  
Թոչնակ կամ գրաստ կիսամորթի վրայ, վերեւ քան իւր խցկի դուռ,  
Այս անուկով. «Ոչ մի օր»:

Բայց Ագուաւը նստած մեկիկ եեզ արձանին՝ հանեց ձեկիկ —  
Այդ մէկ բար, կարծես հոգին այդ մէկ բառում քափեց ծոր,  
Էլ չհանեց քեթեւ իսկ ճայն. էլ ոչ երբեք քեւ շարժեց ան —  
Ես մնջեցի հազիւ, սակայն, «Այլ ընկերներս գնացին գոր,  
Վաղը նա էլ ինձ կը լքի, ինչպէս Յոյսերս գնացին գոր»:  
Թոշունն ասեց. «Ոչ մի օր»:

Այսպէս պատշամ խզում լոռյրն ինձ պատմանեց ցունց ու սարսոռք.  
«Անշուշտ», ասի, «Այդ բառն էր նյա արհեստ-պահեստը բոլոր,  
Որ նրան յանձնեց մի քուստ տէր, որին անգուր, դժուար վերքեր  
Խիստ լկեցին մինչ իւր երգեր եղած այսպէս յանկուրդ,  
Մինչ իւր Յոյսի մահերգը դարձած մաայլ յանկուրդ».  
Այսպէս. «երբեք, ոչ մի օր»:

Բայց Ագուաւը դեռ գուարբ սրտով ժպտեցնում էր հոգիս վրդով,  
Շատ բարձ-արթո դարձրի քոչնին, արձանին, գրան դիմաւոր,  
Ապա, բաշի մէջ քազուեցի, ցընորֆներովս շաղուեցի,  
Խորհուրդներովս գրաղուեցի, թէ չար թոշունն այս հիմաւոր,  
Թէ այլանդակ, տգեղ, տկար, դէգ թոշունն այս հիմաւոր  
Է՞ր է կոնչում. «Ոչ մի օր»:

Նստած այս միտքն էի անում, բայց բերնից խօսք չէի հանում  
 Հաւին, որի հուր աչքերը կուրծքս այրում էին խոր,  
 Մտքիցս անցաւ դեռ շատ բան խիստ, մինչ գլուխս դրած հանգիստ  
 Թաւիշերես բարձի վրայ նիստ, ուր լոյսն յառում էր խոլոր,  
 Որի թաւիշ մանիշ երեսն, աւր երբ յառի յոյս խոլոր՝  
 Նէ չի սեղմել ոչ մի օր:

Ապա կարծես խտացաւ օդն՝ առած անյայտ բուրվառից հոտ,  
 Որուն ճօճումէն սերովքէներ ոտնադօզանց մարգատորր.  
 «Եեզն», ապի, «Քո Աստուած Տէրը -- հրեշտակներիս յանձնեց դերը --  
 Լրնորայուշ քն վշտերը դարմանելու գեղ անդորր,  
 Ո՛հ, արբիր այս ազնիւ գեղըդ, մ'յիշե՛ր կորած այն Լընոր»:  
 Ագուան ասեց. «Ոչ մի օր»:

Ասի. «Գուշակ գու չարաբեւ -- էլի գուշակ, թռչուն կամ դեւ,  
 Արդեօք փորձողն ուզարկեց քեզ կամ ափ ընկար յորձօրօր,  
 Լճուած, սակայն միշտ աներկիւղ, ընկած երկիրս այս աւեր զիւղ --  
 Սարսափյաճանխ իմ այս մերկ նիւղ -- ասա, խնդրեմ, նի՞շդ է որ»:  
 Գաղապարտ բալասան կայ, ասա՛, խնդրեմ, նի՞շդ է որ»:  
 Ագուան ասեց. «Ոչ մի օր»:

Ասի. «Գուշակ դու չարաբեւ -- էլի գուշակ թռչուն կամ դեւ,  
 Ի սէր վերին այդ կամարի, ի սէր պաշտած մեր այն Հօր,  
 Ասա՛ հոգուս այս թախծալի, արդեօք դրախտում այն բազմալի  
 Կը գգուե՞մ սուրբ կոյս բազմալի, հրեշտակներից կոչուած Լընոր,  
 Ձընաշխարհիկ կոյս լուսեպէն, հրեշտակներից կոչուած Լընոր»:  
 Ագուան ասեց. «Ոչ մի օր»:

«Հրածեշտ յուշիկ թող լինի խօսքդ, թռչուն կամ դեւ» ճչացի ընդոստ,  
 Նարից դարձիր փոքորկի մէջ եւ գիշերափն երկրաստոր,  
 Մի՛ ձգեր մէկ թռչն քեւ՝ նշան հսգուդ խօսած սուգին դաժան,  
 Թող մեհուրքեանս հետ անբաժան, թող կիսանդրին վեր իմ դուռ,  
 Կըտուցդ հանիր սրախս մէջից, եւ ինքդ էլ թող շէմքս ու գուռ»:  
 Ագուան ասեց. «Ոչ մի օր»:

Ագուան անհախար է, չի գնում, նստած մնում է, դեռ մնում  
 Պալլասի բազմոյն արձանին, վերեւ քան իմ խցկիս դուռ,  
 Նրա աչքերի արբողջ ձեւը երազուն այն ունի գեւը,  
 Եւ լամբարի լոյս վերելը նրա շուքն է, որ ծփում է գետնասոր,  
 Եւ իմ հոգին վեր այդ շուքից, որ ծփում է գետնասոր՝  
 Ձի բարձրանայ -- ոչ մի օր:

Անգլերէնէ թարգմանեց  
 ՓՐՈՓ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Բ. Ք Է Պ Ա Պ Ճ Ե Ա Ն

ՃԱՆԱՊԱՐՅԻՆ ՎՐԱՅ

«Բազիմ»ի խմբագրությունն արամադրությունն առկա շարք մը արձակ գրություններ գրած երեսասարկ մը՝ Բաֆֆի Քէյպպեան, որ ծնած է 1945ին, Պոլիս, ուր Պեղճեան նախակրթարանը ուսրակէ ետք, կը յաճախէ սեղաթն դերմանուկան երկրորդական վարժարանը, ապա՝ կը մեկնի Գերմանիա եւ գերման կառավարությունն կըրթաթուղտի կը Տեռեւի Կէօթիներն համալսարանի քիմիական ճիւղին:

Այժմ կ'ապրի Գերմանիա եւ նոյն համալսարանին մէջ կ'աւանդէ քիմիագիտութիւն եւ բնադիտութիւն:

Գերմաներէնի թարգմանած է Ծահնուրի պատմութեան քերտը, որոնցմէ քանի մը հասը հարգուած են Պրեմէնի ձայնասիւնն:

Մէկ տարեէ ի վեր կ'աշխատի գերման դրական հանդէսի մը՝ հոյ գրականութեան ու պատմութեան նուիրուած բացառիկ թիւի մը վրայ:

Աշխատակցած է Պարսոյ «Մարմարա»ի դրական կէնրուն:

«Բազիմ»ի մէջ պարբերաբար լոյս պիտի բնծայենք իր գրութիւնները:



Ձէի գիտեր, թէ ո՞ր օգակայանը կը գտնուիմ: Աւելի ճիշդը՝ գիտէի, բայց չէի զղար: Վաղուց հրատարած էի այլ պըրպըրատմաներէն: Ատենին Հաւմի օգակայանին մէջ յուսացած էի յաւիտենական քաղաքին բնորոշ մէկ մասը գտնել մէկ մտանիկը: Ատենին ԾրանքՊուրթի օգակայանին մէջ գտնուած էի այդ քաղաքին համն ու հտար: Փնտասած էի յոյսով մը: Բայց, ինչպէս բաի, ատենին էր այդ: Հիմա գիտեմ, թէ ինչպէս է օգակայանը, գիտեմ, թէ ինչպէս պէտք է ըլլայ ան: Ինծի համար ԾրանքՊուրթի, Հաւմի եւ միւս բոլոր օգակայանները իրարմէ կը ստորերին մ'յնքան, որքան կրնան նարինջները ստորերիլ իրարմէ:

Անանկ որ, չեմ գիտեր, թէ ո՞ր օգակայանը կը գտնուիմ: Աւելի ճիշդը՝ գիտեմ, բայց չեմ զգար: Նոյնիսկ բարձրախօսէն եկող եւ տեղական հնչիւնով արտասանուած անպիւրէն տեղեկութիւնները

կը մասնեն ուր գտնուիր: Պարզապէս կ'անտեսեմ: Կը յաջողիմ անցնիլ ստիկաններուն զէնք եւ պայթուցիկ վնասող մասներէն եւ նոյնիսկ ազատ խանութներէ, որոնց ծախսած խմիչքները, ծխախոտները պայթելու աստիճան կը լեցնեն ինծի ողն յաջորդ օգտնաւին սպասող եւ քսիս եւ կամ գիմացս նստող մարդոց պայտակները:

Գլուխս կը շարժեմ գէպի աջ եւ ձախ: Գէպի առջեւ եւ ետեւ: Կը սկսի իմ սպասելու ժամանակը արժէքաւորող յատուցն ժամանցը: Գաւազիկ շարժիւններու ազգութիւնը: Ամէն արհեստ ունի իր գաղտնիքը, նաեւ այս մէկը: Մորթի գոյնը, հագասար, պիսը, մօրաւքը, գոյնը եւ ձեւը բնորոշող յատկանիշներ են: Խնդիրը կը բարդանայ, երբ գիմացիւնս ունի սովորական տեսք, այսինքն՝ սովորական երեսպայտի, ասիացիի եւ կամ ամերիկացիի արտաքին: Ո՞ր երկրէն կու գայ: Կը

ստիպում ուշադրութիւն բնել իր կարգացած թերթին, շարժում ձեւերսն եւ, նս՛նիսկ, իր խօսակցութեան, հասկնալ ջոնաւով, թէ բերնէն ելած բառերը ո՞ր լեզուին կը պատկանին:

Պէտք է խոստովանիմ, որ այս որսորդական հաճոյքիս ամենաչնչին հաւածն իսկ շունեցոյ, երբ օգտկոյսնի դըրեթէ պարտոյ սրճարանէն ներս մտան երկու անձեր, որոնց աղբուրթիւնը ինծի ոչ մէկ դարանիք չէր ներկայացներ: Երկու թուրք բանուարներ էին. մէկը՝ աւելի ունեւոր: Աւելի ետքը յայտնի եղաւ, որ ան քաղաքին մէջ հողի ու ասնի աէր էր դարձած, միւսը՝ աւելի համեստ արտաքինով մէկը: Ես կը իմէի իտարական սուրճ, երբ անոնք սկսած էին բմպել դարձնուր: Ունեւորը գու ձայնով մը սկսաւ պատմել եւ ասնն մը ետք ըսաւ.

— Կենա՛ց, աղբէր ճան, կենա՛ց: Սայսները, որ չենք սիրեր, ի՞նչ ժարդեա մարդիկ են սեղան շտկելու մէջ: Վերջերս իրենց մէկ ճաշկերոյթին կանչած էին: Գացի, գացի եա՛, դուրսը այդքան լաւ պատրաստուած սեղան ո՞ւր պիտի կրնաս դանել, աղբէր ճան: Անշուշտ գիտես, մեր իսթանպուլի ամենաճարպիկ, յաճախողը իսթին գոհացնող սպասարները միշտ յայտերը եղած են: Մերիններուն ձեռքէն սոյքան բան չի գար:

Աղբէր ճանը դուրսը կը ճօճէր հաստատական շեշտով: Արդեօք ա՞ն ալ ներկայ գանաւ իր այդ ճաշկերոյթին:

Իրմացինը գու եւ բարձրաձայն կը խօսէր, պէտք է որ համակարծիք ըլլար: Ես բնաւ չեմ տխորժած պրտաւով խօսող մարդէ, ինքզինք միայն ձայնի ուժով պարտապարտ մարդէ: Բայց նորէն բաներ մը աննկու պատրուակով տեղէն ելայ եւ գացի սրճարան, միշտ անցնելով անոնց քովէն: Գուշակելիք բան մը չկար, ուր աեղէն եկած ըլլային յայտնի էր, ըտրւած չէի այդ տեսակէտով: Ամէն ինչ յայտնի էր եւ պարզ: Բայց նորէն կ'անցնէի իրենց քովէն, ծանօթանալու, գերածանօթանալու համար այն հողին հետ, որ իմ ծննդավայրը եղած էր եւ երթալէն իր ծանրութիւնը կը դնէր իմ վրայ: Ան կը մօտեցնէր զիս նոյնիսկ այն անձին, որ ոչ

մէկ կողմ ունէր ինծի հետ, բացի անկէ՛ որ կու գար իմ ծննդավայրէն: Կարծեմ այն ասնն միայն հաւակցայ, որ իսկողնս կ'երթամ, պիտի երթամ, շուտով պիտի հասնիմ Պուլլս:

Յուզուեցա՞մ:

Ձեմ գիտեր:

Գիտեմ միայն, որ սիրտս բարտխել սկսաւ: Աւելի ճիշդը՝ հարուածները լսելի դարձան:

Աղբէր ճանը գեռ դուրսը կը ճօճէր, երբ ես սրճարանէն հեռացայ:

Երիտասարդներ, տարեցներ, աշխատաւորներ. բոլորս կը սպասենք մեզ Պուլլս ասննիք օգանաւին: Այլիկ մը հարցաթերթիկով ապաստ խանութէն գմօմ ընողներուն հարցումներ կ'ուղղէր.

— Մի՛շտ գնում կ'ընէք այս խանութներէն:

— Ո՞ր էրերը կը նախընտրէք:

— Ինչո՞ւ կը դնէք, ի՞նչ է ձեր նըպրտակը: Նուրե՞լ:

Այս հարցումներէն ոչ մէկը կ'ուղղէր ինծի: Իմ ծրարները անտեսանելի էին, թաքուն: Հագիս երկու տարեկան տղայ մը կը քուէր: Քաղելու եւ վաղելու միջեւ շարժումներ կ'ընէր, իրանը դէպի առջեւ ծռած, անճարակ: Ասնն մը թեւը բարձրացուց եւ ահաւոր ճիղով մը դեւտին շարտեց գնդակը: Գլտրեցաւ գնաց գնդակը եւ ետեւէն ալ պատիկը, քայլելու եւ վաղելու միջեւ շարժումներ ընելով: Գետին ինկաւ: Լալու եւ խնդալու միջեւ ձայներ հանեց: Եւ այս կերպով ծնաւ յուշ մը յառաջիկային համար: Այդ յուշը իրեն պիտի պատմէ կա՛մ մայրը, կա՛մ հայրը եւ կա՛մ այդ բազմահազար քանթիկներէն մէկը: «Գիտե՞ս, երբ գնդակով մը կը խողայիք, գետին ինկար եւ բնաւ չլացիր: Աղբի՛ս, քաջ աղայ»:

Գու ձայնը նորէն հոս էր: Այս անգամ կը խօսէր իր ասնէն, իր զուտկնեքէն: Ձայնը աւելի ուժով կ'եւէր, ազմուկը շտացած էր: Անոր կը խոսնուէր կիներուն խօսակցութիւնը՝ նոյն յեղուով: Երկու իտարայիններ կը քայլէին վերէն վար, մարէն վեր, ձեռքի եւ ոտքի ալլաբան շարժումներով: Կը խօսէին իտալերէն, բայց կը շարժէին մեր հասկցած



չեղումով : Թարգմանութեան պէտք չկար : Միայն չհասկեցայ, թէ ինչո՞ւ կը խօսին : Շարժումները բաւարար չէին :

Օղանաւին մէջ ամէն մարդ կընար նստիլ մօտս, բայց դռն ձայնով անձէն : Եկաւ ան նստաւ : Բայց լուս էր, յոգնած պէտք է ըլլար : Քովը աղբէր ճանը չկար : Ան անանկ կը կարծէր : Քիչ մը ետք քունը տարաւ :

\*\*

— Նայեցէ՛ք, — պուռայի, — նայեցէ՛ք, Սեղա թանթիկին օղանաւը կը մեկնի կոր :

Պատուակներուն աղմուկը կը խառնուէր ժէքերուն աղմուկին :

— Ա՛յ, — բոնի, — դայտը չհայ, եհող կայ : Դուն ես եկած, չե՞ս ականեր :

Օղակայանէն տուն տանող ճամբան աւելի երկար եւ աւելի տարբեր թուեցաւ ինծի : Ականջներուս մէջ դեռ կը հնչէր պատուակներուն եւ ժէքերուն աղմուկը : Հոս արեւ կար, հոս կային տուներ, որոնք ասեմին չհային : Կը փնտռէի դաշտերը, ծով ամուղ դաշտերը : Բայց ասանք ծածկուած էին բազմաթիւ տուներով : Մովուն գոյնը միայն կարելի էր կռահել :

Տուն հասանք : Աչքերս անմարտողութենէն կը տառապէին : Ժամանումէս ի վեր տեսած էի շատ մը տեղացիներ եւ տուներ, փողոցներ, տեսած էի բնութիւնը : Չեմ գիտեր ինչու, բայց այն տղաւորութիւնը անէի, որ տեսիլներ կը մընային անմարտ, կը թուէին խորթ եւ օտար : Եւ երբ մեր տունը պտրտեցայ, տեսնելով այն հին-նոր սենեակները, բողբոսակցի դանոնք ուղեղիս մէջ դոյալութիւն անեցող խոհալական տեսիլներուն հետ : Բաղդաստեցի եւ դաայ, աւելի ճիշդը՝ ուղեղիս աչքերը դաան, տարբերութիւններ տեսածիս եւ խոհալականին միջեւ, զանոնք վրայ վրայի գնելով : Ամէն ինչ պարզուեցաւ եւ ես միշտ պղպի երկու իրերու դոյալութիւնը. այն՝ որ կար հոս, եւ այն՝ որ ներկայ էր իմ մէջ : Քանի մը օր տեսց այս վիճակը : Ետքը, ուղեղս յոգնած՝ հրաժարեցաւ աշ-

խասանքէն : Մնաց միայն տեսածս : Կարծեցի այդ կերպով իրականութեան վարժուած ըլլալ :

Եթէ չեմ սխալիւր, տաք օր մը առաջին տեղամ հանդիպեցայ իրեն : Հանրակատարով քաղաք կ'երթայի : Ելեկարակառնութեան խզում կար եւ անշուշտ ոչ մէկ զնայց : Կ'անցնէինք Պարզիւղի նեղ վաղայներէն : Պատերը լեցուն էին յեղափոխական եւ հակաշեղափոխական կոչերով : Փրկութիւնը մօտ օրէն պիտի գար, Մէհմետին վրէժը բնկերները պիտի լուծէին : Ան պարտաւ սեղը չէր մեռած : Կարմիրները պէտք է ջարջախուէին, իսկ միւսները հետու վայրեր երթալ կ'ազէին, վայրեր, որոնք անձանթ էին ինծի : Բայց ե՞րբ պիտի երթային : Ջախջախեց տա՞ք, թէ ետք :

Մարդիկ, մտաւաճառի մը խնուածին տաջեւ պոչ բռնած՝ իրենց հերթին կը սպասէին : Անպարճներու խումբեր կ'ը կենացին կայարանին աջեւի հըրտարարի եւ ալուր : Սեղախոխական եւ հակաշեղափոխական կուշերով լեցուն պատերը շարունակաբար կը տպանցէին : Վրէժը լուծուելիք գահերուն թիւը երթալէն կը շտամար : Մէհմետին կ'ընկերանար Բաշիտ, եւ անոր՝ Գուստ, եւայլն : Բուրին վրէժը պիտի լուծուէր : Այդպէս կ'ըսէին անանուն գրողները :

— Նայէ՛ք, տե՛ս խայտառակութիւնը, — գոչեց մէկը :

Քովս նստողն էր : Իրմէ գաս ոչ ոք բան մը կ'ըսէր : Յայթանդամ տղայ մը : Տաս ասրի տաաջուան տարազով եւ ճըմեռուան փերարկուով : Կաւ մը պէտք է գրանէր : Չասէն՝ ծանր պայտասակ մը, պարսպականի պայտասակ մը :

— Նայէ՛ք, տե՛ս խայտառակութիւնը, — կրկնեց :

— Ինչո՞ւ, — բոնի, — ի՞նչ է խայտառակութիւնը :

— Սա ծոյլերուն նայէ, — բուս, — եթէ մարդ աշխատիլ ուզէ՝ անշուշտ գործ մը կը գտնէ : Ասանք ծոյլ են : Յետոյ ի՞նչ են այդ պատերուն վրայ գրուածները : Մարդ յեղափոխութիւն կ'ընէ՞ :

Ջանացի բացատրել իրեն, թէ անպարճութիւնը միմիայն աշխատիլ չուղեիէ

առաջ չի գար : Մեզի նայ՛ող անգամ չկար :  
Ես աւելի գիտնալ կ'ուզէի , թէ ի՞նչ կ'ընէ  
այս ապրուն ձմեռուան հաղուստով եւ  
զպրոցականի պաշտասակով :

— Իդրոց կ'երթամ , զպրոցական եմ ,  
— ըսաւ :

— Բայց , — ըսի , — հիմա ամառ է ,  
զպրոցները այս շրջանին փակ են :

— Նայէ՛ , ահ'ս խոյտառակութիւնը ,  
— կրկնեց :

Իրմէ գտաւ ոչ սք բան մը կ'ըսէր :  
Նոյնիսկ անգործները :

Բանի մը օր եաք , նորէն հանդիպեցայ  
յազթանդամ ազուն : Ելեկարական  
գնացքով քաղաք կ'երթայի : Բերնէ բե-  
րան լեցուն էր գնացքը : Ծարձկններս եւ  
ես սյնքան իրարու սեղմուած էինք , որ  
մեզի նոյնիսկ քրանելիք տեղ չէր մնա-  
ցած : Ելեկարական խղամբ հետեւանքով՝  
գնացքը յաճախ կանգ կ'առնէր : Ճամ-  
բորդները շափազանց տաքէն արդէն նեղ-  
ւած , սկսած էին ջղայնանալ :

— Մեզի ուզածնին կ'ընեն , կարծես  
մենք էլ ենք , — կ'ըսէին ոմանք :

Այս բալարէն միայն մէկ հոգի չէր  
սպողեր . յազթանդամ ազուն : Իր ձմեռ-  
ուան հաղուստը վրան , զպրոցական պա-  
շտակը սաքերուն միջեւ դեռեղած՝ կը  
նստէր : Առջեւը զիրք մը բացած գաս կը  
սերտէր : Առանց իմ հարցումիս սպասե-  
լու :

— Առտուն կանուխ զպրոց գացած  
ատենս միշտ դաս կը սորվիմ , — ըսաւ  
ժպտելով , — շատ խօսելիք ժամանակ  
չունիմ :

Անիմաստ նկատեցի իրեն յիշեցնել ,  
թէ ժամը 9:30 էր եւ եզանակը ամառ :  
Միայն ուղեցի գիտնալ իր կարծիքը ժո-  
ղովուրդին վարձուներին մտաին :

— Ժողովուրդը միշտ համբերատար  
է , — ըսաւ , — ձայն չի հաներ , ձայն  
պէտք չէ որ հանէ :

Ուղեցի բազմաբն : Պէտքն զգացի իրեն  
յիշեցնել , թէ կարծածին պէտ չէ : Համ-  
բերութիւնը շատանց հատած է : Բայց ա-  
ւելորդ նկատեցի այս գիտազութիւնը : Ան  
գաս կը սերտէր , ուրիշ ոչինչ կը նշմա-  
րէր :

Յաջորդ օրերուն , բարձիցո տեսայ

իմ բարեկամը , որքան ալ ուղեցի հե-  
տա կենայ իրմէ : Տան մը եւ կամ վայր  
մը լուսանկարելու պահուն՝ ան կը յարա-  
նուէր ատրեկիցներու խումբով մը եւ կը  
կանգնէր ճիշդ այդ տան առջեւ : Այդ  
խումբը , իրմէ գտաւ , կը բազկանար երկու  
հոգիէ , բայց նպատակս խմբանկար քա-  
շել չէր չէր : Ես կ'ուզէի լուսանկարել այդ  
տանը , որովհետեւ ան կը յիշեցնէր իմ  
մանկութիւնը : Բարեկամիս համարձա-  
կութիւնը կը ջղայնացնէր զիս :

Նայեցէս , երբ ես մեր տան պատշա-  
մը նստած՝ կը զխաչի անցնող-զարձոցը ,  
յաճախ կը տեսնէի նաեւ զինք՝ իր ըն-  
կերներուն հետ հեծիկ նստած : Կ'անցնէին  
տանց քարոյներուն զօղջիւղ , առանց  
կառքերուն գարնուելու , կարծես փոզցը  
պարտոյ ըլլար : Ելելովուրդը ուրիշ փոզոց  
չունէ՞ր , որ միշտ մեր տան առջեւէն  
կ'անցնէին :

Յազթանդամ ազունէն շատ քիչ ան-  
գամ կ'ըսայ սպասել ինքզինքս : Միայն  
անգամ մը , երբ փոզոցը 15-16 տարեկան  
ուզու մը հետ գնդակ կը խաղայի եւ կը  
զանուէինք բուռն պայքարի մէջ — ես  
կոյ մը նշանակելու վրայ էի — մրցակիցս  
յանկարձ կեցաւ , եւ՝

— Չիս չճանչցա՞ր , — հարցուց :

Առաջին եւ վերջին անգամ ըլլալով  
ուղեցի , որ յազթանդամ ազուն քօփս ըլ-  
լայ : Ան իր տաս տարուան հազուստով  
կրնար զիս փրկել անհաճոյ կացութենէն :

— Ոչ , — պատասխանեցի :

— Կրնամ երեւակայել , — ըսաւ զի-  
մացինս , — այդ խորհելով հետս բերի ,  
— շարունակեց եւ երկարեց զպրոցական  
չրջանի խմբանկար մը , ցայց առաւ 15-16  
տարեկան ուղայ մը , որուն հետ քիչ ա-  
ռաջ գնդակ խաղացած էի :

— Ես եմ , Սարգիսը :

— Այո , — ըսի , — հիմա յիշեցի ,  
նայելով բարձրահասակ ու պեխաւոր  
մարդուն , որ , լուսանկարը ձեռքը՝ առ-  
ջես կանգնած էր :

Ո՛չ միայն իր տնունը զաղանթքի մը  
պէս սրահելը կը ջղայնացնէր զիս , այլեւ՝  
իւր կարծիքները , անտարբերութիւնը եւ  
յամառ պնդումները : Յաճախ կը պատաս-  
հէին այսպիսի բաներ : Երբեմն բարեկամ-

ներ կա գոյին այցելութեան: Բարեկամներ, որոնք յազմանդամ ազան սէս հետան պաշտող սուսքերուն պաշտումները կամ չէին ընկր եւ կամ ընկր չէին սպեր:

— Երկրաչարժի նշան է, անոր համար է, որ ամէն ինչ կը շարժի, — կ'ըսէր յազմանդամ ազան:

Մեր հիւրերուն մէկ մասը գոնէ խուլ չէր, որովհետեւ անոնք կը խօսէին վարանսա նախածքներով եւ ես մերթ կ'իմանայի «գազի» բառը: Իսկ միւսները արտա-գուարթ կը խօսէին:

— Ինչի՞ մասին կը խօսին, — հարցուցի յազմանդամ ազան:

— Գործերը լաւ կ'երթան, — պատասխանեց:

— Ի՞նչ տեսակ դործեր են:

— Շատ պարզ, — ըսաւ, — սա դիմացը նստալը իր ազջկան խօսքկապը բրու, անկուր ազայ մը դանր են, առկ լաւը չի գանուիր: Իսկ միւսին ազան նըշանուեցաւ յայանի բնասանիքի մը ազջկան հետ: Լաւ չէ՞ տարիկ: Մէկը խօսքկապին տարիւ ոչնդիսի խնճոց մը տուաւ, որ շատեր կը խօսէին, թէ հարանիքին ի՞նչ պիտի ընէ: Մարդս կեանքին մէջ աչնդիսի յաճողութիւններ ունենալէ ետք՝ ուրիշ ի՞նչ կ'ուզէ:

Այս խօսակցութիւնները կ'ըլլային խաղի դադարին տակ: Բարեկամները իրրեւ թէ գիտ տեսնելու կու գային, բայց շուտով կը շահուէր թուղթի սեղանը եւ միայն այդ դադարներուն տակն կրնայինք բաներ մը խօսիլ: Միայն քաղաքավարութեան բերումով Գերմանիայ մասին հարցումներ կ'ուզէին ինծի: Յուսի ճիշդը՝ Գերմանիայ հանրախանութիւնուն մասին: Քանի մը անգամ ջանացած էի իրենց բացատրել, որ Գերմանիա կոչումներ կրկրը մեծ հանրախանութ մը չէ: Ընկան ընկերային տաղանդներ, անհասին մեկուսացումը, օտար աշխատուարներուն գծուարութիւնները, կնոջ ազատուրման հարցը, բնասանկան յարաբերութիւններու նոր սրակը եւ շատ մը արիւշ խնդիրներ: Բարեկամներս նման պահերու կը

ընկին եւ յետոյ վերտաին կ'ուզէին իրենց հարցումները հանրախանութիւնուն մասին:

Յազմանդամ ազան բայրէն կը տարբերէր միայն այն տեսակէտով, թէ ան հանրախանութիւնուն մասին չէր հարցըներ, այլ՝ միայն համարաբաններու մասին: Անէր միամիտ հաւատք մը ճշգրիտ պատասխաններու հանդէպ. գիտնական բոլոր կ'ուզէր, ֆիզիքոս: Ինծի համար տեղի հասնի էր համարաբաններու մասին խօսիլ, բայց իր անհասկնալի յամոտութիւնը, որ միայն մէկ նիւթ կը ճանշնար, մասնագութիւն կը ստանառէր ինծի: Պարզապէս կը վախնայի, որ յուստար պիտի ըլլայ: Ամէն պարագայի՝ ան ինծի առջի մօտ էր, ջան խաղամուրները: Կարծեմ մեր գանդալ գարգացող բարեկամութեան հիմքերէն մէկը այս իրականութիւնն էր: Քանի մը անգամ պարտեցայ հետը, անցնելով Եշիլլիզի ճամբաներէն: Անգամ մը նայինով գիմացի պարապ գաշար գայինք՝ ծառն թույ ուտելու համար: Վերադառնալու տակն գծուարութիւն ունեցայ, տեսայ, որ մեր շարժը տան մը շինումը կը եւ յազմանդամ ազան անհետացած: Ներսուցութիւն ինդրելով՝ գուրս ելայ տունէն:

Անկէ ետք բնաւ չտեսայ զինք այլևս: Միայն մեկնումի օրը, երբ պատասխաններուն աղմուկը կը խառնուէր ժէթէրու ազմուկին, յազմանդամ ազան վերտաին երեւցաւ: Քարացած երեսով ինծի մօտեցաւ եւ մէջս կորսուեցաւ:

— Նայեցէ՛ք, — պատասխ, — նայեցէ՛ք, Սեղա թանթիկին օղանգուր կու գայ կոր:

— Ո՛չ, — ըսին, — եկող չկայ, դացող կայ: Դա՛ն կ'երթաս կոր, չե՞ս տեսներ:

— Լաւ մը կապեցէք ապահովութեան գօտիները, — յիշեցուց հաքնար: Թրոսիչք պիտի տանենք:

Եւ պատասխաններուն եւ ժէթէրուն ազմուկը ականջիս մէջ սիտան թօրչք տանել:

## Ա Կ Ա Ն Ն Ե Ր

Զինարգելի վերացման  
 Եւ «Մարդկային իրաւանց»  
 Քննիչներ կը հոսին  
 Մեր տան կտուրէն,  
 Մինչ օրերը սողացող՝  
 Անփառունակ եւ հարէն,  
 Ճերմակ դրօշ եւ կրկին  
 Ու սրտի սուր խիբ :


Շուրջս պահուած ակահներու  
 Զերօ ժամերն յարակայ՝  
 Շուար անցնող աղջկայ  
 Ոտնահետքեր եւ անտես  
 Ու կը հնչեն անընդմէջ  
 Անգարայի օդին պէս...

## Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ Ն Ե Ր

Վտանգաւոր բիծ ինչպէս,  
 Անորոշին կ'արձակուին  
 Խաչածեւուող շփոթներ,  
 Ու կազկանոց աշուններ  
 Կը թօթափեն ձայնն իրենց :  
 Վհատ ու խեղճ բարդոյթներ՝  
 Պատաստ խոզով ծածկուած՝  
 Իրարու մէջ կը հետեւն  
 Անհիւրընկալ եամն իրենց  
 Եւ իրրեւ թէ շահեկան  
 Բաւեր՝ ցոյտան ուրի պէս՝  
 Կը փշրուին, գարնուելով գանկերու,  
 Անմեծութեան ախտերով կը տառապին  
 Շատ երգեր՝ միջակութեան բարձունքին  
 Եւ կիրքերու գուր վտանգներն կը հոսին  
 Դարուն լլկուած ստիւգներն ի վար,  
 Մինչ ամէն ժամ ու քիչ-քիչ  
 Կը մաւանայ ամէն մարդ,  
 Իրար վիզին սեղմելով  
 Քարոյութեան նիւթերով ծուլուած  
 սիրուն օղակներ :

Եւ կը փորձեմ այս ամէնուն ընդերքէն  
 Մեզ յայտնաբերել  
 Եւ արարել  
 (Ակամայ ծնած  
 Ու պարգապէս ողջ,  
 Ակամայ մեռնող  
 Եւ պարգապէս սպրիլ տենչացող)  
 Պիրկ ու շտապող բագում շարժումներ :

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ



Ընթացիկ տարւոյն Աղլիւ ՅՕին, Համազգայինի Անթիլիտտի մտնածիւղին նախածեւնութեամբ, քաղաքիս «Յակոբ Տէր Մէլքոնեան» Թատերասրահին մէջ սեպի ունեցաւ Հանդիսութիւն մը, և յարգանս Յակոբ Օշականի, մեծ դրապեաին մահուան Յօմեակին տօնով:

Անահիտ Օշական-Ոսկերիչեան, որ յառուկ հրաւերով եկած էր Ամմանէն, ներկայացուց Օշականը իր մտերմութեան մէջ, իսկ վերապէս Օշականի մասին խօսեցաւ Պ. Մնայեան, առաւելորար ծանրանալով «Մնացորդաց» վերաշարքին վրայ:

Մտորեւ կը ներկայացնենք խիստ շահեկան մտնրամտնութիւններ բովանդակող Անահիտ Ոսկերիչեանի խօսքը:

Ա. Ո Ս Կ Ե Ր Ի Չ Ե Ա Ն

ՕՇԱԿԱՆ՝ ԻՐ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ինձի համար անակնկալ մը եղաւ, երբ Անթիլիտտի Համազգայինի ներկայացուցիչները Ամման եկան ու խնդրեցին, որ խօսք տանեմ հօրս՝ Յակոբ Օշականի մահուան Յօմեակի այս Հանդիսութեան: Ընդունեցի՝ միւսաւ առաւելորար քայլական պարտաւարութեան պրացումէ: Բացի պարտական Հանդիսների, ու միութենական նեղ շրջանակներէ, առաջին տնդամն է, որ բեմ կը բարձ-

րանամ այսօրիսի դրասէր հանրութեան մը տաջիւ: Կը խնդրեմ հետեւաբար, որ որտէ բարեացակամութեամբ մը մտիկ ընէք զիս:

2.- Մի քարմանաք, եթէ բտեմ, որ այսօրուան այս Հանդիսութիւնը ինձի համար ալ բարիք մը եղաւ: Ինչպէս ձեզմէ շատերը, ես ալ Յակոբ Օշականը մաքիս մէջ մերածած էի սնմպալի մը: Հայրս ըլ-

լարով հանդերձ, կը պրտականէր այլևս հայաթեան, հայ ժողովուրդի մշակութային հարստութեանը մաս կը կտրէր: Վահէն եղած էր իր գրական ժառանգորդը եւ վրտահ եմ, որ երբ իմանայ, թէ ես այս հանդիսութեան խօսք ասած եմ, պիտի դարմանայ յանդընութեանս:

3.— Այս խօսքս պատրաստելու տախտակ, տախտակցայ կարգալ, մտածել, ամփոփել՝ վերլուծելու, հասկնալու համար, թէ ինչպիսի՞ մարդ մը եղած էր հայրս: Երիտասարդական հեքքոտ ասրիները ետիս, վերլուծեցի մեր մանկութեան թէ պատանութեան ասրիները եւ յիշատակները, որ ունեցանք հօրս հետ: Մայրս պատմեց գրուագիներ, զորս հայրս պատմած էր իրեն ժամանակին: Պօսեցուցի Եղիշէ պատրիարքը, որ հօրս մտերմը եղած էր Երուսաղէմի վերջին ասրիներուն: Օգտուեցայ անտիպ, ձեռագիր ինքնակենսագրական տեղաբանութիւններ, որոնք մեր մօտ կը գտնուին — «Կեանքիմ պէս» վերնագրով:

Ինչդէս կ'ըսեն, մէկ շունչով կարդայի «Ծակ-պտուկը», «Հանի Մուրատ»ը, «Հանի Ապուլլա»ն, «Խոնարհներ»ը, «Համապատկեր»էն քանի մը դրողներ — Զօհրապ-Վամսարական-Պարսկեան — ոչ թէ դրական դատում մը ընելու, այլ մտնելու համար Օշականի սպրած աշխարհէն ներս, պալու համար իր սպրումներուն խորքը — անշուշտ որքան կարելի է 30 տարուայ հեռաւորութենէ մը — ճանչնալու համար մարդ մը, որուն հետ կեանք մը սպրեցանք: Հասկընալու համար հայ գրողէս մը, որուն կեանքը գուղաղիպեցաւ իր ժողովուրդին ամենածանր սպանալներուն, ամէնէն արիւնտա որումներուն: Արուեստագէտ մը, որուն սիրտը դաշունահարուեցաւ 1914էն առաջ իր սրտակնական հոգեբուն վրայ եւ 1919էն ետք, Մփիւսքի այլամերթ ու օտար միջավայրին մէջ: Ինչ տակունտութիւն, ինչ կորով, ինչ աշխատանք, եւ ինչ հաւատք, որ Օշական կըրցաւ ո՛չ միայն իր հոգեկան թէ իմացական հաւասարակշռութիւնը պահել, այլ-

եւ արտադրել վէպեր — «Ծակ-պտուկ», «Մնացալպաց» — պատրաստել իր սեւունդին դրական, բարոյական թէ ընկերային համայնագրակերը, «Համապատկեր»ի կոթողային շարքը:

Մտածեցի այս բարբին մասին, ո՛չ միայն արամաբունութեամբ կամ հոգեբանական քեօրիներուն օրէնքներով, այլ մանաւանդ ջիգերով, որ ժառանգ ինկած է ինձի Օշականէն, հօրմէս: Գրտեցի իր կեանքն ու աշխարհը սփիււղահայտն տկնոցով, միաբով, զգայնութեամբ: Եւ Օշական մարդուն, հայուն ամբողջական կերպարը, զոր պիտի փորձեմ կենդանացնել, շնչաւորել զէպրերու, պատահարներու գրուագումովը եւ անձնական յիշատակներով, կը յուսամ, որ ձեր մըստածողութեան մէջ պիտի բանայ նոր ուղիներ եւ, մանաւանդ՝ երիտասարդներուն հոգիներէն ներս՝ նոր զգայնութիւններ եւ մտածումներ:

4.— Բոլոր անոնք, որ անձնական շփում ունեցած են Օշականի հետ, բոլորն ալ համաձայն են, թէ չափազանց պարզ, բարի, համեստ մարդ մըն էր: Այս յատկանիշները ամէնէն դիւրամատչելի, յայտնի անկողններ են սեւէ մէկը նկարագրելու համար: Ճիշդ է, Օշական կըրնար ժամերով նստիլ եւ, մանաւանդ՝ խօսեցնել պարզ մարդիկ: Կը յիշեմ, Երուսաղէմ կօշկահար բարեկամ մը ունէր, որուն խանութը կ'երթար տաւախաղաղու: Գրացի սրտը խանութպանները կը հաւաքուէին յաճախ խաղը դիտելու համար: Պատահեցաւ նոյնիսկ, որ հայրս մինչեւ Բեթլեհէմ գնաց, ամայնի տխրեան՝ արտը ծերունիի մը հետ մըլցելու:

Տան մէջ բոլորիս պատահածները կ'ուզէր գիտնալ ի՞նչ ըրինք, ո՞ր պայմար: Կը սիրէր խահանջին մէջ աշխատել, երբեմն ճաշ կ'եփէր ու ամանները կը լուար, քթին տակէն եղանակ մը մըսրլտուէին: Տան բոլոր գնումները ինքը կ'ընէր եւ օրուն կփուլէր ճաշը ինքը կ'սրռէր: Ուտեստեղէնի տողապիլ մէկ ձեռքին, կոթով աւելը միւս ուսին՝ պա-

տահած է, որ մանրէն տուն դար, անց-  
նելով հայկական խանութներու առջևէն,  
բարբառովին անտարբեր, թէ մարդիկ ինչ  
կրնային բռնել: Մեր մանկութեան շրջա-  
նին, ամէն Գարաթ օր ինք կը լողցնէր  
մեզ, յուսցիւ լաթերը կը հուսաքէր, կը  
ծալէր:

Իր ամէնօրեայ կեանքին մէջ չափա-  
զանց ծուծկալ եւ խնայտակար էր: Ունէր  
մէկ ձեռք գլխատ, որ մինչեւ չհինար,  
նորը չէր դնուեր: Նախ՝ քանի մը ամիս,  
տարտառ առանձին կը հագուէր, անկէ  
ետք՝ ժայէթը: Մէկ գոյգ կօշիկ հագաւ  
11 տարի, ըստ մօրս:

Մակայն երբ չափորժած անձերը ըլ-  
լային, ունայտամիտ հիւրեր, մէկ բառ  
չէր խօսեր ու երբեմն ալ սենեակը կը  
ձգէր ու դուրս կ'ելլէր, մայրս շուտաւ-  
մի մտանելով: Երբ մայրս հարցնէր, թէ  
մարդիկ ի՞նչ պիտի ըսեն, հայրս պարզօ-  
րէն կը պատասխանէր — ի՞նչ օգնէ թող  
ըսեն, կարեւորութիւն մի տար պէ կնիկ:

Ինչպէս որ սրտս, դարտուղի եղաւ  
իր պրակամութեան մէջ, նոյնպէս ալ ա-  
զատ ու անկաշկանդ՝ տան մէջ: Ինչպէս  
որ իր դորձին մէջ մնտոեց պարզ, իրաւ  
արժէքներն ու դեղեցկութիւնները, նոյն-  
պէս ալ իր ամէնօրեայ կեանքին մէջ:

Ծրինակ, բացարձակ ազատութիւն  
ունէինք, ոչ մէկ կաշկանդում մեր վը-  
րայ: Երբեք չեմ յիշեր, թէ հայրս դիտո-  
յութիւն մը ըրած բլրայ, բարկացած ըլ-  
լայ մեկի — ամօթ է, սխալ է, չի վայե-  
լիք ըսելով: Կր յիշեմ միայն մէկ ազատի  
մը, ան ալ անարդար: Կը յիշեմ հօրս  
խղճահարութիւնը — երզում բբաւ եւ  
անկէ ետք ձեռքը չգիրցուց մեր վրայ:

Երուսողէմի մէջ տաղին աղջիկը ե-  
զայ, որ գրտսնեակ աշխատեցայ, թե-  
նիս խաղացի, փոքր սխալաւ մը ստեղ-  
ծելով գազութիւն մէջ: Հայրս բնաւ կա-  
րեւորութիւն չտուաւ, ընդհակառակն,  
բաժարելեց թէ՛ աշխատելու եւ թէ՛ սխալի  
սէրս:

Երբեք չեմ յիշեր որեւէ հակակրան-  
քի, ասելութեան, աղբայնամուլ խօսք,  
նեղմիտ մտածում, դատապարտում սեւէ  
անձի մը, պատահարի մը, հօրս կողմէ

եղած: Միշտ կարեկցութեամբ կ'արտա-  
յայտուէր մարդոց պճրախտութեանց մա-  
տին:

Կիպրոս, թուրք դատընկերուհի մը  
ունէի, բայց հայրս չարդիւրեց մեր բարե-  
կամութիւնը, ինք՝ որ կ'առէր թուրքը:  
Միայն թէ՛ անւարար կ'ըսէր — կարգա՛,  
աղջիկ, կարգա՛, աղայ, միշտ կարգա-  
ցէք: Տան մէջ տոգին-անդին դիրքեր, ո-  
մանք ջարդերու մտտին, զորս կարգալէ  
ետք ինքնարեւարար հեռացայ թուրք ըն-  
կերուհիս:

Իր ընտանիքին պատասխանատու-  
թեանէն զտա, կարծեաւ արիշ որեւէ պար-  
տաւարութիւն չունէր ընկերութեան նը-  
կատմամբ, — այցելութիւն, ճամբոր-  
դութիւն, մարդ համողիլ, դիրք շինել,  
եւայն: Իսկ ընտանիքին հանդէպ պար-  
տաւարութիւնը — անուղ եւ ուսում:  
Բաներ, որոնց չզոյուլեամբ մեծցած էր  
ինք: Կը վախնար, թէ մենք ալ իրեն պէս  
օր մը անօթի կ'ընայինք միայլ, մղձաւան-  
ջը բարբ հայ ստուցիչներուն եւ անոնց  
ընտանիքներուն: Մենք տարիներով տան  
մէջ հաւ չկերանք, որովհետեւ հայրս  
կ'ըսէր, թէ հայր ո՛չ խելք ունի, ոչ ալ  
արին, անանունը է եւ սուղ ըլլալուն  
մարդիկ սխալ համար հաւ կ'ուտեն:  
Բայց երբ եւ ծանր մարտիայէ կ'ապա-  
քենէի, ամէն ատու ժամը ձին սպան-  
զանացնէ ինձի համար հաւէն սուղ թարմ  
լիտրոց կը բերէր:

Երբ հիւանդ ըլլայինք՝ գլուխին կը  
նտուէր մինչեւ առտու: Եղբշէ պատրիարք  
կը պատմէ, թէ ինչպէս մտղերը անկը-  
ւած, աչքերը կարժրած, անարամաղիք  
կ'ըլլար, երբ տունը հիւանդ ըլլար: Թէ՛  
մայրս, թէ՛ ալ Վահէն երկուքն ալ նուրբ  
էին տաղջութեամբ, նիհար ու պրոնշի-  
թի ենթակայ: Զեմ չափազանցեր, եթէ  
բռնեմ, որ երկուքն ալ իրենց կեանքը կը  
պարտին հօրս խնամքին, հարմութեան  
եւ անձնազստութեան:

Հակասակ իր նիւթական շատ նեղ  
պայմաններուն, մեզ գրիկեց Երուսողէմի  
ամէնէն սուղ եւ ամէնէն լաւ վարժարան-  
ները: Երբ ետամսեաները վճարելու ժա-  
մանակը պար, հայրս ու մայրս, զլուխ



ՕՇԱԿԱՆ ՊՏՈՅՏԻ ԸՆԹԱՅՔԻՆ

զլիւի, կը մամտային, թէ ինչպէ՞ս պիտի ձարեն մեր թռչակները, ի՞նչ բաներէ պիտի գրկէին իրենք զիրենք:

Ուզեց, որ համարարանական սուսն առնամ, բժիշկ բլլամ: Բայց Թորզոմ պատրիարք պարս չուզեց կանել:

— Օշական, ի՞նչ պիտի բնես աղջիկդ մինչեւ Փարիզները զրկես, թող կարուձեւի երթայ, մօրը օգնէ, քանի մը տարիէն կ'ամուսնանայ, — ըսեր է:

— «Արրորան, եթէ դուն աղջիկ մը ունենաս, քու աղջիկդ կարուձեւի գրկէ» բսելով, Օշական կատաղած գուրս ելեր է: Մայրս կ'ըսէ, որ ճ ամիս պատրիարքին քով չգնաց, ինք՝ որ ամէն օր պատրիարքարան կ'ուզէր:

Մերժեց յարեթանէն հատարած գրամները բնուունիլ, յայտարարելով, թէ իր գործերուն հրատարակութեան թող յատկացան հաւաքուած գրամները, որոնցմէ մաս մըն ալ մնացին հաւաքող յանձնարարներու մօտ, իր անակնկալ մահէն ետքը, 1918ին:

5.— Արտարինով պարզ, համեստ մարդ մըն էր Օշական, տէրվիշ մը, բայց ունէր ներքին անասճան հարարութիւն: Հարար էր իրիւ հայ եւ հարար էր իրիւ մարդ: Մայրս կը պատմէ, թէ իրենց ամուսնութեան սուսջին օրը հայրս ըսած էր իրեն — ո՛չ ինքզինքդ կը դալես, ո՛չ գիս կը դալես եւ ոչ ալ գուակներդ: Ինչ որ ընէինք՝ աւելին կը պահանջէր: Երբ ես բացատրիկ նիշերով շրջանաւարտ եղայ, նախ հանդէսին չեկաւ, պարտաւ քան է բսելով, եւ յետոյ բաւ ինծի — մի կարծեր, թէ մեծ բան մըն է այս յաջողութիւնդ, դեռ շատ-շատ սորվելիք բաներ ունիս:

6.— Երբ մեր մանկութեան եւ պատանութեան յիշատակները քով քովի կը բերեմ, ինծի կը թախ, թէ պատահանիկ մը բացուեցաւ մեր սաջեւ աշն անձամօթ ներաշխարհէն, որ Օշականինը եղաւ — իր գիւղին լեռներն ու անառոները, երգերը, իր բազիկ մանկութիւնը, պատանութեան գրկանքներն ու անապահոյութիւնները, բնութեան մէջ եւ հետը բլլարու իր ներքին պահանջքը: Սրտի մեծութիւնը, հոգիին խորքը, ապրումներուն չափը բաներ են, որ դժուար է բանալ մարդոց առջեւ, մանաւանդ Օշականի նման լուս, ինքնամփոփ արուեստողէտի մը սրբազային:

Այդ տարիքին անչաւա չէինք հասկրնար ամէն բան — ուղտ էինք ու սրբախ: Բազիկ կը խաղայինք ու երջանիկ էինք: Հայրս մեղի — ես մինչեւ Յ տարեկան, Պահէն՝ 7 — դպրոց չգրկեց: Բրնութիւնը եղաւ մեր սուսջին դպրոցը, մեր փնտաւանքներն ու գիւտերը մեր սուսջին սուսջիշները եւ հօրս հեքիաթները՝ կեանքի ու բանաստեղծութեան հետ մեր սուսջին հանդիպումները:

Եզիպտոս եղած շրջանին, ապրեցանք քաղաքէն կէս մամ հեռու գանուոյ Մաթրիա գիւղը, փարաւուններու գերեզմաններուն մէկ շրջանը: Պարաէգներու մէջ սուն մը, սրուն փարի յարկը մերն էր: Աւջեւնիս աւաղի բացութիւն, գեղին ծով, ուր մենք կը խաղայինք բազիկ սա-



քերով: Հայրս կ'րաէր, թէ տողջարար է եւ նաեւ խնայողական: Ինք՝ Գալուստեան վարժարանը սուսցելէ: Կէսօրէ ետքերը պատյախ կը տանէր մեզ, օր մը՝ ազամաթուզի պարաէգնեբր, ուրիշ օր մը՝ վարաւոնի դերեզման մը:

Կիպրոս նոյնպէս, քաղաքին ծայրը Մելքոնեան հաստատութեան մօտ տուն մը բնակեցանք: Տունին ետեւէն անուակ մը կ'անցնէր, որուն մօտիկը՝ հայրս գլրած էր եւտտանի պղախի դրելու սեղան մը: Տուն մը բնութեան մէջ կարսուած, տղեւը՝ բայ երկինք կամ տեսարան, հետու քաղաքի ժխոբէն: Պարաէգին մէջ սենէինք կրիայ, հաւնոց. կը պահէինք նապատտակ, միւս կողմը աղանետուն, պահակ շուն եւ դաւնուկ մը:

Ամառները, օդափոխութեան համար՝ Կիպրոսի լեռները կ'ելլէինք: Հայրս ատուն ժամը Ծին կը նստէր գրելու, երկու ժամ: Յետոյ, տոպրակը ձեռքին՝ շահայ կ'երթար տան դնումները բնելու: Ճամբան, գիւղացիներուն, առտունները՝ գալիսքէրա -- ախինքն՝ բարի իրիկուն -- իսկ իրիկունները՝ գալիսքէրա -- ախինքն՝ բարի լոյս ըսելով: Գիւղացիները խենթի տեղ կը դնէին այս մարդը, որ երկու ամենապարզ բառերը չէր սորված ճիշդ գործածել:

Երկրորդ բաժին մըն ալ կը գրէր մինչեւ կէսօր: Կարճ հանգիստ մը ու արդէն պատյախ, քալելու ատենը հասած էր, աւելի ճիշդ՝ անտառներուն եւ լեռներուն մէջ կարսուելու պահը: Կարճ սիւս տարատ մը, պոլոնիսլ անպիտական գլխարկ մը, ծառի ճիւղէ շինուած դաւազան մը եւ անպակաս գմէլին: Յաճախ մեզ հետը կը տանէր եւ երբ անտառին խորերը հասնէինք, հայրս կը հանգչէր մայրի կամ կաղնիի ցած ճիւղին, ձեռքերը ծոծրակին: Մեզ կը ձգէր ազատ, որպէս խաղարկէինք անտառը: Մեզի սորվեցուց ճպրտներուն ճոռոցէն հասկրնալ, թէ անձրեւ երբ պիտի գար, հանել կածաններու ուղղութիւնները, գտնել ատուակներու ակերը եւ նման հրաշալի ու նոր բաներ, բնութեան աշխարհէն:

Կիպրոս մնացինք 8 տարի եւ հոն էր,



ՕՇԱԿԱՆՆ «ՄՆԱԳՈՒՂԱԳ»Ի ՕՐԵՐՈՒՆ, ԿԻՊՐՈՍ, ՀԱՆԳԻՍՏԻ ՊԱՀՈՒՆ

ու Օշական գրեց «Ծակ-պաուկը» եւ «Մնացողագ»ը: Մայրս կը լիշէ, թէ մտանաւորաբար ամառուայ 3 ամսուայ արձակուրդներուն ընթացքին Օշականի սիրան ու հոգին կը ներշնչուէին, կը լեցւէին դեղջկական մթնոլորտով — մթնուրտ մը՝ շատ նման լր կարանցուցած լեռներուն, գիւղերուն, գեղեցկութեան:

7 — Տրտում, լուս մարդ մը, բացուելու գոտաւորութեամբ, բայց աղբուելու, յուղուելու փխրուն սրտով մը: Լեցուելու ու պարզուելու այս ներքին պահանջքը, մզումը, իւրաքանչիւր արուեստագէտի մօտ տարբեր ձեւեր կ'առնէ, անոր գարտուղի սովորութիւնները կ'ըլլան: Օշականի մօտ երգելու պահը, այսպէս դիտուած, բացասիկ նշանակութիւն մը կը ստանար: Կը յիշեմ, ընդհանրապէս իրիկնամուտին, պառչողամի անտիրին նրս-

տած, երգելու ժամ ունէր հայրս, նայ-  
 ւածքը հորտաւած երկնքին մէջ, ինքն ալ  
 փոխազրուած կարծեմ ուրիշ աշխարհ:  
 Հօրս երգերը սրտը շարք մը ունէին, հե-  
 տեւագականութիւն մը, որ կը կրկնուէր  
 ամէն օր: Նախ՝ կը սկսէր Մայսթ Նո-  
 փայտի — անպայման «Մէ խօսք ունե-  
 մ»ով: Յետոյ՝ Աշուց Զրահներն «Կու-  
 գան ու կ'երթան»: Երբեմն կը մոռնար  
 ինքզինք ու 5-10 վայրկեան մը կը կրկնէր  
 նոյն յանկերգը — «Անկիրք ցեղերը քա-  
 փառական, կու գան ու կ'երթան»: Աշու-  
 զական երգերուն կը յաջորդէին եկեղե-  
 ցական շարականներ — եւ իրմէ սորված  
 եմ նորաստեղծեալն ու Տարածեալը: Ան-  
 կէ ետք, կարգը կու գար սիրային երգե-  
 րուն, հայերէն ու թուրքերէն: Թուրքա-  
 կան զեղջուկ երգերը աւելի ուրախ ու  
 նախանայն, իսկ հայկական զեղջուկ եր-  
 գերը աւելի տխուր եզանակով ու աւելի  
 բանաստեղծական: Քանի մը հասար կ'ու-  
 զեմ կրկնել, սրտէսկի զլաք սարբերու-  
 թիւնը երկու ժողովուրդներու հոգեխառ-  
 նութեան:

Հայ զեղջուցի աղջիկը մտահոգ ա-  
 մօթխածութեամբ կը հարցնէ .

Որական ապեր, սարէն կու գաս,  
 Սարի մարալ կը փնտռես .  
 Ասա՛, եարաք, դու չտեսա՞ք  
 Իմ մարալս, իմ բալէս:

Տեսայ, բուրիկ, նաշխուն բալէդ  
 Կարմիր-կանաւն է կապեր,  
 Սիրած եարի համբոյրի տեղ՝  
 Սրտին վարդեր եմ ծլեր:

Իսկ թուրք զեղջուկ աղջիկը Հաճի  
 Մայրայն պիտէզի կ'ուզէ, չիֆթ մը չո-  
 բապ կ'ուզէ, Փսասն կ'ուզէ, փարբախ  
 աղայ կ'ուզէ .

Հանի մուլա, հանի մուլա,  
 Պանա ալթըն պիլեզիկ եուլա,

Հանի մուլա, հանի մուլա,  
 Պանա պիր չիֆթ չորապ եուլա:

Իսկ երբ հայրս դրամի պէտք ունե-  
 նար մեր թողակները վճարելու համար,  
 հաճի մայրայն տապրակ մը սակի կ'ու-  
 զէր .

Հանի մուլա, հանի մուլա,  
 Պանա ալթըն փարա եուլա:

Եւ կամ՝ երբ աւուր հիւանդ մը ըլ-  
 լար, հաճի մայրայն հայրս կ'ուզէր .

Հանի մուլա, հանի մուլա,  
 Պանա աալթալ գարը եուլա:

Ամէնէն վերջը կու գային յեղափո-  
 լանքան երգերը, սկսելով «Զայն մը հըն-  
 չեց էրգրումի հայոց լեռներէն»ով:

Իսկ մեզի համար ամէնէն սիրելին  
 աղուէսին երգն էր, որուն յանկերգը  
 պէտք էր մէկ շունչով բռնէր — թուրքե-  
 րու մարգանք է կ'ըսէր հայրս:

Ակուէս պատկել աղբի տակին, վույ-վույ,  
 Աչով կ'անէ չալ հաւազին, վույ-վույ,  
 Նետով կու տայ աչքի տակին, վույ-վույ,  
 Որ մօտ չգայ նա մեր հաւին, վույ-վույ:

Ալիկը բալիկը չալիկը մալիկը չալմալա-  
 լիկը չալգրտըլիկը տըրըշտաւորը տըր-  
 լաճակաւոր խըրշտապաւտիկը տըրշկանը-  
 տերը վույ-վույ, տըրշկան ճըտերը վույ-  
 վույ:

Այս յիշատակներու, պատահարնե-  
 րու թուադրումէն կը յուսամ, որ դրա-  
 ցիք Օշականի ներքին աշխարհին միու-  
 թիւնը: Սփիւռքի մէջ ապրած 30 տարի-  
 ները — փոքրուրդով, միջավայրով,  
 մտայնութեամբ ու մթնոլորտով — ամ-  
 րազրական հակասութիւն մը եղան 1920էն  
 առաջ ապրած իր աշխարհին: Ուրիշ  
 գրողէաներ ազգուէցան Սփիւռքի այլա-  
 մերժ գրական թէ ընկերային պայման-  
 ներէն: Պարպուէցան ու չկրցան զբել,  
 արտադրել, հիանալ Սփիւռքի հայ հօր  
 իրականութեանը մէջ — սրովհետեւ ա-  
 ռանց հիացումի, ըստ Օշականի, արուես-  
 տի գործ կարելի չէ ստեղծել:

Մակոյն Օշական անտարբեր մնաց, չազդուեցաւ: Եզան մարդիկ, որ բռին, թէ Օշական Սփիւռքը կ'արհամարհէ, ուրիշներ՝ թէ Օշական ամբարտաւան էր երբ կ'ըսէր, թէ Սփիւռքը զիս չի կրնար հասկնալ, 50 տարի ետք իմ դործրս պիտի կարենայ զնահատել հայ ժողովուրդը: Ճիշդ է, որ Օշական Սփիւռքէն հասկցուելու, դեահատուելու մտահոգութեամբ չգրեց, բայց խորապէս գրեց հայ ժողովուրդին համար, Սփիւռքի եւ Հայաստանի համար — որպէսզի Սփիւռքը, ճանչնալով իր անցեալը, որ մը — 50 տարի ետք — ինքզինք գտնէ, եւ Օշականին գործերուն մէջէն ու Օշականի կեանքին պատկերովք վերադառնէ իր ժողովուրդին օրեղէն, հոգեկան թէ իմացական արժէքներն ու արժանիքները, հաւատքն ու մարդկայնութիւնը: Հայաստան արդէն այլ ինքնագիտակցութիւնը սկսած է ունենալ վերջին տարիներուն:

Օշականի համար իր ապրած կեանքն ու իր գրած գործը մէկ, անբաժան, անբախտելի միութիւն մը եղան, հայ ժողովուրդին դարաւոր շղթային մէկ օղակը, կտորած օղակը, որ Օշական, Արաւազդի հերիաթին շղթաներուն պէս՝ համբերութեամբ ու աշխատանքով նորոգեց, դարբնեց, փակցուց: Մարդարէշառնչ հաւատքով յարգուեց բոլոր անոնք, որոնք մօտէն թէ հեռուէն զպայկն արուեստի զգայնութիւններ, եւ ունեցան սէր՝ գրականութեան:

Օշական իր ժողովուրդի արժէքներով լեցուն սիրտ մը ունէր, լեցունած, յարգելու պատրաստ: Ինչ փոյթ, որ 30 տարիներ ապրեցաւ միայն տալով, բաշխելով, ատանց լեցունելու կարելիութեան: Իր ունեցածը հազարաւոր ասրիներու գումարով կուտակուած էր իր մէջ:

8 — Գաղար մը՝ տարու համար իր կեանքի կարեւոր գրուագիները, անուամբ ինքնակենսագրական նոթերէն: Պրուսայի մօտակայ գիւղերէն, սէօլէօզցի աղքատ ընտանիքի մը երրորդ ազգյ զաւակը: Հայրը կորսնցուցած է պղտիկ տա-

րիքին — 4 տարեկանին — ու տան աղբուստի հօգը՝ մանկամարդ մօրը ուսուրուն: Մայրը սկսած է Պրուսայի մեծաքաղ մանարաններուն մէջ աշխատել 10 տարեկանին: Պրուսայի ազգաստիճամ միութեան արկիւնները կը հալային տան ուստեստեղէնը, ձմեռուայ փայտը, երեխաներուն զոհասաները:

Մայրը իրմով յլլի՝ կ'որոշէ վիժումի զլմի, ընտանիքը ապրուստէ չըրկելու համար: Գիւղին սրբուհին, — լուսլուսը, — տեսիլը կը տեսնէ, թէ ծնւիլք տղան մեկն մարդ պըտ ըլլայ: Սրտառուչ են չբաւոր մօր հարցումները: Կարգւո՞ր, արթո՞ր, փաշա՞, ապտղա՞թ: Լուսլուս տեսիլքներու աշխարհէն կը խօսի: Կարգացոր պըտ ըլլայ, մնակ շատ մեկն: Մօր յուսակարութիւնը՝ կըր միտքը կը բերէ եկեղեցիին կարգացուկ, բայց աղքատ Աւն, եւ շուարած կը հարցնէ, — կարգացուկէ՞ն մեկն կ'ելլէ...

Երեխան կը ծնի, լուսի պէս ճերմակ, սոռոջ, գեղեցիկ: Մայրը ստիպուած է բաժնուիլ զաւակէն ու սանտու — սուսնա — ըլլալ Պրուսա հարուստ ընտանիքի մը ըտիր: Արգիլուած է պիւղ երթալ տղան տեսնել — հիւանդութիւն կը բերէ: Երեք ապաքը ձգուած են կոյր հօրաքրոջ խրնամբին եւ կը մեծնան առանց հօր եւ մօր զուրպարանքի: Երեխան, հազիւ քալել սկսած՝ մայրը ստիպուած է հետը տանիլ, կոյր հօրաքրոջ բեռը թեթեւցնելու համար: Մօրմէն առաջին յիշատակը, — անոր ուռած, կարմրած մասնները, որոնցմով եռացած շուրին մէջէն կը հանէր խաչած մանածը: Եւ երբ խեղճ կինը կ'ուզէր երեխային երեսը շոյել, տղան դէմքը մօրը փէշերուն մէջ կը պահէր, ա՛յնքան՝ որ կոշտ կու դար այլ ուռած մասններուն հպումը իր երեսին:

Կը յիշեմ, որ ես ալ երբ լուսակ մը կտպած կ'աշխատէի տան մէջ, հայրս կը յուզուէր, մօրս կը նմանիս ազջիկ, կ'ըսէր ինծի:

9 — Գիւղական նախակրթարան: Յակար՝ պղտիկ տարիքէն կարգալու սիրահար: Կը լսուէ ի՛նչ պիւր որ ձեւքը կ'անց-

նի: Յիշողութիւնը աստուգեւական եւ պատկերաւոր: Մէկ անգամ կարգաւորվ էջեր դոց կ'ընէ — աւելի ճիշդ կ'ըլլար ըսել՝ էջերը իբրեւ պատկեր աչքին առջեւ կու դան: Դասարանին գտներուն չի հետեւիր, քանի որ դիտէ ուսուցիչներէն աւելի: Կը ստիպուին գասարանին անկիւնը ատանձին սեղան մը սալ իրեն: Ստիպան վրան-գլուխը շատ խեղճ, սուրբերը բարկի:

Օր մը, զրօտանքին, զրոյց կը չըջի, թէ Պոլսէն երկու մտաւորականներ եկած են իբրեւ քննիչ: Առաջնորդը ցոյց կուտայ Յակոբին շորադրութիւնը: Հիւրերը — մէկը՝ Ձօհրապ կարծեմ — կ'ուզեն այդ տղիկը տեսնել: Տնտեսը գասարան կու գայ Յակոբը վեր տանելու: Կը մերժէ Յակոբ: Երկրորդ անգամ նոյն մերժումը: Առաջնորդը կը կռահէ պատճառը — տղուն հպարտութիւնն ու չքաւորութիւնը — տնտեսին հետ շուկայ կը զրկուի, ձեռք մը զղեսա, զոյր մը կօշիկ ու կը ներկայանայ քննիչներուն, որոնք կ'որոշեն Յակոբը Արմաշի գոյրեւանքը զրկել իբրեւ ժառանգաւոր:

10.— Արմաշի մէջ ալ նոյն հպարտ ու բմբոստ աշակերտը, 14 տարեկան: Եկեղեցական մանր-մունր ածները, սրահերը, ծոմերը չ'ուզեր յարգել, խաչ հանել, եկեղեցի իջնել: Մատենադարանի տեսուչէն, Թորոզմ արեղայ Գուշակեան — ապաղային Երուսաղէմի պատրիարք — կ'ուղչ Բընանի դիրքերը: Չեն տար, կ'ստանէ ասանց հրամանի, կը բռնուի: Չինքը կը տանին վանքի տեսուչին, — Եղիշէ վրդ. Դուրեանին մօտ — Դուրեան կը փորձէ բացատրել, թէ դեռ կանուխ է իրեն համար այդ դիրքերը կարգաւ

եւ ուրիշ գիրքեր կու տայ: Օշական աչք մը կը նեակ գիրքերուն, արհամարհական շարժումով մը կը հրէ տեսուչին սեղանին վրայ՝ լսելով — ասոնք գ'ուք կարգացէք: Դուրս կ'ելլէ ու, ասանց մէկու մը լսւր սալու՝ կը փախչի Արմաշէն եւ, երկու օր քալելով՝ կը հասնի իր գիւղը, Սէօլէօղ, ու կը սկսի ուսուցչութեան զիւղական նախակրթարանին մէջ — 19 տարեկանին: Ու ուսուցչութիւն բրաւ ամբողջ 50 տարի, մինչեւ մահուան օրը:

1912ին ուսուցիչ՝ Մաշկարայի վարժարանին մէջ, Արտաշէս Յարութիւնեանին հետ: Արգէն սկսած է անուն չիներ Պոլսոյ մտաւորական չըջանակներուն մէջ: Իր անունը աւելի ազմկայի գարձաւ քանի մը տարի ետք, «Մեհեան»ի մէջ հրատարակած նշանաւոր «Հարք-Ինք»ներով, իր ինքնատիպ, խիզախ դատաւանդով: Մեծ պատերազմէն առաջ, Օշական Պոլսոյ գալուցներուն մէջ ուսուցիչ է գրականութեան, թերթերուն կ'աշխատակցի — բայց միշտ անկախ, սզատ մըտածողութեամբ: Ոչ մէկ կուսակցութեան կը պատկանի, բեմերէն չի ճառասիրտեր, աղբային թէ կուսակցական ժողովներու չի մասնակցիր: Իր զիւղացիի համեստութեամբ ու զուտ գրական հետաքրքրութիւններէն տարուած՝ կը խուսափի երեւնալէ, փառքէ: Յետոյ, իր փորձառութեամբ թուրքը կը ճանչնայ աւելի լաւ, քան թէ Պոլսոյ քաղքենի, Եւրոպա ուսած մտաւորականները: Չէր հաստատար թուրք մտաւորականներուն ազատական գաղափարներուն, պահեց իր բնածին, զիւղացիի կրօնաւարտութիւնը, որ զինք ազատեց Ապրիլ 24էն:

(Մնացեալը յաջորդով)

ԱՆԱՀԻՏ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

Յ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն



Ս Ի Լ Վ Ի Ա

Փ Լ Է Թ Ի

Հ Ա Մ Ա Ր

Չարմանուկի չէ, որ Ա. Ալարէկ իր «Բարբարոս Աստուածը՝ ուսումնասիրութիւն մը անճնասպանութեան մասին» գործը կը բանար Սիրլիա Փլէթի կոպուած իր յուշերով (1), մասնաւորաբար կեդրոնանալով անոր կեանքի վերջին ամիսներուն միայ, որոնք գէպի մահ գացող իր ընթացքը կը ցուցնէին եւ հարուստ էին ստեղծագործական անհուսափառ բեղունութեամբ: Այլ շքանին է, որ «Արիւլ»ը կը դրուէր, որ պիտի հրատարակուէր յետ մահու եւ խորական վտխորիկ մը պիտի ստաջացնէր անգլիական դրսեւան շքանակներուն մէջ:

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ, ԱԻՆԿՈՒԹԻՒՆԸ

Երբ այս նիւթին մասին է խօսքը, միշտ ալ մեր դէմ կ'ուրուագծուի «Ճամբարդարիւններ» եւ «Կամուրջ» դարձերուն հեղինակ Հարթ Քրէյնի դիմագիծը, իր մեծ չփոթով, դինեմսլութեամբ, միասեռականութեամբ եւ ձախտութեամբ՝ իր ժամանակէն ու ամերիկեան ստասպելներէն Ամերիկայի մէկ ամբողջական պատկերը կամ խորհրդանիշը ստեղծելու: Իր բառերը.

Հոն միւլիայն, վայրկեաններու  
Յաջարդականութիւնն է:  
Ճամբարդարիւն՝ ուղղուած դէպի  
Ոչ մէկ գարուն —  
Ո՛չ ժամանակ, ո՛չ ծնունդ, ո՛չ մահ  
Եւ ոչ արեւ՝ իբրեւ պատասխան:

Եթէ Քրէյնի «Ճերմակ շէնքեր» անուն աստղին դերքը Խլոր Ուրնթրըզ կը գլխաւորէր հիացումով, բռնելով, թէ «խրժով սնինք բանաստեղծ մը, որ կ'ընկալէ իր դարը անոր ամբողջութեան մէջ»(2) . ապագայ քննադատները կը ականէին, թէ չէր կրցած անջատուիլ զինք շրջադասող քաստէն, որ ներքին էր այլեւս, եւ Քրէյն, նետուելով շողենաւէ մը՝ պարզապէս ջրամույն կ'ըլլար :

Յաջորդ սերունդներուն ամենափայլուն կամ ներկայացուցչական գեմքերը քաստի, հոգեբուժարաններու, անձկութեան եւ տուածնութեան մթնոլորտին մէջ երկար աստն զիմացրելէ ետք փորձութեան, նոյն ճակատագրին կ'ենթարկուէին : Պարապայտեան չէ, որ անցեալ տարի, իր անձնատպանութենէն քէչ աստղ, ամերիկեան արգի բանաստեղծութեան ամենակարեւոր գեմքերէն մէկը՝ Ռոպէրթ Լուէլ, իր «Օրը օրին» հատորին մէջ, իր սերնդակիցներէն Պէրմիէնի յգելով խօսքը՝ կ'ըսէր .

Կ'ուզէի ապրիլ  
 եւ խուսափիլ ողբերգութենէդ :  
 Սակայն, խորփին մէջ կարծես,  
 Մեկէ մայն կեանքը ունէիմէ :

...Ճնն Պէրմիէն անձնատպան եղած էր 1972ին : Սակայն եթէ մահը ստեղծագործական իրթան մը եղած էր Փլէթի համար, նոյնը կարելի չէ բնել Լուէլի վերջին գործերուն համար, հակասակ անոր, որ «Կեանքի ուսումնասիրութիւններ»-ը այս մարդին մէջ իր գործին կորիզը կազմած էին եւ խոստովանական բանաստեղծութեան մեկնակէտը հանդիսացած :

Հարցը այն է, որ երկուքն ալ սկսած էին շատ «ասարկայական» դործերով, ուր քերթուութեան թեքնիք արթապետութիւնը մասնաւոր ուշադրութիւն դրուած էր : Լուէլի «Բուէֆրը գերգովնաստուներ Նամքաէրթի մէջ» եւ Փլէթի «Քոլոսիալս»ը լուսագոյն օրինակներն են ասոր : Սակայն աստղինը «Կեանքի ուսումնասիրութիւններ»էն սկսեալ ինչպէս անձնական անձկութիւններու եւ բնասանեկան անցեալի յաշերու դարձանալի ճամբորդութեան մը մէջ, որոնք իսկապէս նոր ուղղութիւն մը ստեղծեցին ամերիկեան դրակոնութեան մէջ, իսկ երկրորդը անոնց հետ միքմուտեցաւ իր յաճախանքներուն ու անգլիկաակիցի անելին մէջ : Անոնք, հակասակ իրենց ենթակայութեան, չկարճացուցին թեքնիք նստածութիւնները : Սակայն, իրատմբ, Տէնիզ Տոնակ կը զնէ հիմնական հարցը, թէ՛

«Ինչո՞ւ Լուէլի պարագային անձնական փորձառութեան եւ ստեղծուած բանաստեղծութեան յարաբերութիւնը ձեւով մը նուազ արդիւնաւէտ եղած է «Օրը օրին»-ի պարագային, քան «Կեանքի ուսումնասիրութիւններ»ուն»(3) :

Գուցէ տարբեր ազդակը եւս իր հիմնական ազդեցութիւնը ունէր ասոր մէջ : Լուէլ սպասած էր ինքզինք արդէն իր վաթսուհամեակին, իսկ Փլէթ անձնատպան կ'ըլլար անոր կէս տարեքին :

Տէյլիա Հոլլըրուք հոգեվերլուծական խոր քննութեան ենթարկած է Փլէթի պարագան, մեկնելով անոր գործերէն : Ներքին պարագը ենթակային կողմէ, անոր յաջորդող սփիգոֆէլիք կացութիւնը, դուստներու ծնունդին ստեղծած հոգեվիճակը կնկան մէջ, սէր-ատելութիւն յարաբերութիւնները, եւայն, որոնք մերջ ի վերջոյ աստղնորդած են անձնատպանութեան, կամ ենթակային կարծիքով՝ այլ ելքի մը կամ ծնունդի մը(4) : Տէյլիա Հոլլըրուքի



ԱՆՆ ՍԵՒՍԹՈՆ



ՌՈՊԷՐԹ ԼՕՈՒՆԷԼ

փորձը հետաքրքրական մէկ տարրերակն է ծանօթ մեկնարանութիւններուն :  
 Եթէ այս բարբին վրայ աւելցնենք Անն Սեւսթոնի պարագան եւս, որ  
 վերսիշեալ ամերիկացի չորս բանաստեղծներուն պէս անձնատպանութեան  
 գիմած է, պատկերը բաւական ամբողջական կը դառնայ :

\*  
 \*\*

Եւ ես  
 Ապեզն եմ,  
 Յօզը քոչոյ՝ անձնասպանօրէն,  
 Միաձուլուած իր մղումին հետ՝  
 Կարմիրը դէպի  
 Աչք՝ պարունակը ցերեկի :

«Արիրլ» բանաստեղծութենէն վերցուած այս հատուածը, որուն խո-  
 րագիրը ձիւռ մը անունն է, կը պարզէ ա՛յն հոգեփիճակը, ուր կարծէք ան-  
 սանձ կերպով կը խթանուին անոր ներքին մղումները, անձանօթ եւ մտթ  
 ուժերը, իսկ բանաստեղծուհին կարծէք կը միաձուլուի անոնց հետ : Ինչ  
 հոն յիշուած «սեւտօրթի աչք»ին ու «սեւտնուչ» արեան պէս պատկերներու  
 կը հանդիպինք «Չմեռնային ծառեր»ու, «Չուրէն անցք»ի եւ, մա՛նտանոյ՝  
 «Արիրլ»ի դրեթէ բարբ կըրտն մէջ : Վերսիշեալ կտորը, միջնայորակ խոտ-  
 տով՝ կրնայ ազերս ունենայ Փլէթի ամուսինին՝ անդլիացի ծանօթ բանաս-  
 տեղծ Թէա Հրեճի գործերուն հետ, ուր վայրապ ուժ մը կը զգացուի կեն-  
 դանական աշխարհին մէջ, որ ձեւով մը մեր աշխարհին արասցարումն է՝  
 ծայրայեղ կերպով դրսեւորուած :

«Հարսնուկներ» եւ «Կակաչներ» բանաստեղծութիւններուն մէջ զօր-  
մանայի աւրելութիւններ կը ստեղծուին իր եւ ծաղիկներուն միջեւ (որոնք,  
խորքին մէջ, դուռ կ'ընդհան են) : Օրինակ, կակաչները կը վերածուին «սար-  
սափելի մանուկներու», անոնց կարմրութիւնը հաշտ կը թուի եւ կը խօսի  
իր վէրքերուն հետ, այլուր, անոնք «կ'ուտեն իմ թթուածինս», խոս ամպիւ-  
լանսին մէջ երկարած կնիկն համար հարսնուկները յանկարծ կեանքի նշան-  
ներու կը վերածուին, կու գան՝ ասանց որ մէկը կանչած ըլլայ գիրենք :

Այս բոլորին մէջ մտնելու համար, հաւանաբար պէտք է սկսիլ «Լէյտի  
Լագարուս» կտորէն, ուր բառական յատակ են անձնասպանութեան իր երկու  
նախորդ պարագաները .

Արկած մըն էր, առաջին անգամ  
Երբ պատահեցաւ .  
Տաւ տարեկան էի :

Երկրորդ անգամ կը միտէի  
Վերջացնել . չվերադառնալ :  
Եւ փակուեցայ՝

Ինչպէս ուտրէ :  
Պէտք էր անվերջ գիտ կանչէիմ  
Եւ ժողովէին որդերն ինձմէ՝  
Ինչպէս հաստատ աղամանդներ :

Ամէն ինչի պէս՝  
Մահը արուեստ է :  
Զայն բացառապէս կը գերազանցեմ :

Իր կեանքի իւրաքանչիւր ասանամեակին կատարուած այս փորձը բնա-  
կանաբար խոհական յաճախանք էր . ամուսնութիւնը, դուռներու ծնունդն  
ու բաժանումը որքան ալ կարեւոր սոցիալներ ըլլային, պարզապէս ներքին  
ասպնայի մը սնունդ տուող տարբերու կը վերածուէին : Այս բոլորին միա-  
ձուրումին աստիճանաշարք պարզ է զրտթիւններուն մէջ .

Ահա կու գաս, ձեռքերուդ՝  
Շոգիով ծածկուած բաժակ մը թէյ :  
Ժայթփը արեան ֆերրոպորիւն է .  
Զես կրնար գայն կանեցնել :  
Կու տաս ինձի երկու վարդեր՝ գոյգ մանուկներ :

Հորպիւրեք կը նկատէ, թէ ճերմակ գէմքերով լուսիններու, աւազան-  
ներու, հայելիներու եւ նման պատկերներու մնայուն ներկայութիւնը անո-  
րաշի ու ստեղծութեան զգայնութիւնն է, կարծէք իր ամբողջ իգական անց-  
եալը՝ մօրմէն սկսած եւ ստիչէ անդին, զինք կը զրկեն իր անկախ դոյութե-  
նէն(5) : Վերադարձը նկատարթիւնը ամբողջացնելու համար՝ պէտք է յիշել  
Թէյլլըրի կարծիքը, թէ իր կողմէ «ընդգծուած տարօրինակ մերժում մը կայ  
կիմ ըլլալուն»(6) :





ՃՈՆ ՊԵՐՆՄԵՆ



ՀԱՐԹ ԲԻԷՅՆ

Խորքին մէջ, հարցը այն է, թէ ի՞նչ պէտք է ընել այսօրան ենթակա-  
յախան բանաստեղծութեան մը հետ, ուր հեղինակին կենսապրութիւնը, անձ-  
նատպանութեան յաճախանքը, անձկութիւններն ու գրական մասհոգութիւն-  
ները շարունակ կը միջամտեն: Ճիշդ է, որ Փլէթի սակզագործութիւննե-  
րուն մեծ մասը Անդլիայ մէջ լրջ սեւան, սակայն անոնց արմատները կու-  
ղան Միացեալ Նահանգներէն, ուր Լուէլի հետ սկսած էր Խոստովանական  
շարժումը: Գծախտարար այդ օրերու անդլիական քերթնութեան կացութիւ-  
նը նայնքան ուժեղան կամ արդի պատկեր մը չէր ներկայացներ: Շարժումը  
անսոսով ծանօթ բանաստեղծներու խումբը, Բոլորթ Գոնթէսթի «Նար տո-  
ղեր» հաւաքածոյով (որ կարելի է թարգմանել ու մեկնաբանել նաեւ իրբեւ  
նոր գլխեր) վերաբժեւորուած ու վերանայուած փիճակի մէջ ուսնողական  
ձեւերու վերագործը ազդանշան էր: Յիսուննական ու փաթուռնական թուա-  
կաններուն ստեղծուած այս մասձողութիւնը փաստօրէն մնաց ու պիտի մը-  
նայ իրբեւ անդլիական բանաստեղծութեան ուղղութիւններէն մէկը, հակա-  
ռակ անոր, որ գոյրոց մը կամ հանդանակ մը չէր եղած եւ պիտի չըլլայ:  
Ճիշդ է, որ այլ շարժում մը՝ Խուլքը անսոսով ճանչցուած, հակադրած էր  
իրենց եւ Լարբինի կամ Հիւճի նման անհատականութիւններ կարելի չէ թե-  
րազնահատել կամ սրեւէ իմբաւորումի մէջ նկատի ունենալ, սակայն հոն  
պարզուող բանաստեղծութեան կացութիւնը ընդհանրապէս քայլ չէր պահեր  
արդի ուղղութիւններու հետ: Փաստօրէն, երբ 1962ին Ս. Ալարէզ «Նար բա-  
նաստեղծութիւնը» խորագրուած հաւաքածոն կը կազմէր, կը ստիպուէր զայն  
բանալ ամերիկացի բանաստեղծներու գործերով՝ ուժեղան, անձնական կի-  
քով եւ արդի նկարագրով բանաստեղծութեան մը բմբննապութիւնը ցայտուն  
դարձնելու համար: Այսպիսի մթնոլորտի մը մէջ Փլէթի պոռթկումը, պարզ  
է, թէ ինչ անզորագործ կրնար ունենալ: Բիչ մը յուսախոր, կրուորական ու  
սրոշ տառակայականութեամբ բանաստեղծ-մասւորական-քաղաքացիին տեղ  
մէկը կու գար, որ իր կնոջական աշխարհին մէջէն կը բանար անհատակա-  
նութեան մը տաղնապը ու կը պարզէր մահուան, վայրագութեան ու արիւ-  
նի՝ զգայնութիւններ:

\*\*

Ասկէ անդին, Փլէթի մէկ ամբողջական գլխանկարը կազմելու համար՝

տարբեր մտանցումով մը ու ստորձանորդար պէտք է բանալ հարցերը .

Այս լոյսն է մաքի՝ մոլորակային ու պալ :  
 Սեւ եւ ծաւերը մաքի : Լայտը կապոյտ է :  
 Խտտեր կը պարպեն ցաւերը իրենց  
 Ուռեքաւս պիւնաց, իբրեւ քէ Տէրն ըլլայի :

«Արիւր» հաւարածոյին բոլոր բանաստեղծութիւններն ալ նման հողե-  
 վիճակի մը ու մթնալարախ մը մէջ կը բացուին : Անգլիական ճայնաափիւսին  
 շարհուած հարցադրոյցի մը մէջ, Փլէթ կ'ըսէ, թէ անոնք մեծ մասամբ զըր-  
 ւած են սաւառտեան առաջին ժամերուն : Խորքին մէջ, այդ ժամերու պատ-  
 կերը՝ մթութեամբ, լրութեամբ, կապոյտի շերտերով ու անէպոսով զայսոյ  
 արամագրութիւններով, ներկայ է միշտ :

Ասոնց մէջ մտքորուելու ու անէտնարու արամագրութիւն մը կը զբայուի  
 միշտ . «Հին էութիւններս կը լուծուին՝ պոռնիկի եին կիսագգեստներ» . սեւը  
 միշտ մահուան հետ կ'աւրջնչուի եւ, ինչպէս յաճախ տկարակուած է, այս  
 բանաստեղծութիւններուն ու ջերմութիւն նկարագրող կատրններուն մէջ միշտ  
 ալ կրօնական՝ Ձէն մարտութեան ձգտող միտում մը զգայի կը գտնուայ, կար-  
 ծէք այն համարումով, որ ջերմութիւնն ու կրակը զինք կը մաքրեն ու կը  
 պատրաստեն ան-էութեան, ոչ ոք ըլլալու : Այս հանդրուանին յաճախ կը  
 հասնի, կարծէք տակաւ կը նօսքանայ ու կը գտնուայ թափանցիկ .

...Քարոյ հրաշք մը .  
 Մարթա փայլուն է հիւսա  
 Նացիական լուսամտի ինչպէս .  
 Աջ ուռքս թուրքի  
 Մանրութիւն ունի :

Կամ «Մայրը» կատրին մէջ սխտի ըսէ .

Կիւր կատարեղագործուած է :  
 Մեռած

Մարմինը կագած է իրագործման ժպիտը...

...Իր մերկ ստերը  
 Կարծես քէ կ'ըսեն,  
 Միհչեւ հաս եկանք եւ վերջացած է հիւսա...

Կարծէք կը հասնի հոն՝ ինքնաջնջումի, որ իր բանաստեղծութեան ու  
 կեանքին նշանակէտը կը թուի ըլլալ : Եթէ այս բարբին մէջ թաքուն ահա-  
 դանդ մը կայ ու ինքրանք մը (ինչպէս որոշ անձեր փորձած են տեսնել)՝ զինք  
 փրկելու անխուսափելիէն, նման դրացում մը մահուան ու արիւնի թանձրու-  
 թեան մէջ չի տեսնուիր գժրախտարար : Վերջ ի վերջոյ ասոնք կը վերածուին  
 «Բառեր»ու, որոնք

Կացիներ, որոնց  
 Հարուածներէն կտր, փայտը կը քթոտայ .

Եւ արձագանգնե՛րր .  
Արձագանգնէր նախընտրող ,  
Կեդրոնախոյս՝ ինչպէ՛տ արշաւող ձիւեր :

Այսքան ենթակայական ու անդիտակից մղումներէ ժայթքող բանաստեղծութիւն մը , որքան ալ բացատրելի հոգեբանական լծակներ ունենայ կամ բարոյական-դաստիարակչական մտահոգութիւններ արծարծէ , կը մնայ մահւան գիմաց գերբարոյում մը ու յանդիտութեան մը վատար՝ ներքին , վտանգաւոր մղումներ գիծակարգ : Եթէ այս ձեռի եղբակացութիւններ կ'արձանագրուին այստեղ , պատճառը այն է , որ քանի մը մտահոգութիւններէ ու տարրեր տեսանկիւններէ գիտուած , Փլէթի պարագան միշտ ալ այլ մտակարգակներու վրայ քննարկուած է , ուր մինչեւ իսկ երբեմն զեղարուեստական մտահոգութիւնները երկրորդ գիծի վրայ գրուած են :

Հիմնականը այն է , որ դարմանալի բեղունութեամբ ու խորութեամբ , ատուապնդող անեկեղծութեամբ ու ամէն ինչ վտանդող յանդիտութեամբ ճամբորդութիւն մը կտաարուած է այս կնոջ կողմէ :


Միլլիա Փլէթի գործը այս ճամբորդութեան գիտակցութեան ու գոյութենական խորունկ տաղնապի մը բարտիսուն վկայութիւնն է :

#### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

- 1.— A. Alvarez, *The Savage God*.
- 2.— Yvor Winters, «White Buildings». *Poetry*. Vol. 30, April, 1927, p. 49.
- 3.— Denis Donoghue, «Lowell at the end». *The Huston Review*, Vol. XXXI, Spring, 1973, p. 196.
- 4.— David Holbrook, «Sylvia Plath, Pathological Morality, and the avant-garde». *The Pelican Guide to English Literature: The Modern Age*. 1978.
- 5.— *Ibid*, p. 438.
- 6.— E. R. Taylor, «Sylvia Plath's Last Poems». *Poetry*. Vol. 109, p. 260.

«... Ես մասնատր մտերմութեամբ մը կապուած եմ «Ղափքում» արկածախնդրութիւնները շարքին, որովհետեւ Ղանթուար իմ կերտած ափսոսանքն է: Համեայտ, խմբապետ, սրտակիր, պատրաստարան Ղանթուար լիբանանցի մարմնատրուդ այն արկարն է, որ ծնու 1950ին՝ Ամերիկեան հիւանդանոցին մէջ, «Տալլը ծանօթ, մալլը՝ անծանօթ», ինչպէս կ'ըսեն Փրանսուայիք:

250 արկածախնդրութիւններուն վրայ, որոնց իւրաքանչիւրը կը բաղկանայ երեքէն հինգ երգի-ծանկարներէ, այս վերջին պատերազմին ընթացքին աւելցան 50 նոր արկածախնդրութիւններ, իսկ ներկայիս իր երկունքը կ'ապրի աներեւակայելի պայմաններու մէջ կոզոպուտի ենթարկուած մարդու անձնական փորձաստութեամբ ապրուած ողբերգութեան մը երգիծանկարումը»:



**ԶՐՈՅՑԷՆ ԵՄ ԱՌԱՋ...**

Վերի աղերքը կը կաղմեն յաջորդ էջերուն տրուած ծուայուն գրոյցին թերեւս ամէնէն «մտթ» հաստատմը, ու շատ քիչերուն թափանցելի պիտի ըլլայ «աներեւակայելի պայմաններուն» եղած ակնարկութիւնը, որ մէկ ամիսով աւելցուց նուաւ երգիծանկարիչին հետ «Բագիմ»ի ժամադրութիւնը:

Հսկաների կէսերուն էր մեր ժամադրութիւնը. պիտի հանդիպէինք Երկուշաբթի առտու, երբ նորից յետիջօրէին խոր ցուով իմացանք, որ Շտրաթ օր ու ի՛ր ամն մէջ՝ Տիրան Աճմեան ծղոտեալ աւազակներու կողմէ ենթարկուած է ութ ժամանց տանջուից ու անձկալից փորձութեան մը՝ «աներեւակայելի պայմաններու մէջ»:

Ի լարերախտութիւն արուեստագէտին ու երգիծանկարչական մեր արուեստին, իրենց մասնազրկութեան մէջ վարպետ ու երկարաշունչ աւազակները, շատ զարծնողաւոր մարդեր ըլլալուն՝ վերջուցած են իրենց շուկայի ակնայնելի արժէք ներկայացնող առարկաները միայն եւ, արուեստագէտին կեանքին հետ խնայած են անոր կեանքին՝ կեանքը կաղմող հաւաքածոյին, բողբոջած՝ մեծ մասամբ իր կողմէ փայլալուծած անախդ գործերէ:

Չուարթախոս հերգիծանկարիչը դուարթ ոճով մը պատմեց պատահարը եւ ստորահոյս չկայ, որ ուր «ապրուած ողբերգութեան» տախտակ երկունքը, որուն կ'ակնարկէ վերը, պիտի արդինաւարուի շուտով եւ պիտի աբուի մեղի դուարթ զիծերու մէջ աւանակ զիմա-կուսը աւազակներուն ա'սուսուցն գիծակաղեքմ հողին:

Չրոյցը, որ ըլլաի մէջ կ'առնէ աստղաբնի մէջ սաք զնելու Տիրանի բնագրական մզումներէն մինչեւ անոր վերջին իրազարծումները ընդգրկող վերջին շրջանը, կը բովանդակէ բողբոջ նորութիւններ, որոնց մէջ ամէնէն ակնարկները ձեւաւարուած նոր շարքերն են ու անոնց պատմութիւնները մա'նուանդ «Բաջ Նապար»ի կապուած խորհրդածութիւններն ու երազները, որոնք լան մը պէ'տք է ըսեն մեզի:

Այս ստիկով շնեք կընար չիչել վերջիս իմացուած յար մը, որ հազարուեցու «Բագիմ»ի նախորդ թիւով, — 70 միլիոն աւար արժու կը միայն մէ'կ արուեստագէտի գործերէն մէկահեղուած ու միայն մէ'կ մարդու կողմէ կաղմուած «Ապրիտոտր Տայի» թանկարանին յարը: Աօհկա, հարկաւ, գործն է անվանուող հայրենիք եւ ապահովութիւն ներչնչող պիտութիւն անեցող քաղաքացիներու, որոնց նմաններուն գժուար թէ կարենան հանգիպել մեր արուեստագէտները եւ անոցանել իրենց անունով թանկարան ունենալու պատրանքներ, բայց իրենց իրաւունքն է յուսալ, որ ունենան շրջան թանկարաններ, մեծաուսն մարդու օժանդակութեամբ հնարաւոր հաւանախ հրատարակութիւններ, որոնց շրջանաւառութիւնը պէտք է մեղի, կեա'նք...

# ԴԵՍ ԱՌ ԴԵՍ ՏԻՐԱՆ ԱՃԷՄԵԱՆԻ

Նստած ենք դէմ յանդիման: Երգիծանկարիչ մըն է խօսակիցս: Հակասակ անոր, որ Տիրան Աճեմեան նաեւ օժտուած է մարդը իր ներամիտքի վիճակէն դուրս արձակող թատերական փորձառութենէն, հակասակ անոր, որ Տիրան երգիծանկարիչին մէջ միշտ ներկայ է պատրաստարան, սրամիտ խօսակիցը՝ այսուեանկերձ, պզալի է, որ ան դերասանի ճարտիկութեամբ եւ երգիծանկարիչի լատուկ սրանուութիւններով կը փորձէ քաջուիկ խոստովանութեան բեմահարթակէն:

Նկարագրի հարց է: Որքան գիտենք, երգիծանկարիչը կամ երգիծագիրը իր հերոսները եւ շօշափած կացութիւնները մերկացնող, թերութիւնները ընդգծող, բազմապատկող եւ առ այդ՝ ընթերցողը ժպտով կամ կամփրով դատարարակող արուեստագետն է: Հաւանաբար այս իսկ պատճառով, ան կը պոռչանայ եւ կը խուստի իր բոլոր խաղաբանութիւնը բանալու փորձութենէն: Մթնոլորտի պատրաստութեան նպատակով կանապան նիւթերու անդրադարձող մեր հպանցիկ ակնարկները կը մնան հըպանցիկ: Զրոյցին հունը բանարու ճիգերը կ'ընթանան դանդաղօրէն: Կ'որոշեմ պահ մը ստանձնել դատարարի դերը եւ յարձակողականի անցնիլ: Ամփշապէս հարց կուտամ՝

● Սիրելի Տիրան, հարցազրոյցը սկսեալու համար, հաւանաբար պէտք է դիմել շատ չարչարուած, բայց բանալի հարցումի մը. «Ի՞նչ է երգիծանկարչութիւնը Տիրան Աճեմեանին համար, եւ յետոյ՝ նկարչուքեան հանդէպ ձեր տնկցած սէրը առաջին անգամ ե՞րբ դրսեւորուեցաւ»:

— Գարսեպեան տարիներուն: Դասարանին նկարիչն էի: Գրեթէ միշտ առաջինն էի զգարնակներուս մէջ, որոնք պատանեկան հիպպոմոսով եւ երբեմն ալ նախանձով կը դիտէին իրենցմէ ունի տեսնելու բնածին առաւելութիւնս: Այդ շրջանին, այսինքն՝ երբ 10-11 տարեկան էի, սրբաւիտ ուշադրութիւնը նկարչութեան մէջ գերմանացի դասատուին, որ

երգիծանքի նկատմամբ ունեցած հակումըս զգալով՝ սկսաւ ինձի արամադրել երգիծական սրբամներ: Նմանապէս, աշակերտներուն տեսողական դրայարանքը զարգացնել փորձող մեր ուսուցիչը յատուկ հոգածութեամբ մը հետեւեցաւ առաջին փորձերուս, իր թերազրանքներով վաղուան երգիծանկարիչը պատրաստելու նախանձախնդրութեամբ:

Անշուշտ, ինչպէս կ'ըսեն, պատանեկան առաջին թնթողանքներ էին այդ շրջանի փորձերս: Ինչպէս գիտէք, իւրաքանչիւր նկարիչ դժեւ կը սկսի պատանեկան նմանօրինակ խանդավառութեամբ մը, բայց ժամանակի ընթացքին կը գտնէ իր վերջնական հունը, արուեստագէտի բնորոշ դիմադրիչը:

Վերջ է վերջոյ, ինչպէս սովորաբար բարբիտ հետ կը պատահի, բախտաւոր օր մը ծանօթացայ Ֆիլիպ Արփիարեանի, որուն թերազրանքներով նուիրուեցայ երգիծանկարչութեան: Բայց երգիծանկարչական իմ առաջին լուրջ փորձերս ծնունդ ապին Հալէպի մէջ՝ 1918ին: Եղեանի վէրքերը զտրմանելու եւ նաք կեանք մը սկսելու մեր արդւային վճռահանութիւնը արատաւիւր երանդ մը կրուատային վերակերտուող դազութիւն: Կըսելի՞ն ու ծիծաղը կը յորդէին միասնաբար, միաձուլուած ներդաշնակութեամբ մը, որուն տիրական ձայներն էին Աշոտ Մատթեանի, Բարսեղ Կանաչեանի եւ Գէորդ Կաւփաքեանցի նման իբրև արուեստագէտներ: Հասակ նեոնեցի այս կենսունակ մթնոլորտին մէջ, մօտէն ճանչցայ սիւնաշաւաղ առաջին տանտնտէրներու մեր կեանքը ձեւաւարած այդ արուեստագէտները եւ առաջին դորձերս տնոնց վրամանկարները եղան:

Իմ համոզումով՝ առաջին լուրջ փորձերս այս շրջանին գծած վրամանկարներս են: Անոնցմէ մէկը գրկեցի «Վարդաշ»ին

եւ կրնաք երեւակայել տպրած անհուն հրճուանքս՝ ի սես լոյս տեսած յիշեալ երզիծանկարին: Այս ղէպքը ճակատադրական նշանակութիւն մը ունեցաւ ինծի համար, աւելի կողուեցայ երզիծանկարչութեան, կարծելով՝ որ խկական արժէք մը կը ներկայացնեն: Յետոյ, սկսայ ուրիշ երզիծանկարներ զըրկել եւ, օր մըն ալ, ստացայ մնայուն աշխատակցութեան պաշտօնական հրաւէր մը:

● Հարցումին տուածին բաժինին չպատասխանեցիք: Արուեստագէտները գաճազան իմաստներ կու տան իրենց ներաշխարհը այեկոճած տեսիլներուն: Օրինակ, եթէ բանաստեղծութիւնը առնենք՝ Մեծարեւնցի կամար վերացման ու անանկանակացման պատարագ մըն է անիկա, Միամանքոյի մօտ՝ իր եսը ցեղին ընդհանրական եսին մէջ լուծելու եւ մեր ազգային տագնապներուն հրաւերները գոռալու մարգարէաշունչ անկաշկանգութիւն մը, Թէ՛հեանի պարագային՝ իր ներաշխարհը այեկոճած յոյզերն ու տենչերը իմացական կարգապահութեան առաջնորդող թռիչք մը: Կարելի է երկարել շարքը, սակայն կարեւորը ա՛յն է, որ իւրաքանչիւր արուեստագէտ արուեստին կու տայ իր ինքնուրոյն սահմանումն ու դերը: Կը կրկնեմ. ի՞նչ է երզիծանկարչութիւնը ձեզի համար, կամ այլ խօսքով՝ երզիծանկարչութիւնը իբրեւ արտայայտամիջոց ընտրելով՝ ի՞նչ բանի կը ձգտիք:

— Ամէն բանէ տառջ, 55 տարուայ անընդհատ աշխատանք է, յորատել փրկատըստը՝ լաւը ընելու մտահոգութեամբ, այլ խօսքով՝ առանց յուսահատելու նորութիւններ յայտնադործելու, ստեղծելու, հասկցուելու եւ սիրուելու մարդկային ճիւղն է, ընթերցողին եւ հասարակութեան հետ տեսակ մը կապ ըստեղծելու սրահանջն է, հաղորդակցելու զոպարիկ լեզու մը:

● Սրբ «Կալոսը» ի աշխատակցի սկըսաք, երզիծանկարչութեան նկատմամբ

այս պատկերացումը ունէի՞ք, քէ անկուս բիւրեղացաւ եւ ձեզի համար համագում դարձաւ՝ տարիներու փորձառութեանց բովէն անցնելով:

— Ո՛չ մէկ կասկած, որ նման համագում մը տարիներու հետեւողական փորձառութեան կը կարօտի: Ինչպէս ըսի, «Կալոսը» ի էջերուն լոյս տեսած իմ երզիծանկարները առաջին լուրջ փորձերս էին: Մնաց օր, անոնք չէին յաջողած ձերբագրատուի իրենց պատանեկան նախնականութենէն: Հիմա, երբ արտոյակնարկ մը կը նետեմ աւելի քան 50 տարիներու երզիծանկարչական գործունէութեանս վրայ, դարձանքով հարց կու տամ ինքզինքիս, որ «Կալոսը» ինչպէ՞ն տպած է պատանեկան այդ երզիծանկարներս, ուր զգալի է հասունութեան պակասը՝ թէ՛ իբրեւ ոճ եւ թէ՛ իբրեւ խօրք:

● Ուրեմն, Տիրան Անէմեան երզիծանկարչին գործերը ո՞ր քուսակնին յայտնուի սկսան: Յետոյ, ի՞նչ դեր կը վերագրէք Ֆիլիպ Արփիարեանին, ձեր գերմանացի ուսուցիչին եւ «Կալոսը» ին: Հարցումը աւելի յատակացնելով՝ ըսեմ. «Եթէ ամենք չնպաստէին ձեր կազմաւորման, պիտի հասնէի՞ք հոն՝ ուր որ էք այսօր»...

— Նախ՝ պատասխանեմ առաջին մասին: «Կալոսը» էն կար ես շատ երզիծանկարներ գծած եմ, սակայն իմ փնտռածըս դատեմ եմ 1936ին, երբ ժողով Նաքթաշի հրաւէրով պայմանագրուեցայ Փրքանտատա «Լ'Օրիան»ին հետ: Այս համաձայնութիւնը անկիւնադարձային նշանակութիւն մը ունեցաւ ինծի համար, որովհետեւ «Լ'Օրիան»ով իմ առջեւ բացուեցաւ բոյն տպարէզ մը:

Իսկ երբ «Լ'Օրիան» ի հետ պայմանագրուեցայ, արդէն կտրած էի նախապատրաստական երկար ճանապարհ մը: 1923ին, հրատարակ իջած էի անձնական ցուցահանգէսով, աշխատակցած՝ «Սուրիանայ տարեգիրք»ին եւ այդ օրերուն լոյս տեսնող պարբերական մամուլին: Այլեւս իր անունին շուրջ հետաքրքրութիւն ստեղծած ու փնտռուած երզիծա-

Նկարիչ մըն էի, որ աւելի ուշագրաւ դէմք  
դառնալու բախտին արժանացաւ, երբ իր  
առջեւ բացուեցաւ ամէնօրեայ ներկայու-  
թիւնն զառնալու առիթը:

Ինչ կը վերաբերի առաջին քայլերս  
առաջնորդած անձերուն կամ փորձերուս  
տեղ տուած «Վարվոռշ»ին խաղացած դե-  
բին, անկասկած, ես պիտի շարունակէի  
նկարչական փորձերս, տեղ մը պիտի  
հասնէի, բայց ո՛չ հոն՝ ուր հիմա եմ:  
Այս առիթով, կ'ուզեմ ընդգծել սկսնակ  
արուեստագէտին հասունացման դժով  
սւսուցիչին սննեցած դերին կարեւորու-  
թիւնը, որովհետեւ եթէ իր առաջին քայ-  
լերը նետով երիտասարդին փորձերը հո-  
ղածու սւսուցիչի մը կողմէ հՀօյանա-  
ւորուն՝ սկսնակ արուեստագէրը կրնայ  
ընթանալ խորիափումէ դէպի այլ խաբ-  
խափում:

● Ղիշդ բնորոշում մը կ'ընէ: Անկաս-  
կած, սկսնակ արուեստագէտի մը առա-  
ջին քայլերը կրնան բախիլ բազմաթիւ  
խոշորեղանկերու, երբ անոր փորձերը մո-  
տեն շահագրգռուող ուսուցիչի մը կողմէ  
չեն դեկլավարուիր: Փնտառուհներու կամ  
խարխալումներու համգրումը կրնայ  
տեղի երկար տեւել, եւ կամ ալ՝ արտու-  
շայտանելու ներքին պահանջը զգացող  
վաշտում արուեստագէտը կրնայ շեղիլ  
կազմաւորութեան նիշդ ուղիէն: Բայց  
ասիկա անհնարակիցի վարկածի չենք  
կրնոր վերածել, արովհետեւ թէ՛ նկար-  
չութեան, թէ՛ գրականութեան, թէ՛ ե-  
րաժշտութեան եւ թէ՛ այլ արուեստներու  
բնագաւառները կը հաշուեն այնպիսի՝  
տիրական անուններ, որոնք գրեթէ ու-  
սուցիչ չեն ունեցած, կամ այլ խօսքով՝  
իրենք եղած են իրենց ուսուցիչը եւ ի-  
րենց երիտասարդական փորձառութիւն-  
ներէն ու նոյնիսկ խարխալումներէն ֆա-  
ղած են իրենց ուղին ճշդօր կերտահանու-  
մեր, քելադրանքներ, հաստատումներ:

Բայց բուն հարցը ասիկա չէ: Եւ կա-  
րելի չէ համաձայն գտնուիլ ձեր այն մը-  
տածումին, ըստ որում՝ առանց ձեր ա-  
ռաջին քայլերը հունարած ուսուցիչնե-  
րուն՝ «ես պիտի շարունակէի նկարչա-



ԱՆ ԻՐԱՒԸ

ՅԱՆՈՐ ՕՇԱԿԱՆ

կան փորձերս, տեղ մը պիտի հասնէի,  
բայց ո՛չ հոն՝ ուր հիմա եմ»: Մեր կար-  
ծիքով՝ ասիկա վիճելի հաստատում մըն  
է: Տեղ մը հասնելու գեղեցիկ բախտով  
ծնած արուեստագէտը ինքնագարգացման  
նախքով եւս կրնայ հասնիլ իր նպատա-  
կակէտին: Գրականութեան եւ արուես-  
տից պատմութիւնը այս քեզին ի նպաստ  
ֆուէարկող բազմաթիւ անուններ կրնայ  
չիշել. օրինակ, իր ժամանակը յարթա-  
հարած մեր Դուրեանը, Փրանսացիներու  
նիւտրոն, ամերիկացիներուն Ուիլք-  
մէնը, իտալացիներուն Միքէլ Աննիոն,  
սպանացիներուն Սալվատոր Տալին, Փի-  
քասոն, Եւալլեն: Թերեւս, ստիկա իրենց  
նակատագիրն իսկ էր, չէին կրնար խու-  
սափիլ լինելութեան նախապահէն, ուրիշ  
ուղի մը դժուար թէ բնարէին: Զէ՛ք կար-  
ծեր...

— Համաձայն եմ ձեր այն տեսակէ-  
տին, որուն համաձայն՝ արուեստը մար-  
դուն հետ կը ծնի, թելադրանքով կարե-  
լի չէ արուեստագէտ դառնալ, երբ բնա-  
տուր չնորհը կը պակտի խնդրոյ առար-  
կայ անձին: Նաեւ համամիտ եմ այն տե-  
սակէտին, որ ինքնադարգացումով եւս

արուեստագէտը կրնայ ո՛չ միայն նուաճել գրականութեան կամ դեղանկարչութեան մէջ իրեն յարելել տեղ մը ապահովող պատուանդաններ, այլեւ կրնայ գտնուել ինդրոյ առարկայ ժողովուրդին ամէնէն հանճարեղ եւ ամէնէն տիրական զէմքերէն մէկը:

Բայց տարիկա ընդհանուր օրէնքի վերածելը, իմ կարծիքով՝ ճիշդ չէ: Դուրեանը, Ռեմպոն կամ Միքէլ Անճելոն բացառիկ ծնունդներ են եւ պէտք չէ մտնալ, որ ի վերուստ ընտրեալ այդ արուեստագէտները իրենց տաղանդին հետ միաժամանակ երկարատեւ փորձառութիւններէ ետք կազմեցին իրենց սեփական օրէնքները: Ասոնք բացառիկ բացառիկներ են, եւ բացառութիւններուն արժեչափերով ընդհանուրին մասին կարելի չէ խօսիլ:

Ահա թէ ինչու ես մեծապէս կը հաւատամ թելադրանքին անհրաժեշտութեան, դրական անդադարձի կենսական դերին: Պայմանաւ, որ թելադրանքը կատարուի տիրական զէմքերու կողմէ, իրենց լիութեան կարգ մը հանգրուանները յողթահարած մշակերական արուեստագէտներէ:

Բայց թելադրանքներն ալ ոչինչ կ'արժեն, եթէ սկսնակ արուեստագէտը գտնուող վիճակէն կրաւորական անտարբերութեամբ: Որովհետեւ, ինչպէս շատերու կողմէ հաստատուած է, արուեստագէտը Տ առ հարիւրով տաղանդ է, իսկ 95 առ հարիւր համեմատութեամբ՝ աշխատանք, յարատեւ, տքնաջան, հոգեւին աշխատանք:

Արուեստը ամբողջ կեանք մըն է: Հասնելու ճիղին ուժականութիւնը եւ սուսանումները արտայայտող ընդարձակ գաշտ մը, որուն բովանդակ տարածութիւնը ծաղկեցնելու, այսինքն՝ ստեղծագործելու համար, անխուսափելի անհրաժեշտութիւն են ե՛ւ թելադրանքը, ե՛ւ յարատեւ հաւատարմութիւնը, ե՛ւ ինքնուրոյնութիւնը, ե՛ւ քաջախիտութիւնը:

Կարճ խօսքով՝ արուեստի օրէնքը այսպէս է: Երբ քաջախիտութիւնը կու գայ՝ խօստանալի սւժը ուղէ թէ չուղէ կը նետ-


ուի արուեստի անհուն ծովուն մէջ: Որովհետեւ կը հաւատայ դիւր քաջախիտող վաւերական արուեստագէտին, եւ յետոյ՝ կ'ուզէ դուրս գալ մութէն, կ'ուզէ արժեւորել իր գոյութիւնը՝ իր կեանքին տարով յաւերժութեան պատրանքը:

● Ինչպէս ծանօթ է, ձեր յիսնամեայ գործունեութեան ընթացքին, աշխատակցած էք շուրջ երեսուս քերթերու: Եղած են տարիներ, երբ ձեր Բաղաճախան երգիծանկարները միաժամանակ յայտեսած են Բաղաճախանօրէն կամ Գաղափարակաօրէն իրարու հակադրուող մէկէ աւելի քերթերու մէջ: Մեր կարծիքով՝ արիկա յուրջ կարգ մըն է, որովհետեւ Բաղաճախան դիմագիծ ունեցող քերթի մը հետ յանձնառու ըլլալ՝ կը նշանակէ գառնալ ինդրոյ առարկայ օրաքերթին ուղեգիծին շատագուր: Լիբանանեան երգիծանկարչութեան սարագան այս է: Ո՛չ ոք կրնայ ժխտել այս բացայայտ իրողութիւնը:

Արդ՝ երբ երգիծանկարիչը կը գառնայ այս կամ այն քերթին գործակատարը, ան կը ստիպուի արտայայտել արտօնատէրին կամ խմբագրապետին կողմէ իրեն յանձնարարուած նւթը: Այսինքն՝ կը կորսնցնէ ո՛չ միայն իր մտածումները եւ կեցումները արտայայտելու ազատութիւնը, այլեւ՝ Բաղաճախանի եւ արտօնատէրի իրաւունքը, ստեղծագործութեան համար խիստ Էական եւ անփոխարինելի կենսանիւթը, մտածումներու քննիչ տուող աւիւնը: Այսպէսով, կամայ քէ ակամայ, երգիծանկարիչը կ'իջնէ ծաղրանկարչութեան յանախ գոեկեկացնող մակարդակին, կ'ըլլայ Բաղաճախանի մեքեային մէկ մասնիկը եւ, երբեմն, կը ստիպուի նոյնիսկ դէմ գործել իր համագումներուն:

Բայց այս կացութեան հետեւանքով ասացաքսած պարագութիւնը աւելի խոր է: Այն ողբերգութիւնը, որուն կ'ակնարկենք, արուեստագէտին անպահանջ, խեղարիւման նարեքութիւնն է, որովհետեւ այս ասպասոյց մընոյնարտին մէջ, արուեստագէտ երգիծանկարիչին ստեղծա-





ԼԵՎՈՆ ՆԱԻՈՒՆ ՎՐԱՅ...

ԼՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

գարծ ազդեցությունը կը սկսին ցամաքիլ, տեսադաշտիկը կը պղտորի իր ներաշխարհին ներս սպրդած անհարազատ պատյալակներուն միջամտութեամբ, քաղաքացիական արուարիւնը իր տեղը կու տայ գետնուսիւծեան ասպրիւտներին, կամ բախտաւոր պարագային՝ սեփական ոգի եւ արուեստագէտը յատկանշող էութեան զարգացման հարվոյթը կ'ընթացայ դանդաղօրէն, կը բախի հագարուսի բարդութիւններու, որոնք, անկասկած, կ'ունենան իրենց բացասական անդրադարձները:

Տասնամեակներու վրայ երկարած ձեր փորձառութիւններէն քաղուած խոստովանութիւնը կ'ընայ բանալ հետաքրքրական ու մութ ծալքեր: Կը հանէի՞ք այս մասին խօսիլ:

— Բնչո՞ւ ոչ: Կայութեան մօտէն հետեւած մտաւորականի հաստատումներ կը կատարէք: Անշուշտ որ ազատութիւնը կը խեղդուի. անշուշտ որ տեսողու-

թիւնը կը պղտորի. անշուշտ որ քաղաքացիական արուարիւնը կը կաշկանդուի: Ասոնք անփոփոխ ճշմարտութիւններ են, յայտ եւ կ'ուզեմ խօսիլ իմ անձնական փորձառութեան մասին:

Ասին մը, ես միտամանակ կ'աշխատակցէի «Սայխառ» հրատարակչատան, «Լը Սուար»-ին եւ «Տապպուր»-ին: Ենթացրէնք, որ նստած եմ «Սայխառ»-ի եւ «Անուար»-ի արածնատէր-խմբադասական Սայխա Յըլչէտյի գրասենեակին մէջ եւ միջանարտը պիտի որոշենք յաջորդ օրտան երգիծանկարը: Ան հարց կու տայ. «Ի՞նչ մտածեցիր»: Կը յայտնեմ մտածումս, որ յաճախ կը դիմաւորուէր «այս»-ով: Եւ որովհետեւ ես ծանօթ եմ թերթին քաղաքական ուղղութիւն՝ մտածումս կը որեւէ այդ ուղղութեամբ: «Տապպուր»-ի մէջ՝ անոնց ըմբռնումով, իսկ «Լը Սուար»-ի մէջ հրատարակուած ծաղրանկարով՝ ես կը բանաձեւէի իմ անձնական մտածումս: Անկասկած, «Լը Սուար»-ը բարեյախտութիւն մը եղաւ ինձի համար, ապա ընձ մը, սակայն պէտք է խոստովանիմ, որ «Սայխառ»-ի, «Տապպուր»-ի կամ այլ թերթերու աշխատակցելով՝ ես նաեւ կ'օգտուէի: Նուազագոյն պարագային՝ կը ծանօթանայի անոնց մտածելակերպին, կեցուածքները հիմնաւորող գրգռողամտանհրուն, համոզումներուն:

Այսպէսով, միեւնոյն նիւթը ես կը դժէի երեք անգամ, երեք տարբեր մօտեցումներով, ինչ որ ինձի կու տար մտածելու հարկաններս ընդլայնելու եւ, միւս կողմէ՝ առաւել ձեռալարծութիւն ձեռք ձեռք օգտակար պրոսեհութիւն մը:

Ուզենք կամ չուզենք՝ ա՛յս է ճակատակարար լիբանանցի երգիծանկարիչին, այսինքն՝ քաղաքական երգիծանկարներ գծող արհեստավարժ արուեստագէտին, որովհետեւ սերիշ լուծում չունի, ան չի կրնար հրաժարիլ զձեռք ներքին պահանջէն, իսկ որպէսզի իր գծածը յայտնեմ, պէտք է յարդէ իրեն տեղ տուած թերթին գլխաւոր: Ի վերջոյ, ինչպէս որ գերասանը բեմի պէտք ունի, ֆուլթայլիտար՝ գաշտի, դաշնակահարը՝ գաշնակի, ճիշդ այնպէս ալ երգիծանկարիչը թերթի պէտք ունի:

● Հասկնայի է ու կը բաժնենք ձեր այն մտածումը, քէ առանց քերթին՝ քաղաքական երզիծանկարիչը կալանարի մը կը վերածուի: Բայց չարեաց փսքազոյնը բնարելով՝ աւելի բախտաւոր չի դառնար: Ընդհակառակն, ո՛չ միայն կը գրկուի արուեստագէտին օգր հանդիսացալ ազատութենէն, այլև կը վերածուի սովորական գործակատարի մը, եկամուտ սպանովելու համար գրեւոր հիւսուածեղէն մեքենային պտուտակին կամ մէկ մասնիկին պէս բանի մը:

Ընդհանուրէն մասնակիին անցնելով՝ հարց կու տանք. «Հայ մամուլը աւելի հարագատ, աւելի նպատաւոր եւ առաւել շնչելի բեմ մը չէ՞...»:

— Ձեր կանխելիք: Սիւնուքահայ երզիծանկարիչին կայունութեան գլխաւոր պատասխանատուն, գլխաւոր յանցաւորը, դժբախտաբար, մեր հայ մամուլն է: Մենք ստիպուած ենք մեր եռանդը սպառել օտար թերթի մէջ, իբրեւ ասպարէզ դոյուլթին ունի միայն օտար թերթը, իսկ հայ թերթը՝ հոգեկան բաւարարութեան համար:

Ծառ յաւ դիտէք, որ ես աշխատակցած եմ «Ազգակի»ին, «Այգ»ին, «Քազի»ին, «Սփիւռք»ին եւ «Նայիրի» ամսագրին: Բայց իմ ներկայութիւնս եղած է պարբերաբար, հոգեկան դահայումի համար, եւ ոչ թէ իբրեւ ասպարէզ:

Մինչդեռ, օտար թերթերու մէջ ես դժած եմ շուրջ 30 հարար քաղաքական երզիծանկար: Անշուշտ, անոնց մէջ կայ ե՛ւ բախտաւորը, ե՛ւ յաջողածը, ե՛ւ ժամանակաւորը: Բոլորն ալ գլուխ-գործոցներ չեն: Երբեմն նիւթ մը կը շարշարէ քեզ, կը գծես մէկ, երկու, երեք անգամ, ուզածդ դուրս չի դար: Բայց որովհետեւ յաջորդ օրուան թիւին մէջ երզիծանկար մը պէտք է ըլլայ, կ'ընտրես ամէնէն յաջողը: Օրաթերթը նաեւ հեւք կը նշանակէ:

Երբ տարիները անցան, անդրադարձայ, որ հայ իրականութեան համար մընայուն բան մը պէտք է ձգեմ: Մտածեցի մեր մանուկներուն մասին, որովհետեւ, առհասարակ, մենք մոռցած ենք

մեր մանուկները: Մտածումս աւելի արմատացաւ, Երբ նոր հաստատուած պատկերասփիւռի ընկերութեան տնօրէնը՝ Լիւսիան Տահտաչ, ինձի առաջարկեց պատրաստել մանկական յայտագիր մը: Այս ծիրէն ներս կոտորուած առաջին աշխատանքս եղաւ «Երկինքը փուլ կուգայ» անուն հեքիաթին մեկնաբանութիւնը: 1968ին, ձեռնարկեցի «Քաջ Նազար»ին, որ ինձմէ խլեց աւելի քան մէկուկէս տարի՝ առանց նախադատարաստութեան եւ ուսումնասիրութեան յատկացած ամիսները նկատի առնելու: Յաջորդեց «Անխելի մարդը», իսկ հիմա, անշուշտ, կը մտածեմ այլ շարքերու մասին:

Կը մտածեմ այլ շարքերու մասին, բայց տակաւին նոյնիսկ հայերէնով լոյս տեսած չէ «Քաջ Նազար»ը: Որովհետեւ մեր գրականութեան մէջ մէկէ աւելի դրոշմներու կողմէ մշակուած այս սքանչելի հեքիաթը պատկերազարդելով, ես ո՛չ միայն կը նպատակադրէի «Քաջ Նազար»ը աւելի եւ աւելի սիրելի դարձնել մեր հայ մանուկներուն, այլև մտածած էի նաեւ անոր թարգմանութեան մասին:

Ես կը հաւատամ, որ անդերէնի, ֆրանսերէնի, գերմաներէնի, արաբերէնի կամ այլ լեզուներու թարգմանուած «Քաջ Նազար»ի պատկերազարդ հատորին միջոցաւ օտարներուն պիտի ծանօթացուին հայ գիրն ու գիծը: Այսպէսով, օտար պղտիկներուն հետաքրքրութեամբ՝ նաեւ պիտի արթնցնենք մեծերուն հետաքրքրութիւնը, զանոնք մղելով դէպի հայ գիրը, հայ գիծը, հայ մշակոյթը:

Մնաց որ, «Քաջ Նազար»ը արեւելեան հեքիաթ մըն է, իսկ եւրոպացիները եւ ամերիկացիները արեւելեան մշակոյթին հանդէպ օրըստօրէ աւելի հետաքրքրութիւն կը ցուցաբերեն: 25 կամ 50 հազար տարաբանակով լոյս տեսած պատկերազարդ «Քաջ Նազար»ի անդերէն ընադիրը կրնայ հրաշքներ դործել: Անկապիտի ըլլայ մուլթին մէջ մնացած հայ մշակոյթին մէկ երեսին արդար յաղթանակը, մե՛ր յաղթանակը եւ ոչ թէ միայն թուամենանի ու Տիրանի յաջողութիւնը:



# MY NAME IS ARAM

ԳՐՈՒՄ ՏԻՐԱՆ ԱՃԵՆՆԱՆԻ

● Գնահատելի գործեր ըլլալով հանդերձ, այս շարքերը ուղղակիօրէն չեն ստրկնուիր մեր առօրեային հետ: Ճիշդ է, որ թէ՛ Քաջ Նաղարը եւ թէ՛ Անխելը մարդը իրենց ժամանակը յաղթահարած եւ բոլոր ժամանակներուն պատկանող հերոսներ են, այսուհանդերձ, ամենք անուղղակիօրէն կը բնազատեն մեր կեանքը: Մինչդեռ, երգիծանկարիչէն կամ երգիծագիրէն կ'ակնկալուի քանդակել ի՛ր ժամանակի հերոսները, աւելի միշտ՝ ա՛յն հերոսները, որոնք ժամանակի մը ընկերային, ազգային, մարդկային յոռի բարքերն ու երեւոյթները քանակազատելով՝ կը պարզեն նոյն ժամանակը, ներկան:

Շրջան մը այս ուղղութեամբ երգիծանկարներ գծելէ ետք, վերջին տասը տարիներուն գրեթէ հեռացաք ընկերային-ազգային բնազատութիւններ կատարող եւ այդ քանակով՝ հանդիսատեսը կ'ընթացողը մշմարիտին հրաւիրող երգիծանկարներէ: Ասիկա ժամանակաւոր հեռացում մըն է, թէ որոշ փորձառութիւններու լոյսին տակ առնուած որոշում մը:

— Ինչպէս ըսիք, ես փորձած եմ երգիծանկարչութեան բոլոր սեռերը: Ըն-

կերային երգիծանկարչութիւնը, որպէսզի իր դերը կատարէ, երգիծանկարիչին կողքին կը պահանջէ քննադատութիւնները բնորոշող լայնատես հասարակութիւն մը: Դժբախտաբար, մենք դիւրադրած ժողովուրդ ենք, շուտ կը ջղայնանանք, շուտ կը տխրինք, շուտ կը յուզուինք: Տարիներ շարունակ ես փորձած եմ պատասխանել հարցումի մը: «Ինչո՞ւ համար մենք միայն քանի մը երգիծագիր ունեցած ենք՝ Պարոնեանէն սկսեալ եւ մինչեւ Նշան Պէշիկթաշեան»: Կը կարծէ՞ք, որ սրտաճառը միայն զրական այս սեռին պահանջած բացառիկ տալանդն է: Ըսած են ու դուք ալ կրնաք ըսել, որ երգիծագիրը կը ծնի եւ ինքզինք կը սարտադրէ: Ասիկա ճիշդ է, բայց ամբողջական ճշմարտութիւնը չէ, որովհետեւ, միշտ իմ համոզումով՝ բեմը անհրաժեշտ է, իսկ սկսնակ երգիծագիր մը նախ եւ առաջ դիւրք պահանջող ընթերցողի պէտք ունի: Երգիծանկարիչին պարզան եւս նոյնն է:

● Այս ուղղութեամբ որեւէ փորձ կատարած էք...

— Անշուշտ: Ես պէտք է ունենայի իմ երգիծաթերթս, չեղաւ: Նոյնիսկ անուր

որչա՞ծ էի՝ «Նժարին լծակը», որ պիտի ըլլար անկախ, անկաշկանդ եւ ճշմարտութիւնները բարձրաձայն գոռացող բեմ մը: Հոն տեղ պիտի դանձին մեր բոլոր մտածողութիւնները ներկայացնող խըմբադիրներ: Մարտիանը՝ ասմկազար, Նշան Պէշկիթաշեանը՝ գաշնակցական, ես՝ սորոտական, կամ ինչպէս կը ներկայացնեն՝ աջ: Չեղաւ:

Բարձրագոյն բարեկամներ թերազրեցին, «Վազ անցիբ այս պատմութեանէն, մէկ երկու թիւ կը հանես եւ յետոյ՝ դէրջ»: Նայնիակ Վրացեանին պէս պատկառելի անձնաւարտութիւններ եւ յարգելի մտաւարականներ գիտել առին, որ մեր իրականութեան մէջ նման ծրարիք մը չի կրնար յաջողիլ:

● Անկարելիութեան մը մասին կը խօսիք, որուն կարելի է համաձայն չգտնելի, մանաւանդ այն պարագային, երբ անցեալին ու մեր ներկայ ժամանակներուն միջեւ բազմապատկան մը կատարեմէ:

Այսօրուան Պէյրութը, անկասկած, Պոլիսէն կամ Թիֆլիսէն աւելի պայծառ պատկեր մը կը պարզէ՝ քէ՛ իրքեւ ազգային կառոյցներ, քէ՛ իրքեւ ընկերային-տնտեսական մակարդակ, քէ՛ օրըստօրէ՛ քաղաքականացնող պահանջատէր հայութիւն, եւ դեռ՝ մէկէ աւելի այլ դիտանկիւններէ մտնեցած:

Ուրեմն, ինչո՞ւ անկարելի կը սկստէ հայերէն երգիծարքերի մը հրատարակումը:

— Որովհետեւ երգիծանքը աջ ու ձախ չունի: Հիւմուրը պատմութիւն կը նշանակէ եւ առանց պատմութեան՝ ո՛չ երգիծողութիւնը եւ ոչ ալ երգիծանկարչութիւնը կրնան ծաղկիլ: Պիտի հարւածես, երբ անհրաժեշտ է, պիտի հարւածես ժպտալ ու սրամտութեամբ՝ մտրտելու ճիշդ ուղիին վերադարձնելու, գաստիարակելու նախանձախընդրութեամբ:

Իմ կարծիքով՝ մենք տակաւին երգիծանքը գիտաւարող լայնատեսութեան չենք հասած, գիւրազգած ենք եւ շատ

քիչ պարագաներուն կրնանք հանդուրժել քննադատութիւնը: Այլ իսկ պատճառով՝ ես ուզեցի, որ բոլոր հասանքները ներկայ ըլլան հրատարակելիք երգիծաթերթի մէջ, որպէսզի «Նժարին լծակը» նախ արտայայտէ բոլոր քննադատութիւնները եւ ինքնաքննադատութիւնները, եւ յետոյ՝ ըլլայ բոլորին երգիծաթերթը:

● Մշակած էի երգիծանկարչական գրիքէ բոլոր սեռերը, բայց մեքէ կը կարծեմ, որ ամենցմէ մէկն ու մէկը աւելի կը խօսի մեր սրտին: Ո՞րն է մեր նախընտրած սեռը:

— Դժուար հարցում մը, որուն ամբողջական ձեւով թերեւս չկարենամ պատասխանել: Բայցն ալ վարձած եմ. քաղաքական երգիծանկարչութիւնը՝ իրքեւ սաղարէզ, իսկ միւսը՝ հոգեկան գոհացումի համար: Բայց որովհետեւ միշտ ալ դրոշմած եմ հայկական գործ մը ձգելու պահանջը, ուրեմն՝ «Վազ Նազար»ը, «Անխելի մարդը» եւ մեր արուեստագէտներուն գիտանկարները սրախ աւելի մօտեցած են: Այսուհանդերձ, նայնքան կը սիրեմ քաղաքական քանի մը երգիծանկարչներու: Դնարութիւն կատարելը դժուար է, կարեւորը բան մը բրած ըլլալու հոգեկան գոհունակութիւնն է: Ես գոհ եմ եւ, միտմամանակ՝ դժգոհ, որովհետեւ ծրարիքնեկէ՛ս ոմանք տակաւին առատարտ են կամ կիսատարտ:

Այնուամենայնիւ, ես մտանաւոր մը տերմութեամբ մը կատարած եմ «Ղաւնքաւսին արկածախնդրարքիւնները» շարքին, որովհետեւ Ղանթուսը իմ կերտած արկարտ է: Համեստ, խմբող, սրամիտ, պատրաստարան Ղանթուսը լիբանանցին մարմնաւորող այն տիպարն է, որ ծնաւ 1950ին՝ Ամերիկեան հիւանդանոցին մէջ, «հայր ծանօթ, մայրը՝ անծանօթ», ինչպէս կ'ըսեն ֆրանսուացիք:

250 արկածախնդրութիւններուն վերայ, որոնց իւրաքանչիւրը կը բազկանայ երեքէն հինգ երգիծանկարներէ, այս վերջին սրտերազմին ընթացքին աւելցան 50 նոր արկածախնդրութիւններ, իսկ ներկայիս իր երկունքը կ'ազրի աներե-

ւակայեցի պայմաններու մէջ կողոպուտի ենթարկուած մարդու անձնական փորձասութեամբ ապրուած սրբերգութեան մը երգիծանկարումը :

● Քապաքական երգիծանկարչութիւնը վտանգաւոր ասպարէզ մըն է : Վտանգաւոր է, որովհետեւ երգիծանկարիչին հերոսները սովորական մարդիկ չեն, այլ՝ իշխանութեան մէջ իրենց խօսքը ունեցող պատասխանատուները եւ հանրային դէմքեր : Այդ իսկ պատճառով, այս սեռը մըշակող երգիծանկարիչը կրնայ հալածուիլ, կամ՝ հաշուետուութեան կանչուիլ :

Աւելի՛ն՝ յար եւ նման հրապարակագիրին՝ ան կրնայ դատուիլ եւ նոյնիսկ բանտարկուիլ : Հետաքրքրական է գիտնալ, քէ ձեզի հետ նմանօրինակ անխորժ դէպք պատահած է :

— Բարերախտարար, միայն մէկ դէպք : Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին, երբ «Լ'Օրիան»-ը ամէն օր գրաքննութեան կ'երթար, Մուսոլինին ձաղկող երգիծանկարս անպատշաճ նկատուած էր : Հետեւորար, ինչորոշ ատարկայ երգիծանկարը չտպուեցաւ :

Բացի այս դէպքէն, ինծի հետ սերիշ ինչոր մը չէ պատահած եւ, թերեւս, պատճառը այն էր, որ ես հարցք մինչեւ հոն չէի հասցներ : Գիտէի արդիւնուած սահմանները եւ ըստ այնմ կ'որոշէի նիւթին կառոյցը, բովանդակութիւնը, կըստ միթին ուժը, եւայլն :

● Զգուշութիւնը, որուն մասին մէկէ աւելի անգամներ ակնարկութիւնները քրիք, չէ՞ք կարծեր, որ անուղղակիօրէն կը բքացնէ երգիծանկարիչին խայթելու յատկութիւնը, այլ խօսքով՝ գայն կը վերածէ սաթիւրէն խուսափող սայրնային արուեստագետի մը, որ միշտ կը փորձէ հեռու մնալ իր հերոսները վշտացնող կացութիւններէ : Այս արնշուքեամբ ի՞նչ կը մտածէք :

— Կարեւորը շարժումն է, կենդանութիւնը եւ դրական մօտեցումը : Երգիծանկարին եւ ծաղրանկարին միջեւ յստակ սահման մը կայ : Երգիծանկարը սպիւն-

ւայման կը միտի, իսկ ծաղրանկարը՝ գեհեղութեան, որովհետեւ միշտ կ'ուզէ դժնայում տալ ընթերցողին կամ հանդիտատեսին : Իմ կարծիքով՝ երգիծանկարիչը կամ երգիծարանը շատ զգոյշ պէտք է ըլլան դեհեղութիւններու մէջ իշխուլ փորձութիւններէն, որովհետեւ այս երկու դաշտերը իրարմէ բաժնուած են շատ բարակ եւ խորոզ վարպետով մը :

Բարձրաց ըսած եմ եւ այս տարիսով եւս կ'ուզեմ կրկնել, որ երգիծանկարին մէջ պէտք է ըլլայ պատմութիւն, դուարթախոսութիւն եւ ս'չ թէ վերաւորող կըսու հեղանք : Այլ խօսքով՝ անիկա ընթերցողը մպիտով պէտք է զարգացնէ, մտածելու նոր տարիք մը պէտք է ներկայացնէ՝ քոչարկուած տղեղութիւնները չափազանցուած, պարզ, բայց ժուժկալ գիծերով ընթերցողին աչքին առջև պարզելով :

● Ձեր ակնարկութիւնը արտաքին տրգեղութիւններու մասին է աւելի : Իսկ երբ բնական արտաքինով կամ գեղեցիկ երեւոյթով մարդու մը ետին կայ հոգեպէս տգեղ խարբա՞ր մը, պատեհապա՞շտ մը, շողոքո՞րք մը...

— Հասկցայ : Երբ հերոսին արտաքինը տղեղ է, կասկած չկայ, որ դորժը կը դիւրանայ : Բայց երգիծանկարը միայն չափազանցուած արտաքին գիծեր չէ, անկէ աւելին է : Այսինքն՝ դուն այնքան պէտք է ճանչցած ըլլաս երգիծուող մարդը, որպէսզի անոր նկարագիրը, հոգին եւ մտքովը հստակը կարգացուի դէմքին գիծերուն միջոցաւ : Բարի մարդը եւ դրամաշորթը նոյն աչքերը չեն կրնար սնեհալ, չունին :

Անշուշտ, մարդը ընտրող աչքի մը մէջ ամբողջ հողեմիքակ մը, խառնուածք մը գնելը շատ դժուար հարց է, բայց երգիծանկարիչէ մը ակնկալուած առաջնահերթ պայմաններէն մէկն է : Եւ եթէ երգիծանկարիչ մը այս յատկութիւններուն չէ տիրացած՝ այն ատեն ո՞րք մնաց արուեստագէտը...

● Կուզէիմ կանգ առնել երկու կէտերու առջեւ: Առաջին՝ երգիծանկարիչ Տիրամի գիծերը շատ նուրբ են, ովուհ եւ կեզասահ: Երկրորդ՝ ձեր դիմանկարները (յա՛տկապէս «Հիները եւ նորերը, զորս ճանչցայ» շարքին Աղբալեանը, Թէֆէեանը, Սարոյեանը, Զօյանեանը) ո՛չ քէ երգիծանկարուած են, այլ դիմանկարուած՝ որոշ գուարքախոհութեամբ մը:

Արդ՝ հարց կու տամք. առաջին՝ շատ նրբացած, գծանկարչային ազնուութեան հասած գիծերը անուղղակիօրէն երգիծանքի ջերմութիւնը բարեկերպած, այսինքն՝ մեղմած չե՞նք ըլլար:

Երկրորդ՝ ինչո՞ւ համար խուսափած էք Զօյանեանը, Թէֆէեանը կամ Սարոյեանը երգիծելէ: Մրամուտեան երանգով մը պատուած այդ դիմանկարները արդեօք ձեր երախտագիտութի՞ւնը դրսեւորելու համար գծուած են, քէ իբրեւ երգիծական դիմանկարներ:

— Ինչ կը վերաբերի գիծերուն, կրնայ ըլլալ, որ անոնք շատ բարեկերպ են, ձեր սկիզբէն ճարտարագիտութիւնը կամ սուր կամքի կրնան չունենալ: Բայց ես կը կարծեմ, որ կարեւորը երգիծանկար մը կը շարունակ կացութիւնն է, նիւթը:

Թէ այդ նիւթը կոշտ գիծերով դրծուած է կամ նուրբ, ազնիւ եւ ուսումնասիրուած գիծերով, այդքան ալ կարեւոր չէ: Կարեւորը երգիծանկարին շարժունութիւնն է, աստիճանը, եւ անշուշտ՝ փոխանցած պատգամը: Կրնայ պատահել, որ շատ կոշտ գիծերով կառուցուած նիւթ մը ձախողի, եւ նիւթը յաջողի՝ երբ դժուար է նուրբ եւ ուսումնասիրուած գիծերով: Հակառակն ալ ճիշդ կրնայ ըլլալ: Կարեւորը, ինչպէս ըսի, երգիծանկարին կենդանութիւնն է, մնացեալը երկրորդական է:

Պիտի ուզէի աւելցնել, որ պարզ դիծը շատ աւելի դժուար է, քան կոշտ, վայրազ կամ չզգուած գիծը: Այս ասիւթով կ'ուզեմ նաեւ շեշտել, որ մէկ-երկու նուրբ ու հեզասահ գիծերով երգիծանկար մը շարադրելը իսկապէս աւելի

դժուար է, ասուել ճիշդ ու աստիճան կը պահանջէ, որովհետեւ եթէ այս ոճով կառուցուած երգիծանկար մը յաջողի՝ անիկա պիտի ըլլայ պարզիմ վստահութիւնը: Մինչդեռ, կոշտ եւ խճուղուած գիծերով միայն տարածութիւնները կը ծածկես, կը քոչարկես թոյլ ու սպեղ մասերը երգիծանկարին: Ես այս վերջին դրայրացի կը նկատեմ շարունակ պէս բան մը, եւ ինչպէս ասեցի ասլիան պարագային, այնպէս ալ ասեցի ու թոյլ երգիծանկարին մէջ, որքան ալ շարք ու ծարիր դործածես... ասեցութիւնը ինքզինք կը պոսայ:


Անշուշտ, այս ըսելով՝ ես ո՛չ նիւթին կառուցումը կ'անտեսեմ, ոչ ալ դրծուածութիւնը: Ամէնէն հետաքրքրական նիւթն իսկ, երբ աստիճան ձեւով կը ներկայացուի՝ կը գրկուի հազարգահանութիւնէն, շունչէն, այսինքն՝ ճիշդ հիւսնող մտքու պէս տկար դարձ մը կը դառնայ: Եւ որպէսզի գործերս ասոյց ու քաշողական բլրան, ես կ'աշխատեմ ծայր աստիճան ուսումնասիրուած գիծերով: Ասիկա ոճի հարց է:

● Իսկ դիմանկարներո՞ւ հարցը...

— Շատ ճիշդ նկատողութիւն մը ըրիք. անոնք մեծարանքի արտայայտութիւններ են, արձաններն են մեր սքանչելի դրամականներն, որոնք ծանօթանալու եւ անոնց մակերմութիւնը ապրելու բախտը ունեցած են: Եւ որովհետեւ այս անձերը ես մօտէն ճանչցած եմ, այդ իսկ պատճառով յաջողած եմ գուրս դալ երգիծանկարչութեան ընկալեալ սահմաններէն՝ գուարքախոհ գիծանկարներով այդ բացառիկ արուեստողներն ու մտաւորականները խորհրդագրակերելու նպատակով:

● Արուեստի մնայուն գործեր տալու ձեր ցանկութիւնն ալ արդեօք դեր մը ունեցած է...

— Անկեղծօրէն բռնեմ, որ նման ցանկութիւն մը չեմ ունեցած: Յետոյ, իմ համոզումով՝ ո՛չ աւագ արուեստ կայ, ոչ ալ կրտսեր արուեստ: Որեւէ գործի մէջ,



որեւէ երգիծանկարի կամ պատանու պարագային, կամ արուեստ կայ խնդրոյ ասարկոյ ստեղծարարութեան մէջ, կամ ալ չկայ: Արուեստը համեմատութիւններով կարելի չէ գնահատել:

Օրինակ, արդի դեղանկարչութիւնը մեծապէս օգտուած է երգիծանկարչութիւնէն: Համաշարփութիւնները խախտող վերացապաշտ պատանուներուն գիծերն ու կառուցները յաճախ այլանորոգուած երգիծանկարչութիւն մը կը յիշեցնեն: Եւ երբ երգիծանկարիչ մը եւ վերացապաշտ

արուեստագէտ մը նոյն նիւթը կը գծեն, իմ համոզումով՝ երգիծանկարը շատ աւելի յստակ, շատ աւելի խօսուն եւ աւելի հասկնալի կ'ըլլայ:

● Կարգ մը արուեստարաններ, երբ երգիծանկարչութեան մասին կը խօսին, երգիծանկարչութեան պատմութիւնը ներկայացնող ակադեմիական տուեալներէն շատ աւելի հեռուները կ'երթան, յայտնելու համար ա՛յն տեսակէտները, որուն համաձայն՝ երգիծանկարչութիւնը

անգիտակցարար ծնունդ առած է Ափրիկէի նախնական արուեստագէտներուն հետ եւ հոյնիսկ անկէ առաջ: Համաձայն էք այս կարծիքներուն:

— Ըսուածին մէջ որոշ ճշմարտութիւն մը կայ, բայց այսօրուան մեր ըմբռնողութեամբ՝ անոնք ո՛չ թէ երգիծանկարներ են, այլ՝ երգիծանկարչութեան հուճակներն իրենց մէջ կրող գործեր:

Յրինակ, չափազանցուած չափերու եւ ձևերու կարելի է հանդիպել Իտալական արձանակարներուն մէջ, փարաւոնեան փորագծանկարներուն մէջ: Ճիշդ է, որ այդ գործերուն մէջ եւս ակրող ասարը դիժն է, սակայն, անոնք պարզապէս երգիծանկարչութեան կը մօտենան:

Բոլորիս ծանօթ է, որ Ուայթ Տիգնին մեծապէս ներշնչուած է եգիպտական փորագծանկարներէն: Բայց հոս հարց մը կայ. այդ գործերուն հեղինակները մարմնագիտութեան (անաթոմի) մասին զազափար իսկ չունէին: Մինչդեռ, արդի դեղանկարիչները այս բոլորը լաւապէս գիտեն... Բայց իրենց գործերը մարմնագիտութիւնը խեղաթիւրող այլանդակութիւններ են:

● Ի՞նչ է ձեր կարծիքը հայ երգիծանկարչութեան ներկայիս եւ ապագային մասին:

— Յաւ ի սիրտ, լուստես չեմ: Սարուխանը եւ Վարդան Աճէմեանը ընդմիջտ մեկնեցան մեր աշխարհէն, վաղը չէ միւս օր, Տիրանն ալ պիտի մեկնի, այսպէս է կեանքին օրէնքը: Բայց, գրթբախտորար, ձգուած բացը լեցնելու կիրքով դսպանակուած նորեր չկան:

Անշուշտ, կան շնորհալի երիտասարդներ, որոնք, սակայն, երգիծանկարչութեան նուիրուելու յանդիմութիւնը չունին: Օրինակ, հոս ունինք երգիծանկարչութեան բնատուր ձիրքով օժտուած երիտասարդ մը՝ Զաւէն Ճապուսեանը, որ Ամերիկեան համալսարանին մէջ կարճեմ բժշկութեան ուսանող է: Երբ փայր բժշկութեան վկայականը ստանայ՝ պիտի կլանուի իր ասպարէզով, իսկ բախտաւոր պարտոյային՝ պիտի շա-

րունակէ պարտոյայարար երգիծանկարներ դժե՛յ՝ իրբեւ դրադուճ կամ ժամանց:

● Իսկ Հայաստանի՞ պարագային...

— Վարդան Աճէմեանի տաղանդով արուեստագէտ նոր երգիծանկարիչի մը փորձերուն ցարդ չեմ հանդիպած: Կան արժէքաւոր երգիծանկարիչներ, ինչպէս՝ Եարալեանը եւ Սերգէյ Արուշեանը: Սակայն ես կազմած եմ այն սպաւորութիւնը, որ որոշ երկչտութիւն մը կը տիրէ անոնց գործերուն մէջ, ասհասարակ չունին այն խենթ համարձակութիւնը, որուն շնորհիւ երգիծանկարը կ'օժտուի յարաշարժութեամբ, պրկուածութեամբ եւ դիտող աչքը մաղխապնդ սրամիտ ուժականութեամբ:

● Այսինքն՝ յոռետե՞ս էք...

— Ե՛ւ յորետես եմ, ե՛ւ յոռետես չեմ: Բացատրեմ. ա՛յն սղղը որ Պարսեան, Օսեան, Լեւ Կոմսար եւ Պէշիկթաշեան ծնած է, ա՛յն սղղը, որուն ծոցէն ծրնունդ առած են Արամ Անտոնեանի, Վարդան Աճէմեանի, Սարուխանի, Զիք Տամատեանի նման երգիծանկարիչներ (պիստ, որ Տամատեան այլեւս չի դժեր), անպայման նա՛եւ նորերու ծնունդ պիտի տայ: Քերպի եւ Հոյիւի յաջողութիւնը լաւատեսութիւն ներշնչող ապացոյց մըն է, բայց, ակաս՞ս, որ երկուքն ալ իրենց ուժերը կը սպառեն հասարակ ընթերցողին հասարակ նիւթեր արտադրելով, եւ այն ալ՝ փարիզեան ամէնէն չուկայիկ շարսթաթերթերուն մէջ:

Թերեւս քանի մը տասնեակ տարիներ այսպէս շարունակուի, բայց անխուսափելիօրէն կու գայ այն օրը, երբ ազդի մը ամբողջ գուարթախոհութիւնը կը խտանայ տաղանդաւոր երգիծանկարիչի մը մէջ: Յետոյ, ս՞ով լուաւ, որ տասըքսան տարին անկամ մը անպայմանօրէն Մոյլիէս մը, Պարսեան մը կամ Օսեան մը կը ծնին: Երբեմն պէաք է դարբերով սղատել, որպէսզի երկրորդ Պարսեան մը ծնի, երկրորդ Շէշքոփի մը աշխարհ նուաճէ, եւ կամ՝ Զարս Զեփոյին մը հոմայն աշխարհը ինդոպնէ լայու տոտի-



ճան, կամ ալ հանդիսատեսներուն յուզումնահար հողինները թեթեւցնէ ասող-ջարար քահ-քահով...

● Սովորական հարցումով մը սկսած մեր այս գրույցը պիտի փափաքէիմք փակել Լոյսնիան ընթացիկ հարցումով մը. «Յիսուսն տարիներու ձեր փորձառութեան լոյսին տակ՝ ի՞նչ պատգամ պիտի ուզէիք փոխանցել սկսնակ եւ ցարդ անձաւօր երգիծանկարիչներուն»...

— Եղէք խոնարհ եւ համեստ, ահանջ տուէք բոլոր թելադրանքներուն, բայց սենեկէք ձե՛ր գատողութիւնը: Երբե՛ք մի փորձէք ընդօրինակել նոյնիսկ ամէնէն հանճարեղ երգիծանկարիչներուն դուխ-դործոյցները, այլ՝ թուղթին վրայ արտայայտեցէք ձեր պարզ մտածումները: Հաստացէ՛ք մարդուն, հաստացէ՛ք արուեստագէտին, եւ քա՛ղ խնայէք, որ արուեստագէտը՝ արուեստագէտ ծներով հանդերձ, իրաւ եւ ամբողջական արուեստագէտ կը դասնայ անդադար եւ յարատեւ աշխատանքով միայն:

Իմ կարծիքով՝ արուեստը վերջ չունի: Միշտ պիտի շարունակես, ճիշդ այնպէ՛ն՝ ինչպէս սկսած էիր թէկուզ տասնեակ տարիներ առաջ: Եւ եթէ օր մը նոյնիսկ սրոշ բարձունքի մը հասնիս՝ միայն պիտի կարծես, թէ հասած ես եւ պիտի շարունակես:


Ես արուեստը կը նմանցնեմ բարձր շէնքի մը, որուն զաղաթին հասնելու պոյնջտը մըն է արուեստագէտին ամբողջ կեանքը: Իսկական արուեստագէտը անդադար կը փորձէ ինքզինք դերագանցել, եւ երբ օր մը կը հասնի տարիներ եւ տա-



ԿՐԱԿԸ

րիներ շարունակ իր երազած բարձունքին՝ կը տեսնէ, որ ամենաբարձր գաղաթը կարծուած բարձունքէն անդին կան աւելի՛ երկնամերձ շէնքեր, իսկ անոնց ետին՝ առաւել եւ առաւել բարձրադիր շէնքեր: Այդ իսկ պատճառով, ընչ առաջ քսի եւ հիմա ալ կ'աղեմ ընդդէմ, որ արուեստի մէջ միայն ու միմիայն պիտի կարծես, որովհետեւ ա՛յս է արուեստը, իրա՛ւ արուեստը, ինչպէս պիտի ըսէր մեր մեծատաղանդ դրողէտը՝ Յակոբ Օշական:

Հարցազրույցը վարեց՝  
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



— ԱՐԱՒԱՍԻԿ ՓԱՐԻՋԻ CURIOSITE ՆԵՐԸ, ԷՅՖԵՒ ԱՇՏԱՐԱԿ, ՅԱԶԹԱԿԱՆ ԿԱՄԱՐԸ, ՆՈՐԸՐ ՏԱՄԸ, ՊԱՆԹՅՈՒՆ ԵՒ...ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԸ:

### Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ա Ը

Տիրան Աճէմեանի քրոջինը, յաճախ, կէս օրուան մէջ, մինչեւ դիշեր, կ'որձա-  
կին յատկանշական ճիւղեր, գիծերը կը տեղափոխուին ու կը նստին՝ դրաւելով իրենց տե-  
ղերը, սմանք կը բարակնան, խոյ ուրիշ դիշեր ու կ'ուժովնան. կը շարունակուի ձեւափո-  
խութիւնը մինչեւ ոճաւարսմ, մինչեւ կատարելագործութիւնն ու կը ծնի ծաղրանկարը: Երբ  
դէմք մը, ձերբակալուած է, խրատուած, կլլուած ու մարտուած իրմէ եւ նետուած իր երե-  
ւակալութեան դոնձարանին մէջ, ա'լ իր բեհեզիւրուցեան հրամանին ներքեւ է: Այլ դէմ-  
քը, ըլլալ նոյնիսկ առիւծի, դայլի կամ շան, կը դառնայ կրկէսի կենդանի ու ծաղրանկա-  
րէջին հրահանդին համաձայն՝ կը ցատկէ, կը թափուի, կը նահանջէ, կը յարձակի, կը վի-  
րաւորուի, կը խօսի Բամբազիւնի մը մէջ:

Տիրան Աճէմեան ունի կրակէ արագութիւն: Ստանան դանդաղաշարժ չի կրնար ըլ-  
լալ: Երգիծանքը, դիրտով ու քարտով, եւ ծաղրանկարը իր գիծով ու դոնով, դժուարի ար-  
ւեստներ են եւ սագայէլի մասնագիտութիւններ, սրտնը կը գործադրուին կայծակնարար:

Երգիծագրիչներն ու ծաղրանկարիչները շուտ ու սուր կարողներ են: Այլ ասպար-  
բէզներուն մէջ անտաղանդներ ու սուր կլլուներ են, սրտնը անկարող խոյելու, ձախուար  
անպարարութեամբ կը վերադառնան իրենց սրովոյնը, դաւարուելով փարսցաւէջ:

Եւ Տիրան Աճէմեան, սր կը բաժնուի մենէ՝ քանի մը շարքիչ, կազմեց ժողովա-  
ծոյ մը, փարիզահայ մասնագիտներէն: Որ մը, կէսօրէ առաջ, Բարսեան գրաստանը եւ  
օր մըն ուլ, կէսօրէ յետոյ, Պարսամեան գրաստանը վերածեց աշխատանոցի: Ու թանգարան  
մասն Պարսամեան Պիլատի, Բարսեան Հրանդ, Գույումեան Մեարտը, Նարդուի Եւալը, Մե-  
հաւմեան Աւետիս, Խանէպէնեան Արշալիք, Փոլաթեան Կարօ, Թօփալեան Բեդուհ, Մե-  
լիքեան Վարդաշապի, Աճէմեան Գեղամ, Տ. Արքէ քահանայ եւ Զոպանեան Արշակ:

Երգիծանքը թէեւ իր սրաթուրթեան ամենակարողութեամբ կը մտնէ մարդուն մէ-  
ջին մէջը, աղբիւրը դուրս թափելու առիճան, սակայն, կը խնայէ դէմքին: Ծաղրանկա-  
րը, առաւելադէս, կը հարուածէ դուրսը, մասնագրագէտ անինոյ ըլլալով մարդկային  
դէմքին տղիւթեան հանդէպ: Իր առաւել անդթութիւնը տկամայ է: Ծաղրանկարչութիւ-  
նը, բոլոր հրեշտակները տապալած, կը ճանկէ ճիւղային կամ ճոնճին մէջ անդեղ մտնէ  
ու կը նահատակէ դաշն, պատանքելով թուղթիւ վրայ: Վա՛յ անոնց, որ երկար բան մը  
ունին (բիթ, ականջ), կամ շատ պզտիկ բան մը (աչք, ճակատ) կամ շատ հասա բան մը  
(չրթուիք, մորթ): Մէկ խօսքով՝ խուսափել չկայ հարուածէն:

Ծաղրանկարչութիւնը ստատիստիկ սարք ու պայծառ դիմանկարչութիւնն է: Կ'արժէ  
որ ամէն մարդ անեն ինքզինքը, ստատիստիկ աչքով: Մարդուս սեփական աչքը կը ստեն:  
Մարդկային մեքենաներն անգամ մասնակից են ստատիստիկեան: Քաջութիւնն ու անկեղ-  
ծութիւնը ստատիստիկ տղրանքներն են: Բայ հոգիով մեղանչելը դժուարին առաքինութիւն  
է. դժուարին՝ սրբութեան չափ:

Ինչքան անպատեհութիւններու առաջը պիտի ստնուած ըլլային, եթէ մարդիկ ի-  
րենց ծաղրանկարը կախէին, իրենց սենեակին պատէն, նայելով այդ պատկերին եւ թոյլ  
տալով որ բոլորը դիտեն: Հրաշալի բան պիտի չըլլա՞ր, եթէ ամէն մարդ իր աւլովը ունե-  
նոր, ծաղրանկարներու ալովմը, փոխանակ ունենալու լուսանկարներու առաւել կամ նուազ  
խաբուսիկ հաւաքածոն: Զմայիլի բան մը պիտի չըլլա՞ր, եթէ ամուսնութեան թեկնածու-  
ները, ինչպէս նաեւ սիրահարները, փոխանակէին իրենց ծաղրանկարները:

Մարդիկ կը դժուարանան ինքզինքին ճանչնալ ծաղրանկարին մէջ: Գը վարժուին  
սակայն, երբ մա'նուանոց բարեկամները կը վաւերացնեն նմանութիւնը:

Ծաղրանկարը արուեստն է չափազանցութեան մը, որ ամէնուն չափը կու տայ: Թը  
չափազանցութիւնը միջոց է եւ ոչ նպատակ: Իր չափազանցութիւնը թախչ մըն է, ընդդրի-  
լու համար ենթակային սիրութեան կենսական տարածութիւնը ու մէջէն դրաւելու համար  
միջնարեւը: Ստատիստիկ յարձակումն է սն, օդային, գլխիւայր, յաղթահարող, շանթա-  
յին: Իւ մարդու մը իրական պատկերը իր ծաղրանկարն է:

Տիրան Աճէմեան, այս լսարի, խորադէտ, այս անուշ ու սաք արուեստագէտը, այս  
հրեշտակագետը ծաղրանկարչութեան տաղանդաւոր ստանանն է:

Իսկ մենք իր գահերը եւ հիացողները:

ՆԵՍԵ ՊԵՏԻԿՍՅԱՆ

Փարիզ



Մեր ուրերարդ քիւով պզտիկ ծանօթութիւն մը տը-  
լած էինք «Մատեն սղբերգութեան» հատարին 95 գլուխ-  
ներէն *բառասուներկուսը* քարզմանարար ռուս ընթերցողին  
ներկայացնող այն շքեղ գործիւն մասին, որ լոյս տեսաւ  
անգեալ տարի, «Սովետական գրող» կրտսարակչատան  
կողմէ:

Ինչպէս նշած էինք, խմբագիրները ռուսերէն քարգ-  
մանութեան համալիպակաց էջին տուած էին նաեւ անոր  
բնագիրը, գրաբար, որ Երուսաղէմի կրտսարակութեան  
(1936) նետ քաղաւտած՝ կը բովանդակէր անագին քիւով  
տարբերակներ:

Հետաքրքրութեան համար ու նաեւ մշտրտութեան ի  
խնդիր տոտրի կը ներկայացնենք մեր կտտարած քաղա-  
տական արդիւնէին կարեւոր տոկոսը:

Տարբերակներուն երկուէին ալ մէջ կամոզիչ նշոտ-  
քիւններ կան, բայց ինչպէս շուտով պիտի նկատէ ընթեր-  
ցողը, ռուսերէնի ցիմաց գրաբար բնագիրը կրտսարակու-  
րեան պատրաստած Ա. Ղազիմեանի եւ Պ. Խաչատրեանի  
վերամուամները կտտարուտմ են շատ աւելի մեծ բծա-  
խընդրութեամբ եւ աւելի մօտ են լեզուական քէ իմտտա-  
յին տրամարանութեան:

ԲԱՆ Ա.

### ԶԵՐԱՎԱՑՈՒՄԻՆ-ՎԵՐԱՎԱՑՈՒՄԻՆ

Քան զձեռին նորին վերակացումն անդ ուրեմն երբեմն

Երուսաղէմի հրտտարակութիւն, էջ 14

Քան զձեռին նորին վերակացումն անդ ուրեմն երբեմն

Երեւանի հրտտարակութիւն, էջ 32

ԲԱՆ Թ.

ՆԱԽԱՏՈՂԱՑ-ՆԿԱՏՈՂԱՑ

Ծաղր տեսողաց եւ նշանակութիւնք նախատողաց :	էջ 62
Ծաղր տեսողաց եւ նշանակութիւնք նկատողաց :	էջ 66

ԱԽՈՐԺԵԼԻՍ-ԱՆԱԽՈՐԺԵԼԻՍ

Ատելիս եւ ախորժելիս հաստոյին գրեց Աստուծոյ :	էջ 62
Ատելիս եւ ախորժելիս հաստոյին գրեց աստուծոյ :	էջ 66

ԲԱՆ ԻԳ

ՏԱՐԱԾԵՄ-ՏԱՐԱԾԱՆԵՄ

Բաղմախտանդս կրիցս կարեաց , զոր հանդէպ քո տարածեմ .	էջ 144
Բաղմախտանդ կրիցս կարեաց , զոր հանդէպ քո տարածանեմ .	էջ 80

ԱՍԱՑԵԱԼ-ՍՏԱՑԵԱԼ

Համայնդ յամենայնում , ամենայնիւ ստացեալ քեզ փառս :	էջ 150
Համայնդ յամենայնում , ամենայնիւ ստացեալ քեզ փառս :	էջ 86

ԲԱՆ ԻԳ

ՊԱՐԾԱՆԱՅՆ-ՊԱՆԾԱՆԱՅՆ

Պարձանացն նշոյլ ամենեւին ինձ շիջաւ .	էջ 153
Պանձանացն նշոյլ ամենեւին ինձ շիջաւ .	էջ 90

ԲԱՆ ԼԶ

ՓՐԿԵԼՈՑՆ-ՓՔԿԵՑԵԼՈՑՆ

Մնկորուստ եւ անվնասելի բնոյ փրկեցելոցն հաղորդեսցես :	էջ 262
Անկորուստ եւ անվնասելի բնոյ փրկեցելոցն հաղորդեսցես :	էջ 206

## ՀԱՆԻՈՅՆ-ՀԱՆՈՅՆ

- Ձուրացողացն մոլեղներաց, ըստ հին հարուածոց հանոյն Մովսրու՝  
էջ 262
- Ձուրացողացն մոլեղներաց, ըստ հին հարուածոց հանոյն Մովսրու՝  
էջ 206

## ԲԱՆ ԼԸ

## ԿԵՆԱԳՈՐԾԵԼ-ԿԵՆՍԱԳՈՐԾԵԼ

- Մխիթարեւ, բժշկեւ, քաւեւ եւ կենսագործեւ:  
էջ 273
- Մխիթարեւ, բժշկեւ, քաւեւ եւ կենսագործեւ:  
էջ 212

## ԲԱՆ ԽԵ

## ԶՈՒՐԱԽՈՒԹԻԻՆ-ԶՈՒՐԱՑՈՒԹԻԻՆ

- Իբր զուրախութիւն ուխտին, որ առ աէրն,  
էջ 293
- Իբր զուրացութիւնն ուխտին, որ առ աէրն,  
էջ 242

## ՊԱՏՄԵԱԼ-ՊԱՏՄԵԼ

- Վերտին պատմեալ աստանոր մեծաւ հեծութեամբ,  
էջ 295
- Վերտին պատմեւ աստանոր մեծաւ հեծութեամբ՝  
էջ 244

## ՏԵՆՉՈՒԹԻԻՆ-ՏԵՍՉՈՒԹԻԻՆ

- Ձնախաղաչիցն տենչութիւնն,  
էջ 297
- Ձնախաղաչիցն տենչութիւնն,  
էջ 248

## ՏԱԺԱՆԵՑԵԼՈՅՍ-ՏԱՐԺԱՆԵՑԵԼՈՅՍ

- Կչոխ տարացոյց տաժանեցելոյս,  
էջ 298
- Կչոխ տարացոյց տարժանեցելոյս,  
էջ 250

ԲՐԻ ԽՁ

... — ՊԱՏԿԵՐ ԵՒ ՎԱՍՆ Ո՞ՅՐ

Թէ յո՞վ եւ ո՞յր պոյացայ :

էջ 301

Թէ յո՞վ եւ յո՞յր պատկեր եւ վասն ո՞յր պոյացայ :

էջ 252

ԶԱՆՏԵՍՈՒԹԻՒՆ-ԶՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Զգործնականացն տնօրինել զանտեսութիւն ,

էջ 302

Զգործնականացն տնօրինել զանտեսութիւն ,

էջ 254

ՄԱՐՄՆՈՅԳ-ՄԱՐԳՈՅԳ

Մարմնոյդ քում սենեկի զգոյականի ,

էջ 304

Մարդոյդ քում սենեկի զգոյականի ,

էջ 256

ԺԱՆԳԻՑ-ԺԱՆԳԻՑ

Ընդե՞ր գտանդապդ սաից սրբութիւն ճանապարհան ժանդից աղտեղեր ,

էջ 305

Ընդե՞ր գտանդապդ սաից սրբութիւն ճանապարհան ժանդից աղտեղեր ,

էջ 258

ԲԱՆ ԽԸ

— ԿԵՆԱՑ... —

Ի չնորհ պարզեաց կենաց քոյ սպաւինեալ ,

էջ 313

Ի չնորհ պարզեաց քոյ սպաւինեալ .

էջ 262

Ի ԲԱՐԻ-ԲԱՐԻ

Մի խողառ պախարակեացի , ալ յիշեացի ալրն այն ի բարի ,

էջ 321

Մի խողառ պախարակեացի , ալ յիշեացի ալրն այն բարի ,

էջ 276

... — ՍԿԶԲԱՆԴ

Ընդ սկզբնաւորիդ սկզբանց՝

էջ 325

Ընդ սկզբանդ եւ սկզբնաւորիդ սկզբանց՝

էջ 284

## ԲԱՆ ԽԹ

## ԱՐԳԱՐԱՅՈՅՑ-ԱՐԳԱՐԱՅԱՅՑ

Արգարացայ յանուն քո, հօր,

էջ 331

Արգարացայ յանուն քո, հօր,

էջ 290

## ԲԱՆ Ծ

## ՏԱԳՆԱՊԱՅ-ՍՏԴՏԱՆԱՅ

Եւ սաղնապոյ անձին՝ քաւութիւն:

էջ 333

Եւ սաղանոյ անձին՝ քաւութիւն:

էջ 294

## ԲԱՆ ԾԱ

## ...ԱՌ

Եւ արդ, երկրածին ոք պապապայ,

էջ 340

Եւ արդ, առ երկրածին ոք պապապայ,

էջ 304

## ԵՐԿՆԱԻՈՐ-ԵՐԿՐԱԻՈՐ

Առ հո՞յրն իմ երկնաւոր,

էջ 341

Առ հո՞յրն իմ երկրաւոր,

էջ 306

## ՇԱԻԻՂ-ՇԱՌԱԻԻՂ

Եթէ վրիպիմք՝ շաւիղ զիւրութեան ուղղես,

էջ 342

Եթէ վրիպիմք՝ շոտաւիղ զիւրութեան ուղղես,

էջ 306

## ԲԱՆ ԾԳ

## ՀԵԾՈՒԹԵԱՆ-ՄԵԾՈՒԹԵԱՆ

Որ հնչումն է առ քեզ հեծութեան ձայնի երկար պոչերոյ:

էջ 357

Որ հնչումն է առ քեզ մեծութեան ձայնի երկար պոչերոյ:

էջ 328



ԲԱՆ ԾԳ

ԻՆՁ ԱՌ ՔԵԶ-ԱՌ ՔԵԶ ԻՆՁ

Եւ հանդերձեսցես դասնալ ինձ առ քեզ կրկին բերկրութեամբ, էջ 363

Եւ հանդերձեսցես դասնալ առ քեզ ինձ կրկին բերկրութեամբ, էջ 336

ԳՈՐՈՎ, ԵՍԼՍ-ԳՍՐՈՎ, ԵՍԼՍ

Ոչ պանծամ դարսվեալս, էջ 363

Ոչ պանծամ դարսվեալս, էջ 338

ԴԱԺԱՆԱՀՈՍ-ԴԱԺԱՆԱՀՈՏ

Դաժանահոս սկախառն մամտարմատ խառնախախ, էջ 365

Դաժանահոս սկախառն մամտարմատ խառնախախ, էջ 342

ԲԱՆ ԾԵ

ԶՈՔ ՀԱՄԵՄԱՏ-ՀԱՄԵՄԱՏ ԶՈՔ

Ոչ դարի գոք համեմատ ինձ պարտաւոր, էջ 367

Ոչ դարի համեմատ գոք ինձ պարտաւոր, էջ 344

ԲԱՆ ԾԸ

ՈՂՈՐՄԵԱՅ-ՈՂՈՐՄԵԱ՛

Արդ, սղորմեաց ինձ, տէր բարեգութ, էջ 385

Արդ, սղորմեա՛ ինձ, տէր բարեգութ, էջ 362

ԲԱՆ Կ

ԵՒ ՍԻՐՏ ԻՄ-ԵՒ ՍԻՐՏՍ

Թէ բերան իմ պատմեացէ զիմաստութիւն եւ սիրտ իմ զհանճար: էջ 401

Թէ բերան իմ պատմեացէ զիմաստութիւն, եւ սիրտս՝ զհանճար: էջ 380

ԲԱՆ ՀԱ

ՄՏԱՆԵՄ-ՄՏԵՄ

Մտանեմ ի բոյնն աղաւնի, եւ անասուս աղաւ ելանեմ, էջ 478

Մտեմ ի բոյնն աղաւնի, եւ անասուս աղաւ ելանեմ, էջ 394

## ԵԻ-Ի

Ընդ յանդիման լինելն՝ եւ թիկունս դարձուցանեմ , 52 479

Ընդ յանդիման լինելն՝ ի թիկունս դարձուցանեմ : 52 394

## Ի ՎԱՅՐ-ՎԱՅՐ

Ի բարձրադոյն իմաստիցն ի վայր իջեալ եւ ինքն դտանիմ : 52 479

Ի բարձրադոյն իմաստիցն վայր իջեալ եւ ինքն դտանիմ : 52 394

## ՆԻԻԹԵԱԼ-ՆԻԻԹՈՅ

Ձրտիւս նիւթեալ գեհնելն : 52 481

Ձրտիւս նիւթոյ գեհնելն : 52 398

## ԲԱՆ ՁԲ

## ՊՃՆԵԼՈՅՆ-ՊՃՆԵՑԵԼՈՅՆ

Լուսադարձառ թաղիւ պճնեցրցն , 52 569

Լուսադարձառ թաղիւ պճնեցերցն , 52 414

## ՄԱՐՏՈՒՑԵԱԼ-ՄՍՏՈՒՑԵԱԼ

Մարտուցեալ ընդ տարր գոյից ամենայն նիւթից , 52 570

Մատուցեալ ընդ տարր գոյից ամենայն նիւթից , 52 414

## ԱՅԼ ԱՆԼՈՒԵԼԻ-ՈՁ ԱՆԼՈՒԵԼԻ

Այլ անլուելի գոհարանութիւնք : 52 574

Ոչ անլուելի գոհարանութիւնք : 52 420

## ԲԱՆ ՂԵ

## ՄԵՌԱՆԵԼ-ՄԵՌԱՆԵԼ

Ձի թէ յանձն առեր մեռանել վասն իմ , 52 699

Ձի եթէ յանձն առեր մեռանիլ վասն իմ , 52 426

## « Բ Ա Գ Ի Ն »

«Ֆողին»ի խմբագրութիւնը որոշած էր աշնան մեր քիւերէն մէկը ամբողջութեամբ նուիրել Սիամանթոյի, Վ. Թէէէեանի եւ Զապէլ Եսայեանի ծննդեան 100ամեակներուն եւ, յարգանքի երկրորդ տուրբ մը բնծայելու համար սնունց՝ միաժամանակ կատարած էր դաստիարակական նախապատրաստական աշխատանքներ, բայց վերջին կրօնիներուն հետեւանալով ամժամարաչ յետաճգեցիկ այդ ձեռնարկներէն քլ' մէկը եւ քէ միւսը :

«Ֆողին» այդ պարագը պիտի կատարէ սուելի բարեհապատ պայմաններու մէջ :



### ՔԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄՆԷ

Մեծանուն գրագէտին 70ամեակին առիթով միջազգային,  
հայրենի եւ սփիւռքահայ մամուլի էջերէն կազմուած

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒԻԼԵԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՀԵՏ

ԱՆՈՒՆ ՀԱՏՈՐԸ

300 էջ  
13 հանդիպում  
13 լուսանկար  
13 վկայութիւն

Խմբագիր՝ ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

ԼԻՏԵՐԱԿԱՆ	50 Լ. ՈՍՏՈՒ
ԱՐՏԱԿԱՆ	27 ՏՈՒՄ
ՀԱՏԱԿԱՆ	5 Լ. ՈՍՏՈՒ

پاکین  
 مجلہ شہری، ادبیہ و فنیہ علمیہ  
 مدیر المسؤل  
 السيد ارين كارنيك قزاقچيان

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն  
 ԱՍՏՈՒՄ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
 ԵՒ ԱՐՏԱԿԱՆ

ԵՍՏՈՒՄ  
 Գ. ՈՍՏՈՒՄ

Հեռագրային՝ 296898